

Հավելված  
ՀՀ կառավարության 2012 թ.  
դեկտեմբերի 20-ի նիստի N 51  
արձանագրային որոշման



## Հաշվետվություն

**<<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին>> ՄԱԿ-ի  
կոնվենցիայի իրականացման վերաբերյալ**

**Հայաստանի Հանրապետություն**

2012 թ.

## **Բովանդակություն**

### **Ներածություն**

#### **Մաս I. Ընդհանուր դրույթներ**

Հոդված 1 – Նպատակ

Հոդված 2 – Սահմանումներ

Հոդված 3 -Ընդհանուր սկզբունքներ

Հոդված 4 -Ընդհանուր պարտավորություններ

#### **Մաս II. Հատուկ իրավունքներ**

Հոդված 5 – Հավասարարություն և խտրականության բացառում

Հոդված 8 – Իրազեկվածության բարձրացում

Հոդված 9 – Մատչելիություն

Հոդված 10 – Կյանքի իրավունք

Հոդված 11–Ռիսկային և մարդասիրական ճգնաժամի իրավիճակներ

Հոդված 12 – Հավասար ճանաչում օրենքի առաջ

Հոդված 13 – Արդարադատության մատչելիություն

Հոդված 14 - Անձի ազատությունը և ապահովությունը

Հոդված 15 – Ազատություն կտտանքներից կամ դաժան, անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքից կամ պատժից

Հոդված 16 – Շահագործումից, բռնությունից և չարաշահումներից ազատ լինելը

Հոդված 17 – Մարդու ամբողջականության պաշտպանությունը

Հոդված 18 - Տեղաշարժվելու ազատություն և ազգություն

Հոդված 19 – Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունք

Հոդված 20 - Անձնական շարժունակություն

Հոդված 21 – Արտահայտման և կարծիքի ազատություն և տեղեկատվության մատչելիություն

Հոդված 22 - Հարգանք անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ

Հոդված 23 – Հարգանք տան և ընտանիքի նկատմամբ

Հոդված 24 - Կրթություն

Հոդված 25 - Առողջություն

Հոդված 26 – Բուժում և վերականգնում

Հոդված 27 – Աշխատանք և զբաղվածություն

Հոդված 28 – Համապատասխան կյանքի չափանիշներ և սոցիալական պաշտպանություն

Հոդված 29 – Մասնակցություն քաղաքական ու հասարակական կյանքին

Հոդված 30 – Մասնակցություն մշակութային կյանքին, սպորտային և ազատ ժամանակի կազմակերպմանն ուղղված այլ միջոցառումներին

#### **Մաս III. Հաշմանդամություն ունեցող կանայք և երեխաներ**

Հոդված 6 – Հաշմանդամ կանայք

Հոդված 7 – Հաշմանդամ երեխաներ

#### **Մաս IV. Հատուկ պարտականություններ**

Հոդված 31 – Վիճակագրություն և տվյալների հավաքագրում

Հոդված 32 – Միջազգային համագործակցություն

Հոդված 33 – Իրականացում և մոնիտորինգ ազգային մակարդակում

## Ներածություն

1. Համաձայն ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեին է /այսուհետ Կոմիտե/ ներկայացնում սույն համապարփակ սկզբնական զեկույցը՝ կոնվենցիայից բխող իր ստանձնանձ պարտավորությունների կատարման միջոցառումների մասին, ինչպես նաև այն առաջընթացի մասին, որն արձանագրվել է սույն կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից անցած 2 տարվա ընթացքում:
2. Սույն զեկույցը կազմվել է համաձայն Կոմիտեի սահմանած ուղեցույցների և առաջարկությունների:
3. 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ ՀՀ/ վավերացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ 2010 թվականի հոկտեմբերի 22-ին: Ինչպես և այլ միջազգային պայմանագրերի դեպքում, սույն կոնվենցիան ևս, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն, վավերացնելուց կամ հաստատվելուց հետո դառնում է ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Սահմանադրության նույն հոդվածի համաձայն, եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:
4. ՀՀ-ն դեռևս չի վավերացրել Կամբոջի արձանագրությունը, սակայն նրա վավերացումը մնում է պետական քաղաքականության օրակարգում և այն կվավերացվի առաջիկա տարիներին՝ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքների լիակատար իրացման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների և պայմանների էական բարելավումից հետո:
5. Սույն զեկույցը նախապատրաստվել է միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից, որում ընդգրկվել են հետևյալ մարմինների ներկայացուցիչները.
  - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն /այսուհետ՝ ԱՍՀՆ/
  - ՀՀ արտաքին գործերի նախարարություն
  - ՀՀ արդարադատության նախարարություն
  - ՀՀ առողջապահության նախարարություն
  - ՀՀ կրթության և գիտության նախարարություն
  - ՀՀ մշակույթի նախարարություն
  - ՀՀ քաղաքաշինության նախարարություն
  - ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
  - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
  - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
  - ՀՀ ոստիկանություն
  - ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
  - Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերի ազգային հանձնաժողով

6. Զեկույցի նախապատրաստման աշխատանքները համակարգվել են ՀՀ ԱՍՀՆ կողմից, որը հանդիսանում է ՀՀ-ում Կոնվենցիայի իրականացումը համակարգող գերատեսչություն: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները և մի շարք շահագրգիռ հասարակական կազմակերպություններ հնարավորություն են ունեցել առաջարկություններ ներկայացնել զեկույցի կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ:
7. Զեկույցը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից՝ 2012 թվականի դեկտեմբերի -----ին:
8. Զեկույցը ներկայացնում է ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակի մասին ընդգրկուն տեղեկատվությունը և երկրի պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու սկզբունքները՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և նրանց սոցիալական ներառմանը, ինչպես նաև ամփոփում է ձեռնարկած միջոցառումներն ու ձեռք բերած արդյունքները:
9. ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան ՀՀ կառավարության համար հանդիսանում է հիմնարար փաստաթուղթ, որի հիման վրա մշակվում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության պետական ռազմավարությունը, այդ թվում՝ միջնաժամկետ և տարեկան ծրագրերը:
10. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության պետական քաղաքականությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, իրավական այլ ակտերի և Ազգային Ժողովում վավերացված միջազգային համաձայնագրերի և կոնվենցիաների վրա:
11. 1993թ. մայիսի 24-ին, ՀՀ-ը ԱՊՀ պետությունների մեջ առաջիններից մեկն էր, որն ընդունեց հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող օրենք: 1993թ. ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում առաջին անգամ օրենսդրորեն տրվեց «հաշմանդամ» հասկացության սահմանումը, ըստ որի՝ հաշմանդամ են համարվում այն քաղաքացիները, ովքեր մտավոր կամ ֆիզիկական անլիարժեքությամբ պայմանավորված կենսագործունեության սահմանափակումների պատճառով, սոցիալական օգնության կամ պաշտպանության կարիք են զգում:
12. Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ տարվող քաղաքականությունն անցել է երկար ճանապարհ՝ հատուկ հաստատություններում հաշմանդամների խնամքից մինչև նրանց կրթության և վերականգնման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հավասար հնարավորությունների ապահովումը: Վերջին տասնամյակում ՀՀ-ում փոխվել են հաշմանդամության սոցիալական պաշտպանության հիմնախնդրի լուծման գաղափարախոսությունը և մոտեցումները՝ հաշմանդամների վերականգնման բժշկական մոդելը փոխարինվել է սոցիալական մոդելով, ինչը ենթադրում է տարբեր սոցիալական ինստիտուտների համապարփակ, բազմակողմանի

ներգրավվածությունը հաշմանդամության հետ առնչվող տնտեսական, սոցիալական, հոգեբանական հիմնախնդիրների լուծմանը:

13. Հաշմանդամության սոցիալական մոդելով փոխվում են մոտեցումները <հաշմանդամ> հասկացության նկատմամբ: Փոխվում են անձին հաշմանդամ ճանաչելու հիմքերն ու չափանիշները:
14. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծման և իրավահարաբերությունների կարգավորման օրենսդրական համակարգի հիմքը ՀՀ-ում կազմում են հետևյալ իրավական ակտերը.
  - ՀՀ Սահմանադրություն
  - <Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին> կոնվենցիա - 2006 թ. /ՄԱԿ/
  - <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենք- 1993թ.
  - <Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին> ՀՀ օրենք- 1996թ.
  - <Սոցիալական աջակցության մասին> ՀՀ օրենք (24 հոկտեմբերի 2005թ.) - ՀՀ ԱԺ
  - <Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին> ՀՀ օրենք- 2005թ.
  - ՀՀ աշխատանքային օրենսգիրք-2005թ.
  - <Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենք - 2005թ.
  - <Պետական կենսաթոշակների մասին> ՀՀ օրենք – 2010թ.
  - <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենք - 1998թ.
  - ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարություն> թիվ 44 արձանագրային որոշում
  - ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 8-ի <Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին> թիվ 396 որոշում
  - ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 13-ի <Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները հաստատելու մասին> թիվ 780-Ն որոշում
  - ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի <Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին> թիվ 318-Ն որոշում
  - ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 23-ի <Տուժած անձանց արտադրական խեղման, մասնագիտական հիվանդության, ռազմաճակատում գտնվելու, զինվորական ծառայության և այլ հանգամանքների հետ մահվան

պատճառական կապը որոշելու կարգը հաստատելու մասին» թիվ 1456-Ն որոշում

- ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 7-ի «Ազատագրկման վայրում գտնվող ազատագրկվածին կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նրան հաշմանդամ ճանաչելու կարգը հաստատելու մասին» թիվ 1457-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 28-ի «Հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրն ու դրա իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1067-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 13-ի «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» թիվ 392-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 11-ի «Աշխատանքային պարտականությունների հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջությանը հասցված այլ վնասի դեպքում մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանի սահմանման չափանիշները հաստատելու մասին» թիվ 619-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 22-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1369-Ն որոշում
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» հռչակագիր – 2006թ. դեկտեմբերի 13- ՄԱԿ
- ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 453-Ն որոշում
- ՀՀ վարչապետի 2008թ. փետրվարի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2006թ. հոկտեմբերի 10-ի թիվ 747-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 98-Ն որոշում
- «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրերը և այդ ծրագրերով նախատեսված միջոցառումների ցանկերին հավանություն տալու մասին» ՀՀ

կառավարության որոշումներ (2006 թվականից ընդունվում են յուրաքանչյուր տարի):

15. Ներկայումս շրջանառության մեջ է գտնվում <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին> ՀՀ օրենքի նախագիծը /այսուհետ՝ նոր օրենքի նախագիծ/, որը կարգավորում է հաշմանդամության սահմանման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, նրանց կրթության, աշխատանքային գործունեության, առողջության պահպանման, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:
16. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծումները իրականացվում են ռազմավարական և նպատակային ծրագրերի շրջանակներում, որոնք ուղղված են նրանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը և պետության կողմից երաշխավորված իրավունքների և ազատությունների իրացմանը:
17. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորություններ ապահովելու, նրանց հասարակությունում արդյունավետ ինտեգրելու համար ՀՀ-ում կարևորվում են սոցիալական պաշտպանության ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները և դրանց լուծման համար համապատասխան քաղաքականության մշակումը: Հաշմանդամության ոլորտի ռազմավարության հիմնական գաղափարը հաշմանդամների սոցիալական պաշտպանության մոդելից անցում կատարելն է սոցիալական ներառման մոդելին:

### **Ընդհանուր տվյալներ**

18. 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում հաշվառված է 182 379 հաշմանդամ. որից 84 981 (46.6 %) կանայք են:

Ըստ խմբերի գրանցված են՝

- առաջին խմբի 11 057 հաշմանդամ, որից կանայք՝ 4 542 հոգի (41,1%), ինչը կազմում է հաշմանդամ կանանց 5.3%-ը,
- երկրորդ խմբի 86 402 հաշմանդամ, որից կանայք՝ 38 605 հոգի (44,7%), ինչը կազմում է հաշմանդամ կանանց 45.4%-ը,
- երրորդ խմբի 76 764 հաշմանդամ, որից կանայք՝ 39 263 հոգի (51.1%), ինչը կազմում է հաշմանդամ կանանց 46.2%-ը,
- հաշմանդամ երեխաներ 8 156, որից աղջիկ երեխաներ՝ 2 571 հոգի (31.5%), ինչը կազմում է հաշմանդամ կանանց 3,0%-ը:



## **Մաս I. Ընդհանուր դրույթներ**

### **Հոդված 1. Նպատակ**

19. Կոնվենցիայի նպատակն է սատարել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար և հավասար իրացումը, ինչպես նաև հարգալից վերաբերմունքը նրանց արժանապատվության նկատմամբ: Վերը նշվածի ապահովումն ընթանում է ՀՀ ԱԺ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխան, նոր իրավական ակտերի ընդունմամբ և իրացմամբ, նպատակային ծրագրերի և այլ միջոցառումների՝ այդ թվում կազմակերպական բնույթի միջոցառումների իրականացմամբ:
20. <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի (ընդունվել է 1993թ.) նախաբանում նշվում է. <Սույն օրենքը սահմանում է ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները>: Նույն օրենքի 3-րդ հոդվածը ամրագրում է. <հաշմանդամներն ունեն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված նույն իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես այլ անձինք>: Այս դրույթով ըստ էության ապահովվում է խտրականության բացառումը իրավական մակարդակում:
21. ՀՀ գործող օրենսդրությամբ չկա սահմանված <հաշմանդամություն> հասկացությունը, սակայն <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքով սահմանված է <հաշմանդամ անձ> հասկացությունը՝ <Հաշմանդամ են համարվում այն քաղաքացիները, որոնք մտավոր կամ ֆիզիկական անլիարժեքությանը պայմանավորված կենսագործության սահմանափակումների պատճառով սոցիալական օգնության և պաշտպանության կարիք են զգում>: Այս սահմանումը որոշակիորեն տարբերվում է Կոնվենցիայի սահմանումից՝ համաձայն որի՝ հաշմանդամություն ունեցող անձն ունի ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական երկարաժամկետ կամ կայուն սահմանափակումներ, որոնք, բխվելով միջավայրային արգելքներին, խոչնդոտում են նրա՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, լիարժեք և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքին:
22. Կոնվենցիայի ընդունման փուլում և ընդունումից հետո՝ 2006-2007 թվականներին, ՀՀ-ում իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության ու խրախուսման ապահովման ուղղությամբ ՀՀ օրենսդրական դաշտի և միջազգային իրավական նորմերի համապատասխանության վերլուծություն: Մասնավորապես՝ ուսումնասիրվել ու բացահայտվել են

<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին՝ ՄԱԿ-ի կոնվենցիայում պարունակվող սկզբունքների կիրառելիության նպատակով անհրաժեշտ իրավական-տնտեսական և տեխնիկական հիմքերի, դրանց համեմատության, համապատասխանեցման միջոցով միջազգային պրակտիկայից բխող իրավական հիմքերի ձևավորման և աստիճանաբար դրանց նպատակային օգտագործման հարցերը:

23. Այդ աշխատանքների կարևորագույն նպատակն էր հաշմանդամությունը դիտարկել ոչ թե բժշկական, այլ սոցիալական մոդելի հիմքի վրա: Վերլուծությունը կատարվել է ըստ հետևյալ դասակարգման.

- ընդունված միջազգային նորմերը
- ՀՀ օրենքներում դրանց արտահայտվածությունը
- վերլուծություն՝ հակասությունների կամ դեռևս չսահմանված դրույթների շուրջ
- առաջարկություններ՝ միջազգային դրույթների սահմանման, համապատասխանության կամ սկզբունքների վերանայման վերաբերյալ:

Վերլուծությունն ուղարկվել է բոլոր նախարարությունների, գերատեսչությունների ղեկավարներին, ԱԺ պատգամավորներին:

24. Կոնվենցիայի ընդունումից հետո ՀՀ ԱՍՀՆ-ն սկսեց աշխատանքներ <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին> նոր օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի նախագիծ) մշակման ուղղությամբ, որում <Հաշմանդամություն ունեցող անձ> հասկացությունն արդեն սահմանված է հետևյալ կերպ. անձ, ով ունի ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական ոլորտների երկարաժամկետ կամ կայուն սահմանափակումներ, որոնք, բախվելով տարբեր միջավայրային արգելքներին, խոչնդոտում են նրա՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին: Օրենքի նախագիծն անցել է համապատասխան քննարկումներ՝ ՀՀ բոլոր նախարարությունների, գերատեսչությունների, տեղական ու միջազգային հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

25. Օրենքի նախագծում ամրագրված է մեկ հիմնական սկզբունք՝ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի վարելու արժանապատիվ կյանք , լիարժեք և հավասար հիմունքներով մասնակցելու հասարակական կյանքին:

26. Մարդու օրգանիզմի ֆունկցիաների կամ կառուցվածքային խանգարումները սահմանափակում են նրա գործունեությունն ու մասնակցությունը հասարակական կյանքին, եթե շրջակա միջավայրը կառուցելիս հաշվի չեն առնվում նրա կարիքները: Հակառակ պարագայում, այսինքն հավասար հնարավորությունների և մատչելի ֆիզիկական, մշակութային,

վերաբերմունքային և այլ սոցիալական բարենպաստ գործոնների առկայությունը հնարավորինս նվազեցնում է այդ ռիսկը:

27. ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 8-ի թիվ 48 արձանագրային որոշմամբ հաստատվել է <Անձի պահպանված աշխատունակության աստիճանի որոշման հիման վրա հաշմանդամության սահմանման մոդելին անցնելու> հայեցակարգը, համաձայն որի՝ անձին հաշմանդամ ճանաչելիս առաջնահերթությունը տրվում է անձի պահպանված աշխատունակությանը (երեխաների ակտիվության, մասնակցության և հատուկ կրթական կարիքներին), քանի որ աշխատունակությամբ է պայմանավորված հասարակական կյանքին նրա լիարժեք մասնակցությունը և տնտեսական անկախության ապահովումը: Անձի պահպանված աշխատունակությունը գնահատվելու է տոկոսներով: Անձի պահպանված աշխատունակությունով են պայմանավորվելու հաշմանդամության կենսաթոշակների չափերը և սոցիալական աջակցության տեսակները:
28. Անձի պահպանված աշխատունակության հիման վրա հաշմանդամությունը սահմանելիս հաշվի է առնվելու այն հանգամանքը, որ աշխատունակությունը պայմանավորված է ոչ միայն անձի ֆունկցիոնալ կամ կառուցվածքային վիճակով, այլև մասնագիտական, տարիքային, միջավայրի, կրթական և սոցիալական այլ գործոններով: Պահպանված աշխատունակության գնահատումը ենթադրում է նաև աշխատանքային գործունեության մեջ անհատի ակտիվ ներգրավվածության գնահատում: Կարևորվում է անհատի վերականգնումը, զբաղվածության հիմնախնդիրների կարգավորումը:
29. 2011 թվականին ՀՀ ԱՍՀՆ կազմակերպել էր Կոնվենցիայի և օրենքի նախագծի դրույթների լայն քննարկումներ հանրապետության բոլոր մարզերում՝ մարզպետների, մարզպետարանների բոլոր ստորաբաժանումների ղեկավարների, մարզերի բժշկական ու ուսումնական կազմակերպությունների ղեկավարների և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:
30. ՀՀ այլ իրավական ակտերում ևս օգտագործվում է <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> օրենքով սահմանված <հաշմանդամ անձ> հասկացությունը, բացառությամբ՝ հանրակրթության ոլորտի իրավական փաստաթղթերի, ուր կիրառվում է <կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ> հասկացությունը. <անձ, որի ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների>: <Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին> ՀՀ օրենքը (ընդունվել է 2005 թվականին) սահմանում է նաև <Կրթության առանձնահատուկ պայմաններ> հասկացությունը. <կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կրթության և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ

կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, կենսագործունեության միջավայր, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայություններ, առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնարին>:

31. 2011 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը լրամշակեց <Հանրակրթության մասին> ՀՀ օրենքը, համաձայն որի՝ <Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ> հասկացությունն ունի նոր սահմանում. <ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, ում կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմաններ>, իսկ <Կրթության առանձնահատուկ պայմաններ> հասկացությունը սահմանվել է. <անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված կրթական ծրագրերի եւ ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաեւ մանկավարժական, սոցիալական եւ այլ ծառայությունների ամբողջություն>:

## **Հոդված 2. Սահմանումներ**

32. Հաշմանդամության մասին հիմնական հասկացությունների սահմանումները բերված են <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում: Այդ հասկացություններն են՝ <հաշմանդամ>, <կենսագործունեության սահմանափակումներ>, <վերականգնման տեխնիկական միջոցներ և այլ օժանդակ պարագաներ>, <բժշկասոցիալական փորձաքննություն>, <կենսագործունեության միջավայրի մատչելիության ապահովում>, <հաշմանդամների սոցիալական պաշտպանություն>: Կոնվենցիայում ներկայացված <հաղորդակցություն>, <խտրականություն՝ հիմնված հաշմանդամության վրա>, <համապատասխան շտկումներ>, <համընդհանուր դիզայն> և այլ հասկացությունները վերը նշված օրենքում բացակայում են: Առկա տարբերությունը պայմանավորված է այն փաստով, որ օրենքն ընդունվել է 1993թ., իսկ Կոնվենցիան՝ 2006թ. ու կառուցված է ներառական մոդելի սկզբունքների վրա:

33. <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքը ամբողջովին չի լուծում հաշմանդամության սահմանման, սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամների համար մատչելի միջավայրի ձևավորման, հասարակության մեջ նրանց ներառման խնդիրները: Մշակված օրենքի նախագծում արդեն ներառված են հետևյալ նոր հասկացությունները՝

- <սոցիալական ներառում>՝ հաշմանդամություն ունեցող անձի հավասար ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին
- <աշխատունակություն>՝ աշխատանքի բովանդակության, ծավալի և ներկայացվող պահանջներին (կատարման պայմաններին) համապատասխան գործունեության իրականացման կարողություն՝ անձի կենսագործունեության սահմանափակման և միջավայրային գործոնների ազդեցության համատեքստում
- <հաղորդակցություն>՝ սույն օրենքի իմաստով խոսակցական, ժեստերի լեզվով, նշանների և տեքստերի պատկերման, Բրայլի, շոշափողական, ընթեռնելի տառերով տպագրության, ինչպես նաև մատչելի այլ տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ
- <խտրականություն>՝ սույն օրենքի իմաստով հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը հերքումն է այն փաստի, որ հաշմանդամություն ունեցող անձը, մյուսներին հավասար կարող է իրականացնել իր իրավունքները և հիմնարար ազատությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ ոլորտում
- <միջավայր>՝ սոցիալական և մշակութային պայմաններ՝ ներառյալ վերաբերմունք, ինչպես նաև ֆիզիկական շրջապատ, ուր անձն ապրում է, կրթվում, աշխատում, տեղաշարժվում և կազմակերպում իր անձնական կյանքը
- <միջավայրի գործոններ>՝ արտաքին պայմաններ, որոնք դրական կամ բացասական ազդեցություն են ունենում հաշմանդամություն ունեցող անձի կյանքի վրա
- <խելամիտ հարմարեցումներ (շտկումներ)>՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և ուսուցման, աշխատանքի, հաղորդակցման, մշակութային, մարզական գործունեության և այլ մասնակցության ձևերի ապահովմանն ու դրանց կազմակերպմանը նպաստող պայմաններ և հարմարեցումներ, որոնք ստեղծվում են հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձի անհատական կարիքները
- <սոցիալական կազմակերպություն>՝ սոցիալական ուղղվածության կանոնադրական նպատակներ ունեցող իրավաբանական անձ, որը

նպաստում է հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծմանն ու զբաղվածության ապահովմանը,

- <համընդհանուր դիզայն>՝ միջավայրի, ծրագրերի, ապրանքների ու ծառայությունների դիզայն, որն առանց շտկումների և մասնագիտացված դիզայնի անհրաժեշտության, դրանք առավելագույնս օգտագործելի է դարձնում յուրաքանչյուր մարդու համար՝ չբացառելով օժանդակ հարմարանքների կիրառումը հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար
- <սոցիալական պատրոնաժ>՝ հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվող օգնականի, միջնորդի, անձնական ուղեկցողի, ընթերցողի և ժեստերի լեզվի թարգմանչի ծառայություն:

34. Նշված հասկացությունների սահմանումները Կոնվենցիայում ամրագրված անմիջական իմաստով կիրառելու նպատակով նախատեսվում է օրենքով և ենթաօրենսդրական ակտերով համապատասխան մեխանիզմների և գործընթացների ապահովում: Այդ իսկ նպատակով օրենքի նախագծով նախատեսված է բազմաթիվ կարգերի հաստատում << կառավարության կողմից:

### **Հոդված 3. Ընդհանուր սկզբունքներ**

35. Կոնվենցիայում սահմանված <հարգանք արժանապատվության, անձնական անկախության նկատմամբ, ներառյալ սեփական ընտրություն կատարելու ազատությունը և մարդկանց անկախության իրավունքը> սկզբունքն ամրագրված է << Սահմանադրության 14-րդ հոդվածով, որտեղ ասվում է. <Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից>:
36. <Խտրականության բացառում> սկզբունքն ամրագրված է << Սահմանադրության 14.1 հոդվածով, որտեղ ասվում է հետևյալը. <Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է>:
37. Կոնվենցիայով սահմանված՝ <հասարակության կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներառականություն> և <հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատկությունների նկատմամբ և նրանց ընդունումը որպես մարդկային բազմազանության տարր և մարդկության բաղկացուցիչ մաս> սկզբունքներն ընդհանրական իմաստով ամրագրված են << Սահմանադրության

երկրորդ՝ <Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները> գլխում:

38. Կոնվենցիայով սահմանվող հիմնական սկզբունքներն առավել ամբողջականացնելու և հստակեցնելու համար նրանք ներառվել են <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին> ՀՀ օրենքի նախագծում, որով ուղղակի իմաստով սահմանվում են կոնվենցիայում բերված ընդհանուր սկզբունքների իրականացումն ապահովող բոլոր մեխանիզմները և իրավունքի նորմերը:
39. Կոնվենցիայով սահմանված <հնարավորությունների հավասարություն>, <կանանց և տղամարդկանց միջև հավասարություն> սկզբունքներն ամրագրված են ընդհանրական իմաստով ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում: Սկզբունքներն առավել անմիջական ամրագրելու և նրանց իրագործման մեխանիզմների ապահովման համար ՀՀ-ում մշակվել է <Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և հավասար իրավունքների մասին> ՀՀ օրենքի նախագիծը, որը 2012թ. փետրվարին ԱԺ-ում անցել է առաջին ընթերցում և գտնվում է ընդունման փուլում:
40. Կոնվենցիայով սահմանված <հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների և իրենց ինքնությունը պահպանելու նրանց իրավունքի նկատմամբ> սկզբունքն ամրագրված է <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի երրորդ գլխում և <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին> ՀՀ օրենքի նախագծում:
41. Կոնվենցիայի դրույթների գերակայությունը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով, համաձայն որի, եթե ՀՀ օրենքներով սահմանվող սկզբունքները չեն համապատասխանում ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին, ապա գործում են միջազգային պայմանագրերով սահմանվող սկզբունքները:

#### **Հոդված 4. Ընդհանուր պարտավորություններ**

42. Պետությունը երաշխավորում է.

- մյուս քաղաքացիների հետ հավասար հնարավորությունների ստեղծում, հասարակությունում ընթացող տնտեսական, քաղաքական և սոցիալական գործընթացներին հաշմանդամների ակտիվ մասնակցություն
- անհրաժեշտ պայմանների ստեղծում, ինչը հնարավորություն կտա հաշմանդամներին իրենց անհատական հնարավորություններից, կարողություններից և անձնական հետաքրքրություններից ելնելով ապրել լիարժեք կյանքով:

Այս առումով կատարելագործվում է օրենսդրությունը, ընդունվում են նոր սկզբունքներ, ռազմավարական և ծրագրային փաստաթղթեր, իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մշտադիտարկում:

43. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և հիմնախնդիրների լուծման համար <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 5.1 և 5.2 հոդվածներով սահմանվում են ՀՀ կառավարության և ՀՀ ԱՍՀՆ լիազորությունները: Մասնավորապես՝ այդ լիազորություններում ներառվում են.

- հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության մշակումը և իրականացումը,
- հաշմանդամների սոցիալական պաշտպանության նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը,
- հաշմանդամների բժշկասոցիալական փորձաքննության իրականացման և վերականգնման անհատական ծրագրերը կազմելու, վերականգնողական միջոցառումների իրականացման գործընթացները,
- հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների աջակցումը և նրանց հետ համագործակցումը,
- հաշմանդամների սոցիալական պաշտպանության հարցերի վերաբերյալ մեթոդական փաստաթղթերի մշակումը, կենսագործունեության միջավայրի մատչելիությունն ապահովող նորմերի և կանոնների սահմանումը և այլն:

44. <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 5-րդ գլխում սահմանվում են պետության հետևյալ պարտավորությունները՝ բացահայտել և վերացնել բոլոր այն արգելքները, որոնք խոչընդոտում են հաշմանդամների իրավունքների իրացմանը և պահանջմունքների լիարժեք բավարմանը՝ կապված շրջակա միջավայրի, տրանսպորտային միջոցների, տեղեկատվական համակարգերի մատչելիության հետ:

45. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված դրույթներ կան նաև մի շարք ոլորտային օրենքներում: Այսպես, քաղաքաշինության ոլորտը կարգավորող <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքում 2011թ. կատարված փոփոխության արդյունքում, որպես պարտադիր դրույթ, ներառվել է նոր կառուցվող կամ նորոգվող շենքերում թեքահարթակների առկայության պահանջը: <Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին> ՀՀ օրենքում 2010թ. կատարված փոփոխությամբ ավելացվել են դրույթներ հաշմանդամներին անվճար և համաֆինանսավորմամբ բժշկական օգնության ցուցաբերելու մասին: <Կրթության մասին> ՀՀ օրենքում 2011 թ. կատարված փոփոխության արդյունքում մտցվել է ներառական կրթության գաղափարը և կրթության այդ ձևը կարգավորող մի շարք դրույթներ:

46. Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի



միջոցների հաշվին տարբեր ծառայությունների մատուցման եղանակով: ՀՀ կառավարության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության, նրանց իրավունքների իրականացման և տրամադրվող աջակցության ամբողջ պատկերը և վիճակագրությունը հստակ երևում է ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի թիվ 859-Ն որոշմամբ հաստատված «2011 – 2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում (ՄԺԾ)»: Հաշմանդամներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնմանը, նրանց համար հնարավորինս հավասար պայմաններ ապահովելուն ուղղված հիմնական ծառայություններն են՝

- հաշմանդամների պրոթեզավորումը, վերականգնողական պարագաներով ապահովումը և դրանց վերանորոգումը, այդ թվում՝ աչքի պրոթեզավորումը և ձայնաստեղծ սարքերի ձեռքբերումը
- հաշմանդամներին սայլակներով ապահովումը
- հաշմանդամներին լսողական սարքերով և լսողական սարքերի ներդիրներով ապահովումը
- տեսողությունից հաշմանդամ անձանց համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրությունը, «Խոսող գրքերի» ձայնագրությունը և այլն, ինչպես նաև «Արև» համակարգով նրանց ուսուցանումը և համակարգչային տեխնիկայով ապահովումը
- հաշմանդամների հոգեկան առողջության վերականգնումը, բուժումը և բժշկասոցիալական վերականգնումը
- հաշմանդամների մասնագիտական ուսուցման, զբաղվածությունը խթանելուն ուղղված ծրագրերի իրականացումը և այլն:

47. 2010-2012 թվականներին շուրջ 2500 քաղաքացիական և համայնքային ծառայողներ, որոնք աշխատում են սոցիալական պաշտպանության բնագավառում, անցել են պարտադիր վերապատրաստման դասընթացներ, որոնց պարտադիր բաղադրիչ է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, հաշմանդամների հետ վարվելակերպի ու շփումների կազմակերպման, հաշմանդամության բնագավառի այլ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաներ: Այս բաղադրիչը կազմում է նմանատիպ դասընթացների (20-30)%-ը: Բացի դրանից, նույն ժամանակահատվածում ՀՀ ԱԱՀՆ պատվերով հաշմանդամության և տարեցների հիմնախնդիրներով զբաղվող մոտ 600 աշխատակիցներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ անցել են մասնագիտական դասընթաց 40 ժամ ծավալով՝ ամբողջովին նվիրված հաշմանդամների հիմնախնդիրներին: Արդյունքում հաշմանդամների մեծ մասը կստանա ավելի որակյալ և անհատական կարիքների վրա հիմնված ծառայություններ:

48. Հաշմանդամների իրավունքների իրացման և ազատությունների պաշտպանության ապահովման և խթանման նպատակով հանրապետությունում գործում է համապատասխան լիազորություններ ունեցող մարմինների և կազմակերպությունների համակարգ, որի մեջ

իր կարևոր դերակատարումն ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Այսպես, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, համայնքի ղեկավարը իրականացնում է պետության կողմից պատվիրակած պարտադիր լիազորություն կապված <համայնքի տարածքում սոցիալական օգնության ծառայության գործունեության կազմակերպման> հետ և կամավոր լիազորություն՝ կապված <հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման> հետ:

49. Պետությունը կարևորում և անմիջական իրականացման ենթակա է համարում հաշմանդամների կրթության, աշխատանքի, բուժման, վերականգնման, տեղեկատվության ստանալու, հաղորդակցվելու իրավունքները:
50. Հաշմանդամի ազատ տեղաշարժումն ապահովելու հետ կապված խնդիրները, մասնավորապես՝ հասարակական շենքերի և կառույցների հարմարեցումը հաշմանդամների համար, պետության կողմից իրականացվում է որոշակի փուլերով: Այս մասով համապատասխան օրենսդրական դաշտի մշակումն իրականացվել է, սակայն նյութական ռեսուրսների սղության և հստակ մեխանիզմների բացակայության պատճառով նշված շինությունների հարմարեցումը հաշմանդամների համար հեռու է բավարար համարվելուց:
51. Համաձայն <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 27.1 հոդվածի՝ նոր ընդունվող, կամ լրամշակվող յուրաքանչյուր իրավական ակտի նախագիծ անցնում է փորձագիտական քննություն, ինչպես նաև տեղադրվում է համացանցում, որի արդյունքում ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի՝ այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող անձ, կարող է ազատորեն իր կարծիքը հայտնել իրավական ակտի վերաբերյալ, առաջարկել լրացումներ և փոփոխություններ: Հաշմանդամության հիմնախնդիրներին վերաբերվող իրավական ակտերը փորձագիտական գնահատում են անցնում հաշմանդամների հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի կողմից: Սակայն պետք է նշել, որ նպատակային վիճակագրություն չի տարվում հաշմանդամության մասին իրավական ակտերի և քաղաքականության մշակման գործընթացում հաշմանդամ կանանց, երեխաների և աղջիկների մասնակցության, նաև մասնակցություն ունեցող հաշմանդամների գենդերային և տարիքային տվյալների վերաբերյալ:
52. ՀՀ-ում գործող, ինչպես նաև նախագծվող իրավական ակտերով չեն նախատեսվում այնպիսի միջոցառումներ, որոնք առավել կնպաստեն հաշմանդամների իրավունքների իրացմանը, քան նախատեսված է Կոնվենցիայի պահանջներով:
53. Կոնվենցիայի պահանջներն ապահովող իրավական ակտերի դրույթները, ինչպես նաև պետության կողմից հաշմանդամների հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները

հավասարապես տարածվում են ՀՀ ողջ տարածքում, ներառելով ինչպես Երևան քաղաքը, այնպես էլ մարզերը:

54. Խոշորացված համադրական վիճակագրական տվյալները՝ ՀՀ-ում հակախտրական միջոցառումների արդյունավետության և Կոնվենցիայով նախատեսվող հաշմանդամների իրավունքների իրացման հարցում առաջընթացի ապահովման վերաբերյալ (ներառյալ գենդերային և տարիքային կտրվածքը), ամբողջական չեն: Հաշմանդամների իրավունքների իրացման հարցում առաջընթացի ապահովման վերաբերյալ որոշ վիճակագրական տվյալներ ըստ ոլորտների (կրթություն, զբաղվածություն և այլն) բերված են համապատասխան բաժիններում:

## **Մաս II. Հատուկ իրավունքներ**

### **Հոդված 5. Հավասարություն և խտրականության բացառում**

55. Օրենքի առաջ մարդկանց հավասարության սկզբունքը, ինչպես նաև խտրականության բացառումը սահմանվում է ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով, համաձայն որի՝ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

56. Համաձայն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք», իսկ համաձայն 37-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»: Հավասարության պահպանման և խտրականության բացառման դրույթները սահմանվում են նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում, «Նպաստների մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում: Այս օրենքներով սահմանված դրույթները չեն կարող նվազեցնել կամ սահմանափակել սահմանադրությամբ սահմանված պահանջները:

57. Հավասարության և խտրականության բացառման սկզբունքն ամրագրված է «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ներածական մասում. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները»:

58. <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին> ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածում, որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական սկզբունք, ներառված է <հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ խտրականության բացառումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտների մատչելիությունը>:

59. ՀՀ վարչապետի 2008թ. փետրվարի 25-ի որոշմամբ ստեղծվել և գործում է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը, որի գործունեության կարևորագույն նպատակներից է հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը և հաշմանդամության պատճառով խտրականության բացառումը: Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի ստեղծումը, իրավասություններն ու լիազորություններն ամրագրված են օրենքի նախագծում (բերված է օրենքի դաշտ):

60. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը, ինչպես նաև խտրականության բացառմանը նպաստում է նաև 2011թվականից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում առանձնացված հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպանի հաստիքը:

### **Հոդված 8. Իրազեկվածության բարձրացում**

61. Իրազեկվածության բարձրացման սկզբունքը ներառված է ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածում: Որպես <Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիր> սահմանվում է <հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրերի իրականացումը, հաշմանդամների հասարակական կյանքին մասնակցության խթանումը>:

62. Իրազեկվածության մակարդակի բարձրացումը երաշխավորվում է նաև <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 16-րդ՝ <Հաշմանդամների՝ տեղեկություններ ստանալու ազատության ապահովումը> հոդվածով: Համաձայն այդ հոդվածի՝ <Պետությունն ապահովում է հաշմանդամների տեղեկություններ ստանալու ազատությունը>:

Պետության կողմից շարժումների լեզուն ընդունվում է որպես անձնական շփման, ուսման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց:

Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, լսողական միջոցների և խոշոր տառատեսակների մատչելիությունը՝ ներառյալ ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումը:

Մտավոր թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվում է լեզվի մատչելի ըմբռնման ուսուցման համակարգ: Խոսակցական խանգարումներով անձանց տրամադրվում են հաղորդակցման տեխնիկական միջոցներ:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերություններն օրենքով սահմանված եթերաժամանակով ապահովում են մանկական և լրատվական հեռուստահաղորդումների սուբոդյարգմանությամբ հեռարձակումը: Սակայն պետք է նշել, որ օրենքի վերը նշված պահանջը լիարժեք չի կատարվում:

63. Կոնվենցիայի դրոյթներին համապատասխան իրազեկվածության ապահովման պահանջն ամրագրված է 2003թ. ընդունված «Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ օրենքի 4-րդ հոդվածը, որպես տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներ սահմանում է «տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանությունը» և «տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը»: Միաժամանակ, նույն օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության ազատության իրականացումը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»:

64. Իրազեկման արդյունավետության բարձրացմանը նպաստում է նաև «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված սոցիալական գովազդի պատրաստման և հրատարակման սկզբունքը, համաձայն որի՝ «Գովազդակիրը պարտավոր է բնակչության առողջության և առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող և առեւտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների համար առաջնահերթ տրամադրել գովազդին հատկացվող տարեկան եթերային ժամանակի /տպագրական մակերեսի/ ոչ պակաս, քան 5 տոկոսը: Սոցիալական գովազդի տեղաբաշխման պատվերները ներկայացվում են ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից: Սոցիալական գովազդի արտադրության և տեղաբաշխման ծախսերը կատարվում են գովազդատուի միջոցների հաշվին»:

65. Բնակչության իրավական գիտելիքների մակարդակի բարձրացման, քաղաքացիների կողմից իրավունքի և մասնավորապես՝ հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ համապատասխան գիտելիքների ձեռք բերման նպատակով ՀՀ-ում ձեռնարկվում են միջոցառումներ տարբեր կրթական մակարդակներում: Այսպես, նպատակ ունենալով երեխաների մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք հաշմանդամների նկատմամբ, ինչպես նաև բարձրացնել երեխաների գիտելիքների մակարդակն իրավունքի բնագավառում՝ ավագ դպրոցում (10, 11 և 12-րդ դասարաններ) նախատեսվում և անց են կացվում սոցիալական հիմնախնդիրների և իրավունքի հիմունքների վերաբերյալ դասընթացներ:

66. Իրավունքի և սոցիալական բնագավառի վերաբերյալ համապատասխան դասընթացներ են իրականացվում նաև մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում:

67. Իրազեկվածության բարձրացման կարևոր գործընթաց է նաև իրավունքի բնագավառի վերաբերյալ հանրային ծառայության, մասնավորապես՝ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացները: Որպես վերապատրաստման պարտադիր բաղադրիչ իրականացվում են դասընթացներ <Գենդերային հիմնախնդիրներ> և <Մարդու իրավունքներ> թեմաներով, յուրաքանչյուրը 72 ժամ ծանրաբեռնվածությամբ: Այս դասընթացներում բավականին ծավալ են կազմում նաև հաշմանդամների իրավունքների՝ այդ թվում կին հաշմանդամների իրավունքների պաշտպանության հետ կապված թեմաները:

68. Իրազեկվածության բարձրացման մյուս կարևոր բաղադրիչը հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրազեկման դասընթացների և սեմինարների կազմակերպումն է, որոնց արդյունքում հաշմանդամներն առավել լիարժեք ծանոթանում են իրենց իրավունքների, տրամադրվող արտոնությունների հետ: Նմանատիպ դասընթացներ կազմակերպվում են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից, ինչպես նաև այն հանրակրթական դպրոցներում, նախնական կամ միջին մասնագիտական կրթական հաստատություններում, որտեղ կիրառվում է ներառական կրթություն:

69. Իրազեկման միջոցառումների շրջանակներում ամեն տարի ծնողների համար կազմակերպվում են սեմինարներ <Ծնողավարման հմտություններ> թեմայով, որոնք նպատակ ունեն իրազեկել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության առանձնահատկությունների մասին: Այդպիսի սեմինարներ 2010-2012 թվականներին ծրագրված անցկացվել են որոշ հասարակական կազմակերպությունների կողմից: <Նույսի կամուրջ> հ/կ-ի կողմից, ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում կազմակերպված սեմինարներին մասնակցել են նաև ՀՀ ԱՍՀՆ աշխատակիցները: Նման միջոցառումների արդյունավետությունը, ծնողների հմտությունների և կարողությունների զարգացման առումով, բավականին բարձր է:

70. Իրազեկվածության բարձրացմանը նպաստում են նաև ՀՀ ԱՍՀՆ բժշկասոցիալական փորձագիտության և զբաղվածության գործակալությունների, նրանց տարածքային մարմինների կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումները հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների հետ:

71. Սկսած 2008 թվականից, ՀՀ ԱՍՀՆ և Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերի ազգային հանձնաժողովը յուրաքանչյուր տարի նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը հայտարարում են հաշմանդամության հարցերի իրազեկման միամսյակ: Միամսյակի շրջանակներում կազմակերպվում են սեմինարներ, կլոր սեղաններ, քննարկումներ, մամլո ասուլիսներ, քայլարշավներ, հեռուստահաղորդումներ և այլ բազմաթիվ ու բազմաբնույթ միջոցառումներ: Այս ծրագրի շրջանակներում հասարակության լայն խավերն իրազեկվում են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների, ինչպես նաև <Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի> դրույթների, կոնվենցիայից բխող՝ հաշմանդամության սահմանման նոր մոտեցումների մասին:

72. 2010-2011թ. ՀՀ ԱՍՀՆ աշխատակիցներից կազմված աշխատանքային խմբերը Երևանում և հանրապետության բոլոր մարզերում անցկացրել են կոնվենցիայի դրույթների պարզաբանմանը նվիրված ընդլայնված խորհրդակցություններ, որոնց մասնակցել են մարզային, ՏԻՄ ղեկավարներ, սոցիալական ոլորտի աշխատակիցներ, հասարակական սեկտորի ներկայացուցիչներ, լրագրողներ և այլն: Հանդիպումները լայնորեն լուսաբանվել են տեղական ԶԼՄ-ներով:

73. 2010 թվականից սկսած՝ յուրաքանչյուր տարի ՀՀ ԱՍՀՆ-ն հասարակական կազմակերպությունների հետ համատեղ անց է կացնում «Լավագույն լրագրողական աշխատանք» մրցույթը, որի շրջանակներում սահմանվում է մրցանակ հաշմանդամության ոլորտի վերաբերյալ լավագույն հեռուստառադիոհաղորդումների պատրաստման, հոդվածների հրապարակման համար: Կարող ենք արձանագրել, որ տարեց-տարի մրցույթին դիմող և մասնակցող լրագրողների թիվն ավելանում է:

74. Հաշմանդամության ոլորտին վերաբերող խնդիրները լուսաբանելու և լուծման ուղիներ առաջարկելու նպատակով 2008թ. մարտ ամսից հանրային լայն լսարան ունեցող հեռուստաալիքով հանրապետության ողջ տարածքում հեռարձակվում է ՀՀ ԱՍՀՆ «Սոցիալական երկխոսության ժամ» գերատեսչական հաղորդաշարը, որը սոցիալական այլ խնդիրների շարքում անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, կյանքի բարելավմանն ու իրավունքների իրազեկմանը: Հաղորդաշարին բազմիցս հյուրընկալվել են ՀՀ ԱՍՀ նախարարը, նախարարի տեղակալները, ՀԿ-ների ղեկավարներ, սոցիալական գործընկերներ:

75. 2012 թվականի օգոստոսի 14-18-ը միջազգային փորձագետի կողմից իրականացվել է վերապատրաստում, որի նպատակն է ՀՀ մասնագետներին և պաշտոնատար անձանց զինել համապատասխան գիտելիքներով և հմտություններով ֆունկցիաների միջազգային դասակարգման մեթոդաբանության կիրառման, ինչպես նաև հաշմանդամության իրավիճակային վերլուծություն իրականացնելու համար: Դասընթացին մասնակցել են մասնագետներ ՀՀ ԱՍՀՆ-ից, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, ՀՀ առողջապահության նախարարությունից, ինչպես նաև ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Հույսի կամուրջ» ՀԿ-ից և «Առաքելություն Արևելք» դանիական մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղից: Վերապատրաստման շնորհիվ մասնակիցների ձեռք բերած գիտելիքներն առավել արդյունավետ կօգտագործվեն հետազոտությունների իրականացման համար: Մասնավորապես՝ ձևավորված փորձագիտական խումբը մշակել է համապատասխան հարցաթերթ (գործիք), որի միջոցով իրականացվում է հարցում, տվյալների վերլուծություն և ամփոփում կիրառելով ICF-ի սկզբունքներն ու մեթոդաբանությունը: Արդյունքում վեր կհանվեն հաշմանդամություն և խնդիրներ ունեցող երեխաների և մեծահասակների հատուկ կարիքները, կորոշվի նրանց սահմանափակումների աստիճանը, ինչը կօգնի նաև որոշելու հաշմանդամության շեմը: Հետազոտությունն սկսվել է 2012 թվականի սեպտեմբերին և անցկացվում է Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում:

76. Հաշմանդամության ոլորտի հիմնախնդիրների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, ոլորտը կարգավորող իրավական դաշտի, իրականացվող ծրագրերի մասին մատչելի տեղեկատվություն են ապահովում նաև ՀՀ ԱՍՀՆ [www.mss.am](http://www.mss.am) և 2010թ. հատուկ ստեղծված [www.disabilityarmenia.am](http://www.disabilityarmenia.am) էլեկտրոնային կայքերը:

## **Հոդված 9. Մատչելիություն**

77. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար առաջին նախապայմանը շրջակա միջավայրի մատչելիությունն է, ինչը ենթադրում է այնպիսի բարենպաստ պայմանների ապահովում, որոնք հնարավորություն կտան հաշմանդամներին ակտիվորեն օգտվել ենթակառուցվածքներից, տրանսպորտային միջոցներից, ինչպես նաև ստանալ իրենց հետաքրքրող տեղեկատվություն:

Մատչելիության ապահովման սկզբունքները ներառված են <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքում:

78. <<<-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 21,24 և 27-րդ հոդվածներով սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների վերաբերյալ պետական քաղաքականության շրջանակներում ՀՀ պետական իշխանության և կառավարման մարմիններին, ՀՀ տարածքում գործող բոլոր գործատուներին (պետական և ոչ պետական) պարտավորեցվում է <հաշմանդամների համար ապահովել սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիություն, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծում>: Այս պահանջը տարածվում է ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքների վրա: Մատչելիությունն ապահովելու նպատակով նույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, եթե դրանք հաշմանդամների մատչելիության և օգտագործման համար հարմարեցված չեն:

79. Հաշմանդամների համար մատչելի պայմաններ ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից հաստատվել է <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման> կարգը: Համաձայն այդ կարգի՝ փողոցի երթևեկելի և հետիոտն գոտիները, ստորգետնյա և վերգետնյա անցումները, շենքերին ու շինություններին հարող տարածքները, հասարակական հանգստի վայրերը, սպորտային և մանկական խաղահրապարակները պետք է կահավորված լինեն անհրաժեշտ թեքահարթակներով և հատուկ հարմարանքներով, ինչպես նաև լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով:



80. Մատչելիության ապահովումը, բացի ՀՀ կառավարությունից, դրված է նաև տեղական ինքնակառավարման մարմինների վրա:

81. <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օենքի 43-րդ հոդվածով, որպես համայնքի ղեկավարի գործունեություն աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում ներկայացվում է. <հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցների ձեռնարկում>:

82. <Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով, որպես քաղաքապետի լիազորություններ քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում սահմանվում է քաղաքաշինական օբյեկտներում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար պայմաններ ստեղծելու ծրագրերի իրականացում: Այս ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ քաղաքի տրանսպորտի վարչությունը պետք է միջոցառումներ իրականացնի հաշմանդամների համար հարմարեցված շարժակազմի ձեռքբերման և դրանք նպատակային օգտագործելու ուղղությամբ, ինչպես նաև իրականացնի միջոցառումներ հաշմանդամների սպասարկման համար նախատեսված սարքավորումների՝ թեքահարթակներ, հատուկ վերելակներ և այլն, ձեռք բերելու և հաշմանդամների համար նախատեսված (ներկված) ավտոբուսների վրա դրանց տեղադրման ուղղությամբ: Այդ նպատակի համար Երևան քաղաքի 2013 թ. բյուջեում նախատեսված է 25 մլն. դրամ:

83. Նախագծային աշխատանքների ոլորտում վերջին տարիներին որոշակի աշխատանք է կատարվել բնակչության սակավաշարժուն խմբերի քաղաքաշինական միջավայրում մատչելիության ապահովման ուղղությամբ: Որպես առավել ակտիվ գործունեության միջավայր, դրանք հիմնականում կատարվել են մայրաքաղաք Երևանում: Երևանի քաղաքապետարանի կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներն ընդգրկում են նաև հատուկ պահանջներ այս մասով /օրինակ՝ բնակելի և առևտրահասարակական համալիր Արշակունյաց պողոտայի վրա, բազմաբնակարան բնակելի շենքեր Քեռու, Մամիկոնյանց, Դեմիրճյան, Արամի և այլ փողոցների վրա/:

84. Նախագծերից կարելի է նշել այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են Հանրապետության և Բյուզանդի փողոցների անկյունում կառուցվող բնակելի շենքը, գործարարական կենտրոնը Խորենացու փողոցի վրա, ստորգետնյա անցումներ Նալբանդյան-Իսահակյան-Ալեք Մանուկյան, Վարդանանց-Խանջյան փողոցների խաչմերուկներում և այլն: Շինարարության ոլորտում տեսանելի աշխատանքն ակնհայտ է առանձնապես Երևանի փողոցների և հետիոտն անցումների մասով, որոնք հնարավորինս հարմարեցված են սայլակավոր քաղաքացիների համար (սակայն ոչ միշտ են պահպանվել սահմանված քաղաքաշինական նորմերը, ինչը խոչընդոտում է հաշմանդամների ինքնուրույն տեղաշարժմանը): Սայլակներից օգտվող հաշմանդամների անցանելիության ապահովման տեսանկյունից վարչական շենքերից կարելի է նշել շատ քչերը, սակայն աշխատանքները սկսվում են: 2010-2012 թթ. Երևանի քաղաքապետարանի կողմից հաշմանդամների

համար մուտքի թեքահարթակներ են պատրաստվել 12 պոլիկլինիկաների և 8 վարչական և հասարակական շենքերի մոտ:

85. Ի կատարումն <Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 5-րդ կետի, 57-րդ հոդվածի 4-րդ կետի, <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը> հաստատելու մասին՝ թիվ 392-Ն որոշման և Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 26-ի <Նոր կառուցվող և գոյություն ունեցող քաղաքաշինական օբյեկտներում հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի ազատ տեղաշարժման համար պայմաններ ստեղծելու մասին> N1634-Ա որոշման Երևանի քաղաքապետի 2012 թվականի հունիսի 13-ի թիվ 4562 որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքում հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի մատչելիության ապահովման խնդիրների իրականացման ծրագիրը: Սույն որոշման կատարման կազմակերպումն (միջոցառումների կատարման ապահովումը) ու պատասխանատվությունը դրվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների վրա: Հաշմանդամների համար մատչելիությունն ապահովելու նպատակով խնդիր է դրվել նաև ընտրական հանձնաժողովների առջև, որոնք իրենց գործունեությամբ պետք է ապահովեն հաշմանդամների անարգել մասնակցությունը ընտրական գործընթացին: ՀՀ ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածով ամրագրվում է հետևյալ դրույթը, համաձայն որի՝ <Տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ>:

86. ՀՀ-ում չկա մատչելիության ապահովման ազգային ծրագիր, իրականացման համապատասխան ժամկետներով և ցուցանիշներով, ինչը նախատեսվում և ամրագրված է մշակված օրենքի նախագծում: Մատչելիության ապահովմանն ուղղված նորմատիվ իրավական ակտերի դրույթների փաստացի իրականացումը համապատասխան մեխանիզմների և անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ամբողջությամբ չի իրականացվում՝ հատկապես քաղաքաշինության ոլորտում, որտեղ մատչելիության ապահովումը հեռու է բավարար համարվելուց:

87. Սակայն պետք է նկատել, որ ՀՀ գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանվող մատչելիության նորմերը կարևոր նախադրյալ են ստեղծում մատչելիության մակարդակը երկրում ապահովելու համար:

## **Հոդված 10. Կյանքի իրավունք**

88. Կյանքի իրավունքի հիմնադրույթը, որը ներկայացված է կոնվենցիայում, ամրագրված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»: Այս դրույթը վերաբերվում է բոլոր քաղաքացիներին՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց:

89. Կյանքի իրավունքի հիմնադրույթն ամրագրված է նաև ՀՀ քրեական օրենսգրքով, որի 49-րդ հոդվածով, որպես պատժի տեսակներ սահմանված են՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, գույքի բռնագրավումը, կալանքը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը որոշակի ժամկետով, ցմահ ազատազրկումը: Նախկինում սահմանված պատժի տեսակներից «մահապատժը» 2006թ-ի վերացվեց և քրեական օրենսգրքում ներկայումս նման պատիժ չի նախատեսվում:

90. ՀՀ բոլոր քաղաքացիները, այդ թվում հաշմանդամները պաշտպանված են կամայական ձևով կյանքից զրկվելու պատժին ենթարկվելուց: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով արգելվում է նաև մարդկանց բժշկական և գիտական փորձարկումների ենթարկելը առանց նրանց համաձայնության:

### **Հոդված 11. Ռիսկային և մարդասիրական ճգնաժամի իրավիճակներ**

91. Արտակարգ իրավիճակների կարգավորման մասին օրենսդրության հիմքը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությունը, համաձայն որի՝ երկրում սահմանադրական կարգի բռնի տապալման, ինչպես նաև ռազմական իրադրության պայմաններում ՀՀ նախագահը՝ խորհրդակցելով ՀՀ ԱԺ նախագահի և ՀՀ վարչապետի հետ, երկրում կարող է հայտարարել արտակարգ դրություն, որի վերաբերյալ իրավական ռեժիմը սահմանվում է 2012թ. ընդունված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով: Արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումը միտված է քաղաքացիների անվտանգության ապահովմանը բնական աղետների, տեխնածին վթարների, համաճարակների ժամանակ, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, երբ տեղի են ունենում հասարակական կարգի մասսայական խախտումներ, ծագում է սահմանադրական կարգի բռնի տապալման վտանգ:

92. ՀՀ կառավարության որոշումներով և համապատասխան օրենսդրությամբ, որի հիմքում ընկած է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, սահմանված է միասնական պետական համակարգ՝ տեխնածին և բնական աղետների կանխարգելման, դրանց ի հայտ գալու դեպքում համապատասխան միջոցառումների իրականացման համար: Այդ համակարգն իր մեջ ներառում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական և ոչ պետական կազմակերպություններն իրենց համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներով: Միաժամանակ այդ համակարգում առկա են այնպիսի կառույցներ, որոնք իրականացնում են բնական և տեխնածին

իրավիճակների մշտադիտարկում, որի նպատակն է կանխարգելել նման իրավիճակների առաջացումը, նվազեցնել մարդկային և նյութական կորուստները: Այս օրենքը սահմանում է նաև արտակարգ իրավիճակներում քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:

93. 2011թ. օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն «Վտանգավոր տարածքից բնակչության տարհանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը սահմանում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ բնակչության տարհանման միջոցառումների հիմնական խնդիրները, դրանց կազմակերպումը և իրականացումը: Այդ կարգի 2-րդ կետը վերաբերվում է հաշմանդամություն ունեցող անձանց տարհանմանը:

94. Արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում գործում է ճգնաժամային կառավարման կենտրոն, որտեղ կենտրոնացված են համապատասխան տեղեկատվական բազաններ, այդ թվում՝ ըստ տարածքների հաշմանդամների տեղակայման մասին տեղեկատվությունը: Արտակարգ իրավիճակների նախարարություն ահազանգի ստացման դեպքում ճգնաժամային կենտրոնը հստակ կարողանում է պարզել, թե վտանգավոր տարածքում որքան հաշմանդամ կա, որտեղ են նրանք տեղաբաշխված և դրա հիման վրա մշակում է համապատասխան միջոցառումներ հաշմանդամներին աջակցելու համար: Ավարտին է մոտենում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի նոր մասնաշենքի կառուցումը, որն ամբողջովին հարմարեցված է համար աշխատելու հաշմանդամների բոլոր պայմաններին: Նախատեսվում է վերջիններիս համար ստեղծել 25-30 աշխատատեղ: ՀՀ ԱԱՀՆ 2012 թվականի նոյեմբերին Արտակարգ իրավիճակների նախարարությանը ներկայացրել է աշխատանք փնտրող, հիմնականում տեղաշարժման խնդիրներ ունեցող հաշմանդամների ցուցակները՝ համապատասխան ուսուցում կազմակերպելու և հետագայում աշխատանքով ապահովելու համար:

95. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալությունը և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան հաճախ դասընթացներ են կազմակերպում Երևանում և մարզերում, որոնցում ներգրավվում են նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

96. ՀՀ օրենսդրությունում «ռիսկային» և «մարդասիրական ճգնաժամի» իրավիճակ հասկացություններ չկան: Միաժամանակ նշենք նաև, որ վերջին տասը տարիներին ՀՀ-ում բնական և տեխնածին աղետները կրել են փոքրամասշտաբ բնույթ և դրանց հետևանքով հաշմանդամություն ստացած, ինչպես նաև մահացած քաղաքացիների թիվը շատ փոքր է և էական տեսակարար կշիռ չի կազմում:

## **Հոդված 12. Հավասար ճանաչում օրենքի առաջ**

97. Օրենքի առաջ հավասարության ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխի մի շարք հոդվածներով, որոնք ենթադրում են հավասարություն «անձնական ազատության և անձեռնմխելիության»,

<խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արժանանալու բացառման>, <անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու>, <մտքի, խղճի և կրոնի ազատության>, <իր կարծիքն ազատ արտահայտելու>, <հանգստի, կրթության, բժշկական օգնություն ստանալու> իրավունքների տեսանկյունից:

98. Կոնվենցիայի պահանջների ապահովման համար հիմքերը սահմանվում են << Սահմանադրությամբ, համաձայն որի՝ յուրաքանչյուր քաղաքացի, այդ թվում հաշմանդամը, իրավունք ունի պաշտպանել իր իրավունքները և ազատությունները դատական կարգով, ինչպես նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Քաղաքացին ազատ է իրավաբանական օգնություն ստանալու գործում, ընդ որում, որոշակի դեպքերում այդ օգնությունը կարող է տրամադրվել պետական միջոցների հաշվին:

99. Քաղաքացիների՝ այդ թվում նաև հաշմանդամների ունեցվածքի պահպանման տեսանկյունից սահմանադրության 31-րդ հոդվածով սահմանվում է հետևյալ դրույթը. <Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:>: << Սահմանադրության 33.1 հոդվածով նախատեսված է. <Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:>: Ըստ որում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ընթացքում յուրաքանչյուր անձ, այդ թվում նաև հաշմանդամը, կարող է օրենքով սահմանված կարգով ստանալ բանկային վարկեր և դրանք օգտագործել իր գործունեության համար:

100. Համաձայն << քաղաքացիական օրենսգրքի՝ մարդու քաղաքացիական գործունակությունը կարող է սահմանափակվել միայն դատական կարգով, եթե քաղաքացին տառապում է այնպիսի հոգեկան խանգարումներով, որը էականորեն ազդում է նրա ընդունակության վրա՝ ընկալելու իր գործողությունների նշանակությունը: Սահմանափակ մեղսունակությամբ ֆիզիզկական անձանց համար նախատեսվում է խնամակալ անձի նշանակում դատարանի կողմից, իսկ սահմանափակ մեղսունակությամբ անձանց իրավունք է վերապահվում ինքնուրույն իրականացնել փոքր կենցաղային բնույթի գործարքներ: Առավել խոշոր գործարքները, որոնք կապված են սահմանափակ մեղսունակությամբ անձանց հետ, իրականացվում են խնամակալի անմիջական մասնակցությամբ, նրա հսկողությամբ և գիտությամբ: Որոշակի դեպքերում ֆիզիկական անձը դատարանի կողմից, բժշկական եզրակացության հիմքով կարող է ճանաչվել անմեղսունակ: Այս դեպքում քաղաքացու կողմից որևէ գործարք ինքնուրույն չի կարող իրականացվել: Բոլոր տեսակի գործարքները իրականացվում են խնամակալի կողմից:

101. Որոշումներ կայացնողների կողմից հաշմանդամների նկատմամբ չարաշահումների կանխարգելման երաշխիքները պայմանավորված են գործող նորմատիվ իրավական ակտերի դրույթներով, այդ դրույթների նկատմամբ համապատասխան հսկողության մեխանիզմների առկայությամբ,

իրավապահ մարմինների և հասարակական կառույցների կողմից իրականացվող հսկողությամբ ու մշտադիտարկմամբ:

102. ՀՀ-ում տարբեր քաղաքացիական և համայնքային ծառայողների, հաշմանդամների խնդիրներով զբաղվող կազմակերպությունների աշխատակիցների համար, ինչպես նաև նախնական, միջին մասնագիտական և հանրակրթական ծրագրեր իրականացնող կրթական հաստատություններում պարբերաբար իրականացվում են դասընթացներ (երկարաժամկետ և կարճաժամկետ) որոնց ընթացքում մասնակիցներին իրազեկում են հաշմանդամների՝ օրենքի առջև հավասարության հիմնախնդիրների մասին:

### **Հոդված 13. Արդարադատության մատչելիություն**

103. Որևէ տեսակի սահմանափակում հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ կապված նրանց դատական վարույթներին մասնակցելու հետ՝ օրենքով նախատեսված չէ: Հաշմանդամություն ունեցող անձինք հավասար հիմունքներով մասնակցում են բոլոր դատական ընթացակարգերին:

104. Դատական ընթացակարգերին լիարժեք մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև վերջիններիս իրավունքների և պարտականությունների լիարժեք իրականացման հնարավորության համար ՀՀ դատարանների շենքերը հարմարեցվում են հաշմանդամների համար: Այսպես, դատարանների 48 շենքերից 37-ում առկա են թեքահարթակներ և հաշմանդամների համար պահանջվող մատչելի միջավայր: Աշխատանքները հիմնականում իրականացվել են 2010-2012 թվականներին:

105. Արդարադատության համակարգի աշխատողների շրջանում իրականացվում են հաշմանդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ կրթական ծրագրեր: 2012թ. իրականացվել է նմանատիպ մեծածավալ ուսուցման ծրագիր, որը ներառել է համակարգի աշխատողների մինչև 40%-ը:

106. Որևէ իրավական կարգավորում, կապված հաշմանդամների արդարադատության համակարգում ընթացող գործընթացներին արդյունավետ մասնակցելու համար (որպես վկա, մեղադրյալ, տուժող և այլն) չի իրականացվել, քանի որ մասնակցությունն ապահովող բոլոր իրավական ակտերը նախատեսում են անձանց, այդ թվում հաշմանդամների հավասար մասնակցություն և բացառում են որևէ խտրականության դրսևորում հաշմանդամության հիմքի վրա:

107. Նախատեսված չեն նաև հատուկ կարգավորումներ, որոնք կապահովեն մասնակցությունը կապված տարիքի հետ (երեխաներ և երիտասարդներ), քանի որ այս տեսանկյունից նույնպես՝ թե հաշմանդամների և թե հաշմանդամություն չունեցող անձանց մասնակցությունը դիտարկվում է հավասար իրավունքների տեսանկյունից, և բացառվում է խտրականությունը հաշմանդամության հիմքով:

108. Օրենքի նախագծով ամրագրված են դրույթներ, որոնցով ապահովվում են մատչելի և հարմարեցված պայմաններ ազատագրկման վայրում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սահմանված է նաև, որ ազատագրկման վայրերում հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի

արժանանալու մարդասիրական և նրա մարդկային արժանապատվության նկատմամբ հարգալից վերաբերմունքի, ստանալու մատչելի և անարգել տեղեկատվություն՝ իր ձերբակալության, կալանավորման կամ ազատագրկման պատճառների ու պայմանների մասին, ստանալու անարգել և իր համար մատչելի ձևով իրավական, բժշկական, սոցիալ-հոգեբանական և այլ անհրաժեշտ օգնություն: Նախատեսված է, որ ազատագրկման վայրում գտնվող անձանց հաշմանդամություն սահմանելու կարգը սահմանելու է ՀՀ կառավարությունը:

109. Արդարադատության մատչելիության ապահովվման նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատված բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգի 31-րդ կետում ամրագրված է, որ անձն իր իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունի բողոքարկելու փորձաքննական որոշումները, բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի գործողությունը կամ անգործությունը ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով: Պետք է նկատել, որ 2010-2011թվականներին ՀՀ տարբեր ատյանի դատարանների վարույթում է գտնվել նմանատիպ 23 գործ:

#### **Հոդված 14. Անձի ազատությունը և ապահովությունը**

110. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով սահմանվում է. <Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով>: Հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվում են անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքից, չեն ազատագրկվում անօրինական կերպով և չեն կարող ազատվել պատասխանատվությունից հաշմանդամության պատճառով:

111. Հաշմանդամների համար նախատեսվում են լրացուցիչ միջոցառումներ իրենց իրավունքների պաշտպանությունն առավել արդյունավետ իրականացնելու համար: Այսպես, 2013 թվականի հունվարի 1-ից 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կտրամադրվի անվճար իրավաբանական օգնություն քաղաքացիական, վարչական գործերով, ինչպես նաև դատարան ներկայացվող փաստաթղթերի անվճար պատրաստում և խորհրդատվության տրամադրում:

112. Համաձայն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի՝ <Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին: Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման>: Սահմանադրության նույն հոդվածով սահմանվում է նաև, որ <Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական

պարտավորությունները: Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով>:

113. <Ոստիկանության մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանվում է, որ <Ոստիկանությունը ներքին գործերի պետական կառավարման լիազորած մարմնի համակարգում գործող մարմին է, որը կոչված է հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, ինչպես նաև այլ իրավունքներն ու ազատությունները, սեփականությունը, հասարակության ու պետության շահերը>: Միաժամանակ, նույն օրենքի 5-րդ հոդվածով նշվում է, որ <Ոստիկանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից պաշտպանում է մարդու կյանքն ու առողջությունը, ինչպես նաև այլ իրավունքներն ու ազատությունները, սեփականությունը և օրինական շահերը՝ անկախ նրա քաղաքացիությունից, ռասայից, սեռից, լեզվից, ազգությունից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կուսակցական կամ որևէ կազմակերպության պատկանելությունից>:

114. <Ազգային անվտանգության մարմինների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է. <Ազգային անվտանգության մարմինների գործունեությունը հիմնված է օրինականության, ժողովրդավարության, օրենքի առաջ բոլորի հավասարության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հարգելու և պահպանելու սկզբունքների վրա>, իսկ 7-րդ հոդվածում նշվում է. <Ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացնելիս երաշխավորվում է մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակում չի թույլատրվում, բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված դեպքերի>:

115. Միաժամանակ պետք է նկատել, որ հաշմանդամություն ունեցող և քրեակատարաողական հիմնարկներում գտնվող անձիք օգտվում են ազատության մեջ գտնվող հաշմանդամների իրավունքներից, բացառությամբ՝ ազատության սահմանափակման մասով: Նրանք կարող են անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, վերափորձաքննություն ՀՀ ԲՍՓ գործակալությունում այլ անձանց հետ հավասարազոր կարգով և ստանալ պետության կողմից տրամադրվող երաշխիքներ: Պետք է նկատել, որ վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց թիվը, որոնք դատապարտվել են ազատազրկման փոքր է և այդ պատճառով այդ անձանց վերաբերյալ վիճակագրություն չի վարվում:

### **Հոդված 15. Ազատություն կտտանքներից կամ դաժան, անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքից կամ պատժից**

116. Համաձայն ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի՝ <Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի>:



117. ՀՀ քրեական օրենսգրքի 119 հոդվածով սահմանվում է, որ անձին խոշտանգման ենթարկելու համար, եթե դրա պատճառով անձը մարմնական ծանր կամ միջին վնասվածքներ չի ստացել, պատժվում է մինչև 3 տարի ազատազրկմամբ, իսկ եթե խոշտանգումը կատարվել է երկրորդ անգամ, կամ մի քանի անձանց նկատմամբ, կամ առաջացրել է ծանր կամ միջին մարմնական վնասվածք՝ պատժվում է 3-ից 7 տարվա ազատազրկմամբ: Միաժամանակ նույն օրենսգրքի 127-րդ հոդվածով համապատասխան պատիժներ են սահմանվում նաև այն դեպքերի համար, երբ մարդուն առանց իր համաձայնության ենթարկում են գիտական, բժշկական և այլ փորձարկումների: Այս դեպքերում նախատեսվում է ազատազրկում 2-6 տարի ժամկետով, որոշակի դեպքերում նաև վարչական տուգանքներ:

### **Հոդված 16. Շահագործումից, բռնությունից և չարաշահումներից ազատ լինելը**

118. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսվում են տարբեր բնույթի պատիժներ մարդու շահագործման, նրա նկատմամբ բռնության կիրառման համար: Օրենսգրքի 132-րդ հոդվածը համապատասխան պատիժներ է սահմանում մարդու թրաֆիկինգի և շահագործման, 133-րդ հոդվածը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 131-րդ հոդվածը՝ մարդուն առևանգելու, 118-րդ հոդվածը՝ մարդուն ծեծելու համար: Որոշակի պատիժներ են սահմանվում նաև ծնողների համար, որոնք իրենց երեխաներին գիտակցաբար մղում են մուրացկանության:

119. Բռնությունից և անարգանքից ազատ լինելու կարևոր միջոցառում է նաև պայքարը ընտանեկան բռնության դեմ: Այս երևույթը ՀՀ օրենսդրությամբ դիտվում է որպես քրեորեն պատժելի արարք և պատժվում է կախված բռնության հետևանքներից (ծանր, միջին կամ թեթև մարմնական վնասվածքներ) և բռնությունը հասցնելու ձևերից (դիտավորյալ, ոչ դիտավորյալ և այլն):

120. Ընտանիքում բռնության կանխարգելման գործառույթները դրված են մի շարք կազմակերպությունների վրա: Մասնավորապես՝ պետական քաղաքականության մշակման մակարդակում ՀՀ ԱՍՀՆ վրա, օպերատիվ արձագանքման և կանխարգելման գործառույթները՝ ոստիկանության ստորաբաժանումների վրա, երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ խնամատարության մարմինների վրա, սոցիալական պաշտպանության տեսանկյունից՝ մի շարք մասնագիտացված կազմակերպությունների, որոնք իրականացնում են բռնությունից տուժածների բժշկասոցիալական վերականգնում, հոգեբանական աջակցության ցուցաբերում և այլ ծառայությունների մատուցում, որնոց արդյունքում հաղթահարվում են ընտանեկան բռնության հետևանքները:

121. Բռնության ենթարկված հաշմանդամների վիճակագրական հաշվառում չի տարվում և դժվար է ասել, թե բռնության ենթարկվածների որ մասն է հաշմանդամ: Սակայն հաշմանդամները, բռնության ենթարկված բոլոր այլ անձանց հետ, հնարավորություն ունեն հավասարապես ներգրավվելու վերականգնողական ծրագրերում:

122. Բնակչության սոցիալական պաշտպանության շտրջօրյա հաստատություններում, տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրման ընթացում, խնամքի ցերեկային կենտրոններում ծեր և հաշմանդամ քաղաքացիների իրավունքների պաշտպանության, նրանց նկատմամբ բռնության և խտրականության դրսևորումների բացառման նպատակով ՀՀ ԱՍՀՆ իրականացնում է պարբերական այցելություններ, ուսումնասիրություններ, դիմում-բողոքների քննարկումներ: Աշխատանքներն իրականացվում են միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների, մասնավորապես՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հետ, որը Հայաստանում այս ոլորտում գործող ակտիվ կազմակերպություններից է:

123. Նշված կազմակերպությունը, հաճախ այցելելով սոցիալական պաշտպանության տարբեր կազմակերպություններ, վեր է հանում մարդու իրավունքները հարգելու ու պաշտպանելու, հաստատություններում խնամվող ծերերի և հաշմանդամների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի հետ կապված խնդիրներ: Նշված հաստատություններում խնամվողների նկատմամբ բռնության դեպքեր երբևիցե չեն արձանագրվել:

124. ՀՀ ԱՍՀՆ աշխատակիցները մասնակցել են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակում կազմակերպված քննարկումներին, մասնավորապես՝ տուն-ինտերնատներում խնամքի և սոցիալական սպասարկման փաստացի վիճակի՝ սահմանված չափորոշիչներին համապատասխանության և փակ ու կիսափակ հաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց նկատմամբ բռնության դեպքերի հարցերով: Միաժամանակ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից նախարարություն ուղարկված բոլոր գրություններին, ինչպես նաև քաղաքացիների դիմումներին մշտապես սահմանված կարգով և ժամկետներում տրվել են պատասխաններ և պարզաբանումներ:

### **Հոդված 17. Մարդու ամբողջականության պաշտպանությունը**

125. ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ գլխում կարգավորվում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դեպքերը, մասնավորապես՝ հարկադիր բուժումը, հոգեբուժական օգնության ցուցաբերումը, հատուկ նշանակության առողջապահական հաստատություններում բուժում անցնելը և այլն: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել դատարանի որոշմամբ, եթե անձինք կատարել են հանցագործություն՝ լինելով անմեղսունակ, սահմանափակ մեղսունակ կամ հոգեբուժական հիվանդության ազդեցության ներքո:

126. Համաձայն «Բնակչության բժշկական սպասարկման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ «Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդն իրավունք ունի անվճար ստանալ պետության կողմից երաշխավորված կարգով բժշկական օգնություն և սպասարկում և բուժվել այդ

նպատակի համար նախատեսված հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում»:

127. <Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով արգելվում է փոխպատվաստման համար դրամական փոխհատուցումը: Միաժամանակ արգելվում է մարդու օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստման գովազդը: Նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ <Ֆիզիկական անձը, որին բուժական նպատակով պետք է փոխպատվաստվեն օրգաններ և (կամ) հյուսվածքներ, փոխպատվաստումն իրականացնելու համար տալիս է իր գրավոր համաձայնությունը: Եթե հիվանդը երեխա է, ապա պետք է լինի նրա ծնողների կամ խնամակալների համաձայնությունը>: Նույն օրենքի 11-րդ հոդվածով քաղաքացին չի կարող հանդիսանալ դոնոր, եթե նա սահմանված կարգով ճանաչված է հաշմանդամ:

128. ՀՀ քրեական օրենսգրքն իր հերթին սահմանում է տարբեր կարգի պատիժներ մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման գործընթացները խախտելու համար: Այդ պատիժները տատանվում են 2- 8 տարի ազատազրկմամբ, կամ վարչական տույժերով:

129. ՀՀ քրեական օրենսգրքով (հոդված 122) համապատասխան պատիժներ են նախատեսվում ապօրինի կամ հարկադրմամբ աբորտի իրականացման, ինչպես նաև հարկադրմամբ ամլացման համար, անկախ այն բանից՝ տվյալ անձը (կինը, աղջիկը, տղամարդը) հաշմանդամ է, թե՛ ոչ: Վերը նշված դրույթները վերաբերում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց:

### **Հոդված 18. Տեղաշարժվելու ազատություն և ազգություն**

130. ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում տեղաշարժվելու ազատության և քաղաքացիության որևէ սահմանափակում՝ պայմանավորված հաշմանդամության հանգամանքով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ <Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավանքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համաձայն>: ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածը հաշմանդամությունը դասում է այն հանգամանքների շարքին, որոնց հիման վրա խտրականությունն արգելվում է:

131. ՀՀ-ում օրինական հիմքերով գնտնվող անձանց /այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականների/ ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, որի 25-րդ հոդվածի համաձայն, ՀՀ-ում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի ՀՀ-ից դուրս գալու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի և ՀՀ-ում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի ՀՀ վերադառնալու իրավունք: Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ ՀՀ մուտք գործելու, ՀՀ տարածքում գտնվելու և բնակվելու, ՀՀ տարածքով տարանցիկ երթևեկելու, ՀՀ-ից ելքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <Օտարերկրացիների մասին> ՀՀ

օրենքով և այլ իրավական ակտերով /մուտքի վիզա ստանալու մասով՝ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 1268-Ն որոշում/:

132. ՀՀ-ում ապաստան ստացած փախստականների, ինչպես նաև ապաստան հայցողների, նրանց ընտանիքի անդամների՝ ՀՀ-ում բնակության վայրի ընտրության և պետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու, ՀՀ-ից դուրս գալու իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքով:

133. Անձանց ՀՀ մուտք գործելու և ելքի թույլատվության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <Պետական սահմանի մասին> ՀՀ օրենքով, որի 25-րդ հոդվածի համաձայն, պետական սահմանի անցման կետերում անձանց մուտքը /ելքը/ իրականացվում է սահմանապահ զորքերի թույլատվությամբ՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, ինչպես նաև <Սահմանապահ զորքերի մասին> ՀՀ օրենքով, որի 7-րդ հոդվածի 1-ին մասի <Ժ> կետի համաձայն՝ սահմանային գոտում /շերտում/ և պետական սահմանի անցման կետերում սահմանապահ զորքերն իրավունք ունեն թույլ չտալ պետական սահմանով անցնել ՀՀ տարածք մուտքի կամ ՀՀ տարածքից ելքի իրավունք տվող համապատասխան փաստաթղթեր չունեցող անձանց, մինչև նրանց պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերի պատշաճ ձևակերպումը կամ մինչև նրանց կողմից փաստաթղթերը կորցնելու հանգամանքների պարզաբանումը:

Վերը նշված օրենքներով անձի հաշմանդամությունը որևէ կերպ սահմանափակող կամ վատթարացնող հանգամանք չի համարվում անձանց իրավունքների իրացման համար /այդ թվում՝ մուտքի վիզա կամ կեցության կարգավիճակ ստանալիս, ՀՀ տարածքում տեղաշարժվելիս, ՀՀ տարածքից դուրս գալիս կամ մուտք գործելիս և այլն/:

134. Ինչ վերաբերում է քաղաքացիությանը, ապա ՀՀ Սահմանադրության 30.1 հոդվածով նախատեսվում են ՀՀ քաղաքացիության հիմքերը, համաձայն որոնց՝ <<< քաղաքացիներից ծնված երեխան ՀՀ քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, ունի ՀՀ քաղաքացիության իրավունք: ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը սահմանվում է օրենքով: Ոչ ոք չի կարող զրկվել ՀՀ քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից: ՀՀ քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով>:

135. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանվում է <<< քաղաքացիության մասին> ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

136. 13-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրյա պետությունում բնակվող /գտնվող/ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

- օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.
- կարող է բացատրվել հայերեն լեզվով
- ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը:

137. 16-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած ծնողների երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

138. 18-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

139. 24-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

140. ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝

- նրա նկատմամբ հարուցվում է քրեական հետապնդում,
- նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ,
- ՀՀ քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է ՀՀ ազգային անվտանգության շահերին
- նա ունի պետության հանդեպ չկատարված պարտավորություններ:

141. Վերը նշված օրենսդրական դրույթների վերլուծումից բխում է, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու հարցերը լուծելիս հաշմանդամությունը որևէ կերպ սահմանափակող կամ կանխորոշող պայման չի կարող հանդիսանալ:

142. Ի կատարումն Կոնվենցիայի պահանջների՝ Հայաստանի Հանրապետությունը կնքել է մի շարք միջազգային համաձայնագրեր, որոնք նպատակ ունեն պաշտպանելու հաշմանդամների իրավունքները և ազատությունները: Այսպես, 2012թ. ստորագրված <<< կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության մասին> համաձայնագրով, որպես համագործակցության ուղղություններից մեկը, նշվում է հաշմանդամների համար հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովումը:

143. 2011թ. ստորագրված <<< կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին> փոխըմբռնման հուշագրի երկրորդ հոդվածը սահմանում է, որ կողմերը փոխըմբռնման հուշագրին համապատասխան կնպաստեն աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում երկու երկրների միջև համագործակցության

զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև հաշմանդամների սոցիալական աջակցությանը:

144. Պետք է նկատել նաև, որ երեխայի ծննդի պետական գրանցման հետ կապված, օրենքով որևէ խտրականություն նախատեսված չէ և հաշմանդամություն ունեցող երեխաները մյուսներից որևէ կերպ չեն տարանջատվում, ուստի ծնված հաշմանդամ երեխան գրանցվում է, ստանում է անուն և քաղաքացիություն մյուս երեխաների հետ հավասար իրավունքներով, համաձայն ՀՀ-ում գործող օրենսդրության:

### **Հոդված 19. Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունք**

145. ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածում նշվում է, որ <Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք>:

146. ՀՀ Սահմանադրության 33.2 հոդվածով ամրագրված է, որ <Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը>:

147. ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով նշվում է, որ <Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար>:

148. Հասարակությունում հաշմանդամների արդյունավետ ներառման համար կարևոր քայլեր են կատարվում մարզային մակարդակով: Այսպես մի շարք մարզային հեռուստատեսություններով (Տավուշի, Լոռու, Կոտայքի մարզեր) և այլ լրատվամիջոցներով, ինչպես նաև սեմինար քննարկումների ժամանակ պարբերաբար հանրությունը իրազեկվում է.

- ա) հաշմանդամություն ունեցող անձանց իրենց ապրելու վայրը այլոց հետ հավասարազոր հիմունքներով ընտրելու իրավունքի մասին,
- բ) տնային, համայնքային և այլ ծառայությունների մատչելիության, համայնքից մեկուսացումը կանխելու միջոցառումների մասին,
- գ) բանկչության համար նախատեսված համայնքային ծառայությունները և հիմնարկները հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասարապես մատչելի լինելու մասին:

149. Ներառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բոլոր մարզերում ստեղծված են <Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող> մարզային հանձնաժողովներ, որոնք իրենց գործունեության շրջանակներում ակտիվ համագործակցում են հասարակական և դոնոր կազմակերպությունների հետ, ապահովելով մարզում ներառման գործընթացին միտված տարատեսակ միջոցառումների իրականացում:

150. 2010-2012 թվականներին մարզերում ձեռնարկվել են միջոցառումներ հաշմանդամների վիճակը բարելավելու, նրանց իրավունքների ճանաչման,

հնարավորությունների իրականացման ուղղությամբ: Ստորև ներկայացվում են առանձին մարզերում որոշ աշխատանքների վերաբերյալ տվյալներ.

ա) Արագածոտնի մարզ

- Մարզի հաշմանդամների մի մասի կարիքները բավարարելու համար նրանց համար կազմակերպվում են խնամքի ծառայություններ տնային պայմաններում:
- Մարզի հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվում են իրազեկման միջոցառումներ, որոնցում ներգրավվում են հաշմանդամները: <Աստղավարդ> հաշմանդամ երեխաների ծնողների միության կողմից հաջողությամբ իրականացվում է հաշմանդամ երեխաների համար ամենամյա արհեստագործական ուսուցման ծրագիր, որի արդյունքում հաշմանդամ երեխաները ստանում են նախնական մասնագիտական կրթություն և կարողանում առավել արդյունավետ ներառվել հասարակության մեջ: 2011թ. 60 նման երեխա անցել է ուսուցում:

բ) Արմավիրի մարզ.

- <Լայթաուս Փարոս> բարեգործական հիմնադրամի հետ իրականացվում է հաշմանդամ երեխաների ծնողների իրազեկման խնդրով հանդիպումների ծրագիր,
- մարզում պարբերաբար կազմակերպվում են հաշմանդամության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, ինչը նաև լավ առիթ է տեղեկատվության տարածման, բնակչության իրազեկման համար:

գ) Լոռու մարզ.

- մարզում տրամադրվող ծառայությունների մատուցման ժամանակ առաջին պլան են մղվում հաշմանդամների հմտությունների և ունակությունների բացահայտումը և խրախուսումը: Նմանատիպ ծառայությունների մատուցման գործում լայնորեն ներգրավվում են տարբեր հասարակական կազմակերպություններ:
- մարզում գործում են հաշմանդամ տարեցների խնամքի բարեգործական կենտրոններ: Դրանցից են <Վանաձորի տարեցների տունը>, ուր խնամք են ստանում 55 տարեցներ և <Կյանքի հաց> բարեգործական հասարակական կազմակերպությունն իր <Հույսի տուն> ծերերի հանգստավայրով, որտեղ խնամք են ստանում 80 տարեցներ: <Հայկական Կարիտաս> միջազգային բարեգործական հասարակական կազմակերպությունը մարզում իրականացնում է 160 տարեցների խնամք, իսկ <Առաքելություն Հայաստան> կազմակերպության բարեգործական ճաշարաններում ընդգրկված են 480 կարիքավոր հաշմանդամներ:
- յուրօրինակ և լավ նախաձեռնություն է դրսևորում <ՎԻՎԱ-ՍԵԼ - ՄՏՍ>-ը, որը հանրային սպասարկման ոլորտ է ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց, կազմակերպելով նրանց մասնագիտական վերապատրաստումը, ապա նաև աշխատանքի ընդունումը:

դ) Շիրակի մարզ.

- մարզում հաշմանդամների ներառման, նրանց ինքնուրույն ապրելու պայմանների ապահովման համար ակտիվ աշխատանքներ են տանում հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները: Այսպես, <Հայկական կարիտաս> կազմակերպությունն աշխատանքներ է տանում բազմակի հաշմանդամություն ունեցող 30 երեխաների հետ: Ընթացքի մեջ են կազմակերպության կողմից ցերեկային հոգաժության կենտրոնի կառուցման աշխատանքները, որտեղ կարող են սպասարկվել 100-ից ավելի հաշմանդամ շահառուներ:
- իրականացված աշխատանքներում զգալի տեղ է հատկացվում հաշմանդամների սոցիալական սպասարկմանն ուղղված ծրագրերի համակարգմանն ու աջակցմանը: Այսպես <Հայկական կարիտաս>, <Փյունիկ>, <Մեղվիկ>, <Արաքս>, <Ագաթ>, <Անի> և այլ կազմակերպությունների կողմից տարաբնույթ աջակցության ծառայություններ են ստանում շուրջ 1600 հաշմանդամներ: Աշխատանքներում կարևորվել են մարզի հասարակական կյանքին հաշմանդամների արդյունավետ մասնակցությունն ապահովելուն ուղղված միջոցառումները:

ե) Սյունիքի մարզ.

- կարևոր քայլերից է մարզի հասարակական շենքերում հաշմանդամների ֆիզիկական մատչելիության համար պայմանների ստեղծումը:
- 2011թ. Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության տեխնիկական աջակցությամբ և Կապան համայնքի համաֆինանսավորմամբ Կապան քաղաքում բացվել է երեխաների աջակցության <Մանկական կենտրոն>, որը տարաբնույթ (հոգեբանական, իրավաբանական, շտկողական, վերականգնողական և այլն) ծառայություններ է մատուցում համայնքի 80 հաշմանդամ երեխաների:

զ) Տավուշի մարզ.

- հաշմանդամների խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկման շրջանակներում 2010թ. դեկտեմբեր ամսին մարզպետարանում կազմակերպվել է մարզային ծնողական կոնֆերանս՝ <Միանանք հանուն հավասար հնարավորությունների և միասին պաշտպանենք հաշմանդամություն ունեցող անձանց շահերը> կարգախոսով:
- <Հույսի կամուրջ> ՀԿ-ի նախաձեռնությամբ և մարզպետարանի անմիջական աջակցությամբ 2010-2011թ.թ. ընթացքում մարզի բոլոր համայնքներում ստեղծվել են Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ, որոնց նպատակն է աջակցել հաշմանդամ անձանց՝ համայնքներում ներառվելու գործընթացին: Կենտրոններում կազմակերպվում են զարգացման դասընթացներ, արտթերապիա, միջոցառումներ, ակցիաներ, քարոզարշավներ: Կենտրոնների գործունեության արդյունքում վերջին տարիներին Տավուշի մարզից կտրուկ նվազել է մանկատներ և գիշերօթիկ խնամքի հաստատություններ երեխաների դիմելիությունը: Հաշմանդամություն



ունեցող երեխաների ծնողների համար կենտրոնները կազմակերպում են նաև ծնողավարման դասընթացներ:

- հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի և մարզպետարանի նախաձեռնությամբ Երևանում գործող <Փարոս> ՀԿ-ի հետ 2011թ. կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում <Մատչելի ընտրություններ՝ հաշմանդամ անձանց համար> թեմայով, որին մասնակցել են մարզում գործող, հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող <Նոյաստղ>, <Պրոգրես>, <Դեբեդ> և այլ ՀԿ-ների ներկայացուցիչներ, ընտրական հանձնաժողովների անդամներ, համայնքների ներկայացուցիչներ: Կլոր սեղանի քննարկումների մասին տեղեկատվությունը տեղադրվել է մարզի ինտերնետային կայքում:
- մարզում բնակվող հատուկ կարիքներով երեխաների համար հատուկ վերականգնողական բժշկական ծառայությունները և մասնագիտական խնամքն առավել հասանելի դարձնելու նպատակով 2008թ. Իջևանում ստեղծել է <Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոն>:

ե) Վայոց Ձորի մարզ.

- առողջարանային ուղեգիր են ստացել 88 հաշմանդամներ, որից 20-ը՝ մոր ու մանկան,
- մարզում վերջին 2 տարիների ընթացքում կառուցված բոլոր շենքերն ու շինություններն ունեն թեքահարթակներ և հարմարեցված են հաշմանդամների համար,
- մարզի զբաղվածության 3 կենտրոններում 7 հաշմանդամ ընդգրկվել են <Աշխատավարձի փոխհատուցում>, իսկ ևս 4-ը՝ մասնագիտական ուսուցման ծրագրերում,
- հաշմանդամների իրավունքների պաշտպանության միջացառումների շրջանակներում Եղեգնաձորի, Վայքի և Զերմուկի քաղաքապետարանների կողմից կազմակերպվել են կլոր սեղաններ, իրավաբանական խորհրդատվություններ զբաղվածության և իրավունքների պաշտպանության ուղղությամբ,
- մարզում 5 հաշմանդամ ընտրվել է համայնքի ավագանու անդամ, 20-ը՝ համայնքային ծառայող է:
- հաշմանդամներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում մարզում գործող հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, նրանք ընդգրկված են <Շուշան>, <Հույս 98>, <Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն> և այլ ՀԿ-ներում: Հաշմանդամների հետ տարվող աշխատանքները լուսաբանվում են մարզում տպագրվող <Վարդաձոր> թերթում:

151. Հաշմանդամների ինքնուրույն ապրելակերպի և հասարակություն ներառվելու համար կարևոր է նաև նրանց համապատասխան վերականգնողական պարագաներով ապահովումը: Հաշվի առնելով հաշմանդամներին պրոթեզավորման և վերականգնողական պարագաներ տրամադրելու հետ կապված 2001-2003 թթ. մեծ հերթերը, սկսած 2004թվականից կտրուկ ավելացվեցին ՀՀ պետական բյուջեից այս ծառայությունների ֆինանսավորման գծով ծախսերը, ինչի արդյունքում

հերթերը վերացվել են: 2006-2007 թթ. ֆինանսավորումը շարունակել է աճել միջինը տարեկան շուրջ 5.7 տոկոսով, հաշմանդամներին տրամադրված վերականգնողական պարագաների թիվն աճել է միջինը տարեկան շուրջ 5.3 տոկոսով: 2008-2009թթ., ապա նաև հետագա տարիներին շեշտադրում է կատարվել պրոթեզների և վերականգնողական պարագաների տեսականու ընդլայման և դրանց որակի բարձրացման վրա: 2009-2010 թվականներին, նախորդ տարիների համեմատությամբ, վերը նշված խնդիրներով պայմանավորված բյուջետային հատկացումներն աճել են 15.6 տոկոսով: Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծրագրի շրջանակներում 2011-2013 թվականներին նախատեսվում է ավելացնել ծախսերը յուրաքանչյուր տարի 1-ական մլն. դրամով (2010թ.՝ 857.5 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական պարագաների պահանջարկի և դրանց նորոգման ծավալների ավելացմամբ: Նշված ցուցանիշներն ամրագրված են 2011-2013 միջնաժամկետ ծախսային ծրագրով, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:

152. Հաշմանդամների ինքնուրույն ապրելակերպի և հասարակությունում ներառման համար կարևոր է նաև համայնքային ծառայությունների առկայությունը, ինչը հնարավորություն է ստեղծում ընտանիքում ու համայնքում ապրելու և իրենց կարողություններին համապատասխան համայնքի կյանքին մասնակցելու: Վերջին տարիներին ՀՀ ԱՍՀՆ աշխատանքներ է իրականացնում համայնքային կենտրոններ ստեղծելու կամ գործողներին աջակցելու նպատակով: 2010-2012 թվականներին ՀՀ պետական բյուջեից 710,8 մլն դրամ է հատկացվել հասարակական կազմակերպություններին՝ համայնքային կենտրոնների և տնային պայմաններում սպասարկման աշխատանքները կազմակերպելու համար (<Առաքելություն Հայաստան> հկ-ին՝ 508,4 մլն. դրամ, <Հույսի կամուրջ> հկ-ին 153,9 մլն դրամ, <Փրկություն> հկ-ին՝ 49,5 մլն դրամ):

153. Կարևոր են համայնքային ծառայությունները՝ որոնք նպատակաուղղված են մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց վերականգնմանը հաստատություններից դուրս: ՀՀ ԱՍՀՆ ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2007 թվականին <Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ> ՊՈԱԿ-ին կից ստեղծվել է ցերեկային խնամքի կենտրոն: Կենտրոնի հիմնական նպատակն է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հայտնաբերումը, վերականգնումը և նրանց կյանքի որակի բարելավումը: Կենտրոնը սպասարկում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող այն անձանց, որոնք ունեն սոցիալ-հոգեբանական օգնության և հոգեկան առողջության վերականգնման կարիք, սակայն նրանց վիճակն այնպիսին չէ, որ խնամվեն ստացիոնարում: Ցերեկային կենտրոնի ծառայությունները մատուցվում են ինչպես կենտրոնում (50 մարդու), այնպես էլ տնային պայմաններում:

154. 2007 թվականից ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվում Երևան քաղաքում գործող <Փրկություն> երիտասարդների կենտրոն> հասարակական կազմակերպությունը: Կենտրոնի հիմնական նպատակը

մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ պատանիների և երիտասարդների ու նրանց ընտանիքների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնախնդիրների լուծման միջոցով նրանց ինտեգրումն է հասարակություն:

155. Մտավոր խնդիրներ ունեցող անձանց հատուկ հաստատություններում խնամքի տրամադրման այլընտրանքային մոդել է «Ջերմիկ անկյուն» կենտրոնը, որտեղ խնամվում է 15 երիտասարդ: Կենտրոնում երիտասարդներին տրամադրվում են սոցիալ-հոգեբանական ծառայություններ, ուսուցանվում են ինքնասպասարկման հմտություններ և այլն:

### **Հոդված 20. Անձնական շարժունակություն**

156. Հաշմանդամություն ունեցող անձանց անհատական շարժունակության ապահովման կարևորությունն ամրագրված է <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 5.1 հոդվածով, համաձայն որի՝ <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարությունը սահմանում է սոցիալական ծառայությունների, վերականգնման տեխնիկական միջոցների պետական ստանդարտները, ինչպես նաև հաշմանդամների համար կենսագործունեության միջավայրի մատչելիությունն ապահովող նորմերը և կանոնները:>:

157. Նույն օրենքի 7.1. հոդվածում նշվում է, որ <Հաշմանդամների վերականգնումը ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական միջոցառումներ, որոնք ուղղված են հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման վերացմանը կամ հնարավորինս փոխհատուցմանը: Վերականգնողական միջոցառումները իրականացվում են հաշմանդամի առողջության, աշխատունակության և սոցիալական կարգավիճակի վերականգնման նպատակով, որը նպաստում է հաշմանդամի նյութական և սոցիալական անկախությանը, հասարակական կյանքին համակողմանի մասնակցությանը և իրավահավասարությանը:>:

158. Օրենքով սահմանվում է <հաշմանդամների վերականգնման բազային ծրագիր> հասկացությունը: Բազային ծրագիրը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող, հաշմանդամներին անվճար տրամադրվող նվազագույն վերականգնողական միջոցառումների, մատուցվող ծառայությունների, հատկացվող տեխնիկական և օժանդակ միջոցների երաշխավորված ցանկ է:

159. Օրենքով սահմանվում են նաև հաշմանդամներին տեխնիկական կամ այլ միջոցների տրամադրման և պրոթեզավորման կարգն ու պայմանները: Համաձայն օրենքի 31 հոդվածի՝ <<< կառավարության սահմանած կարգով հաշմանդամներն ունեն հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների և բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ ՀՀ պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին>: 2010-2012 թվականներին 48840 պրոթեզա-օրթոպեդիկ ծառայություններ են մատուցվել և վերականգնողական տեխնիկական միջոցներ են տրամադրվել դրա կարիքն ունեցող բոլոր՝ 34430

հաշմանդամներին: Այդ նպատակի համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 2.3 մլրդ. դրամ:

160. Հաշմանդամություն ունեցող անձանց շարժունակության ապահովման համար նախատեսվող ճանապարհային նշանների և ազդանշանային համակարգերի կիրառումը ՀՀ-ում լայն տարածում չունի: Երևան քաղաքում որոշակի սահմանափակ տարածքներում կիրառվող նման տեխնիկական միջոցները մատչելի են հաշմանդամների համար:

### **Հոդված 21. Արտահայտման և կարծիքի ազատություն և տեղեկատվության մատչելիություն**

161. Իր կարծիքը արտահայտելու համար ՀՀ բոլոր քաղաքացիներն ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ՝ անկախ անձի հաշմանդամ լինելուց: Այդ հավասարության և արտահայտվելու ազատության սկզբունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

162. Հաշմանդամների ազատ տեղեկատվություն ստանալու սկզբունքն ամրագրված է նաև է «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Պետությունն ապահովում է հաշմանդամների տեղեկություններ ստանալու ազատությունը: Պետության կողմից շարժումների լեզուն ընդունվում է որպես անձնական շփման, ուսման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, լսողական միջոցների և խոշոր տառատեսակների մատչելիությունը, ներառյալ՝ ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումը: Մտավոր թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվում է լեզվի մատչելի ըմբռնման ուսուցման համակարգ: Խոսակցական խանգարումներով անձանց տրամադրվում են հաղորդակցման տեխնիկական միջոցներ: Հաշմանդամների հասարակական կազմակերպությունները սեփական միջոցների հաշվին և կանոնադրական խնդիրների շրջանակներում կարող են տրամադրել նաև անձնական շփման և հաղորդակցման այլ միջոցներ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերությունները օրենքով սահմանված եթերաժամանակով ապահովում են մանկական և լրատվական հեռուստահաղորդումների սուրդոթարգմանությամբ հեռարձակումը»:

163. ՀՀ բոլոր քաղաքացիների՝ այդ թվում նաև հաշմանդամների տեղեկատվության ստացման ազատության սկզբունքը ամրագրված է նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով: Համաձայն այդ օրենքի 6-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»: Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է հետևյալ դրույթը. «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը»:

164. Հաշմանդամների համար տեղեկատվության մատչելիության ապահովման նպատակով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածով որպես պահանջ սահմանվում է հեռուստատեսությամբ պարտադիր սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հաղորդումների հեռարձակումը: Համաձայն օրենքի այդ հոդվածի՝ «Հանրային հեռուստառադիոընկերությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով»:

165. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է պահանջ օտարալեզու հաղորդումների հեռարձակման մասին և հեռարձակման լեզվի մասին ընդհանրապես: Այսպես, համաձայն այդ հոդվածի՝ «ՀՀ տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց հաղորդումների լեզվի անաղարտությունը: Օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական եւ մուլտիպլիկացիոն կինոնկարները, ինչպես նաեւ հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները (հատվածները) հեռարձակվում են հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ձայնային կամ լուսագրային եղանակով»:

166. ՀՀ պետական բյուջեի հաշվին ամեն տարի տպագրվում են հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի գրքեր: Վերջին 3 տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի նմանատիպ տեղեկատվության միջոցների հրատարակման համար պետական բյուջեից հատկացվել է 10,5 մլն. դրամ:

## **Հոդված 22. Հարգանք անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ**

167. ՀՀ քաղաքացիների՝ այդ թվում նաև հաշմանդամների անձնական կյանքի անձեռնմխելիության սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք

իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով>:

168. Սահմանադրության նույն հոդվածով սահմանվում է նաև <նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ>:

169. << Սահմանադրության 24-րդ հոդվածով սահմանվում է, որ <Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով՝ դատարանի որոշմամբ>:

170. Կոնվենցիայի 22-րդ հոդվածի առաջին մասի դրույթները << օրենսդրությամբ երաշխավորված են, քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվում են անձնական կյանքի նկատմամբ հարգանքի ու անձեռնմխելիության իրավունքից: Սահմանադրությամբ և որևէ այլ իրավական ակտով հաշմանդամների նկատմամբ որևէ խտրականություն չի սահմանվում:

171. Կոնվենցիայի 22-րդ հոդվածի երկրորդ մասի՝ <անձնական, առողջական կամ վերականգնողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ այլ անձանց հետ հավասարազոր կերպով>, նույնպես ապահովվում է: Մասնավորապես՝ ԲՍՓ գործակալությունը փորձաքննվող անձանց տվյալները առցանց մուտքագրում է <Փյունիկ> տեղեկատվական բազա, որն ունի բարձր աստիճանի պաշտպանվածություն: Հաշմանդամների առողջական կամ վերականգնողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը պաշտպանվում է: Այդ տեղեկատվությունը տրամադրվում է անձին իր պահանջով, իր համաձայնությամբ՝ այլ անձանց, կամ դատական մարմիններին՝ հարցումների դեպքում:

172. << քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածով սահմանվում է, որ անձը իրավունք ունի <կյանքի և առողջության, արժանապատվության, անձնական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիության>:

173. << քաղաքացիների՝ այդ թվում նաև հաշմանդամների վերաբերյալ տեղեկատվության մշակումը և տարածումը կարգավորվում է <Անհատական տվյալների մասին> << օրենքով: Համաձայն այդ օրենքի 6-րդ հոդվածի՝ <Անհատական տվյալների մշակումը համարվում է օրինական, եթե անհատական տվյալները մշակվում են տվյալների սուբյեկտի համաձայնությամբ>: Սա նշանակում է, որ առանց հաշմանդամի իմացության անձնական տվյալների մշակումը (հավաքագրում, տարածում և այլն) չի

թույլատրվում: Նշված օրենքով անհատական տվյալների մշակում առանց անձի համաձայնության հնարավոր է հետևյալ դեպքերում. <անհատական տվյալները մշակվում են տվյալների սուբյեկտի կենսական շահերի պաշտպանության համար, անհատական տվյալների մշակումը նախատեսված է օրենսդրությամբ, կամ ուղղակի բխում է օրենքից, կամ անհրաժեշտ է օրենքի պահանջները կատարելու համար և անհատական տվյալները մշակվում են պետական և հասարակական անվտանգությունն անմիջական սպառնալիքից պաշտպանելու համար>:

### **Հոդված 23. Հարգանք տան և ընտանիքի նկատմամբ**

174. Համաձայն ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի՝ <ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից>: Համաձայն Սահմանադրության 36-րդ հոդվածի՝ <Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար>:

175. Հանաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի առաջին հոդվածի՝ <ընտանեկան օրենսդրությունը ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանեկան հարաբերությունները փոխադարձ սիրո ու հարգանքի վրա կառուցելու, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանեկան գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից>: Նույն օրենսգրքի համաձայն՝ <ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ տասնութ տարեկան հասնելը>: Միաժամանակ ամուսնությունը անգործունակ անձի հետ համարվում է անօրինական և օրենսգրքի 11-րդ հոդվածով նմանատիպ ամուսնություններն արգելվում են:

176. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանվում է ամուսնիկների իրավահավասարությունը ընտանիքում, մասնավորապես՝ <Ամուսիկներից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսիկները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսիկների իրավահավասարության սկզբունքից: Ամուսիկներն ընտանիքում պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության

և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար>: Միաժամանակ նույն օրենսգրքով երաշխավորվում է կնոջ և տղամարդու համար համապատասխանաբար մայրության և հայրության պաշտպանության իրավունքը: Օրենսգրքով սահմանվում են նաև դատական կարգով ծնողական իրավունքից զրկելու պայմանները: Այդպիսի պայմաններ կարող են լինել. <ծնողական պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելը, առանց հարգելի պատճառների երեխայից հրաժարվելը (հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից և այլն), ծնողական իրավունքները չարաշահելը, երեխաների հետ դաժանաբար վարվելը, քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ տառապելը, իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն կատարելը>:

177. Ծննդաբերությունից հետո երեխայից հրաժարվելը հանդիսանում է կամավոր քայլ, որի հետևանքով դատական կարգով իրականացվում է տվյալ անձին ծնողական իրավունքից զրկում: Այս գործընթացն ամբողջությամբ ամրագրված է ՀՀ ընտանեկան օրենսգրքով, կրում է կամայական բնույթ և որևէ տարբերակում չի նախատեսվում հաշմանդամություն ունեցող կամ չունեցող երեխաների, ինչպես նաև ծնողի հաշմանդամության դեպքում:

178. Եթե ծնողները հնարավորություն չունեն խնամելու իրենց հաշմանդամ երեխային կամ հրաժարվում են հաշմանդամ երեխայի խնամքից, գործող կարգի համաձայն այդ երեխայի խնամքն իր վրա է վերցնում պետությունը, տեղավորելով երեխային հաշմանդամ երեխաների համար նախատեսված շուրջօրյա խնամքի կենտրոններում: Ինչ վերաբերվում է հաշմանդամ երեխաների հանձնումը հեռավոր ազգականների (տատ, պապ, հորեղբայր, հորաքույր և այլն) խնամքին, դա իրականացվում է նույն կարգով, ինչ հաշմանդամություն չունեցող երեխաների համար: Այս գործընթացն իրականացվում է կամավորության սկզբունքով, ազգականների ցանկության արտահայտման դեպքում և ամրագրվում է դատարանի համապատասխան որոշմամբ:

179. Քրեական օրենսգրքով նախատեսված արգելքները և համապատասխան պատիժները (հոդված 122) ապօրինի աբորտի և ամլացման դեպքում վերաբերվում են բոլոր անձանց, այդ թվում նաև հաշմանդամներին: Ուստի բռնի աբորտից և ամլացումից հաշմանդամները պաշտպանված են հավասարապես, ինչպես հաշմանդամություն չունեցող անձիք:

#### **Հոդված 24. Կրթություն**

180. ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 35 հոդվածով, համաձայն որի՝ <Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանի Հանրապետությունում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար>: Պետք է նշել, որ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար



պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք: Պետությունը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

181. Համաձայն 1999 թ. ընդունված <Կրթության մասին> ՀՀ օրենքի՝ <Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով>: Միաժամանակ, նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով: 2001 թվականից, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, <<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպության և <<Առաքելություն Արևելք>> դանիական միջազգային կազմակերպության աջակցությամբ, ՀՀ հանրակրթական դպրոցներում սկսվեց իրականացվել ներառական կրթություն: 2001-2005 թվականների ընթացքում հանրակրթական 5 դպրոցում իրականացվել է ներառական կրթության փորձնական ծրագիր: 2005 թվականին <Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին> օրենքի ընդունումով սահմանվեց <Ներառական կրթություն> հասկացողությունը: Համաձայն նշված օրենքի՝ <Ներառական կրթություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում, նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ>: 2007 թվականից սկսած <<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպության և <<Առաքելություն Արևելք>> դանիական միջազգային կազմակերպության աջակցությամբ և Դանիաի միջազգային զարգացման գործակալության ֆինանսական օժանդակությամբ ընդլայնվում է ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը: Այսօր, համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի, Հայաստանի Հանրապետությունում 98 հանրակրթական դպրոց իրականացնում են ներառական կրթություն, որտեղ սովորում է շուրջ 2390 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա: Ներառական կրթության զարգացմանը զուգահեռ հանրապետությունում նվազում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը: 2002 թվականին հանրապետությունում գործում էր 52 հատուկ դպրոց, որտեղ սովորում էին շուրջ 10000 երեխաներ: Այսօր հանրապետությունում գործում է 23 հատուկ դպրոց, որտեղ սովորում է շուրջ 2500 աշակերտ: Այդ սովորողների ուսումնական ծրագրերում աղջիկների և տղաների համար որևէ տարբերություն չի նախատեսվում:

182. Պետությունը հոգ է տանում նաև ուսումնասօժանդակ գրականության ստեղծման հարցով: 2011 թվականի ընթացքում մշակվել, տպագրվել և ձեռք է բերվել 11 անուն ուսումնամեթոդական ձեռնարկ և այլ ուսումնական նյութեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ամենահարմար լեզվով կազմակերպելու համար: Այդ գրականությունը տրամադրվել է հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներին:

183. 2007 թվականին ստեղծվել է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը: Այս կառույցի ստեղծման հիմնական նպատակն էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների բացահայտումը և երեխաների կրթական կարիքներին համարժեք անհատական ուսումնական ծրագրի կազմումը՝ անկախ երեխայի ծնողի ընտրած ուսումնական հաստատությունից: Զարգացումները գնահատման կենտրոնի առաջ դրել են նոր մարտահրավերներ, այն է՝ երեխայի կրթական կարիքների գնահատում՝ արդյունավետ կրթության կազմակերպման նպատակով: Անհրաժեշտ է մշակել նոր չափանիշներ՝ հիմնված երեխայի ֆունկցիոնալ կարիքների վրա: Այդ պարագայում երեխայի անհատական ուսումնական պլանները կմշակվեն երեխայի իրական կրթական կարիքների գնահատման արդյունքում և կնպաստեն երեխայի զարգացմանը: Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից 2011 թվականի ընթացքում իրականացվել է շուրջ 2200 երեխայի կրթական կարքիների գնահատում:

184. Համաձայն 25.08.2005թ. ՀՀ կառավարության թիվ 1365-Ն որոշման՝ հանրակրթական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ֆինանսավորվում է բարձրացված չափաքանակով: ՀՀ կառավարության 08.04.2010 թվականի թիվ 439 որոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական մեկ ընդհանուր չափորոշիչ բոլոր սովորողների համար, համաձայն այդ փաստաթղթի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով հանրակրթության ծրագրի բովանդակությունը հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին:

185. 2009 թվականից Նորվեգիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության և «Առաքելություն Արևելք» դանիական միջազգային կազմակերպության կողմից սկսվեց իրականացվել համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման փորձնական ծրագիրը ՀՀ Տավուշի մարզում: Հիմք ընդունելով այս ծրագրի փորձը, 2011 թվականից ՀՀ կառավարության 27-ը հունվարի թիվ 46-Ն որոշմամբ Տավուշի մարզում իրականացվում է հանրակրթության համակարգում համընդհանուր ներառման ծրագիր, ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը, ըստ որի մարզի բոլոր 77 հանրակրթական դպրոցների տրվել են Ուսուցչի օգնականի և հատուկ մանկավարժների հաստիքներ: Այսօր Տավուշի մարզի բոլոր

հանրակրթական դպրոցները իրականացնում են ներառական կրթություն և ունեն մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետներ: Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի իրականացրած վերլուծության տվյալների, հանրակրթական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկվածության ամենաբարձր ցուցանիշը Տավուշի մարզում է:

186. ՀՀ Ազգային ժողովը 2012 թվականի հոկտեմբեր ամսին առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքների արձագանքման եռաստիճան համակարգ:

187. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի դրույթը հստակ նշում է պետության կողմից կրթության բնագավառում հաշմանդամներին տրվող արտոնությունները. «Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հաշմանդամներին, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից»:

189. Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոցում գործում է համակարգչային «Արև» խոսող ծրագիրը, դպրոցն ապահովված է շուրջ 14 անուն բրայլյան լեզվով տպագրված դասագրքերով, ինչպես նաև խոսող դասագրքերով:

190. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում, որը հանրապետության խլություն ունեցող երեխաների կրթությունը կազմակերպող միակ հաստատությունն է, իրականացվում է հատուկ դասընթաց՝ ժեստ լեզվի ուսուցման համար: Դպրոցում կիրառվում է Բիլինգվալ մեթոդը, դասավանդումը կազմակերպվում է 2 մեթոդով՝ ժեստերի լեզվով և մայրենիով:

## **Հոդված 25. Առողջություն**

191. Համաձայն ՀՀ Սահամանադրության 38-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»:

192. ՀՀ քաղաքացիների բժշկական օգնության տրամադրումը կարգավորվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով: Համաձայն այդ օրենքի 4-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի

Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում>:

193. Համաձայն <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ <Հաշմանդամներին երաշխավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն պետական բժշկական հիմնարկներում: 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաները ըստ դեղատոմսերի ապահովվում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից: Հաշմանդամներն ունեն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում և դեղատներում առաջնահերթ սպասարկման իրավունք:

194. Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ <Բժշկական վերականգնումը տարբեր հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական և մտավոր և այլ խանգարումների բուժման միջոցառումների համակարգն է հաշմանդամության հանգեցրած խեղումների և հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելու նպատակով: Բժշկական վերականգնումը ներառում է վերականգնողական բուժումը, վերակառուցողական վիրաբուժությունը, պրոթեզաօրթոպեդիկ օգնությունը, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովումը, որոնք իրականացվում են հիվանդանոցային, ամբուլատոր կամ առողջարանային բուժման միջոցով: Բժշկական վերականգնումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության համակարգի մարմինների, գերատեսչական, ապահովագրական, բարեգործական և այլ բուժական հիմնարկների կողմից>: Հաշմանդամների, հաշմանդամ երեխաների վերականգնումն իրականացվում է բժշկական հիմնարկներում, վերականգնողական կենտրոններում, առողջարաններում և այլ նմանատիպ կազմակերպություններում՝ բժշկական միջոցառումների իրականացման արդյունքում:

195. Առողջության խաթարման կամ վնասվածք ստանալու դեպքում, այդ թվում երբ հիվանդությունն անցնում է խրոնիկ փուլ համապատասխան բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովները կամ վերականգնողական կազմակերպությունները կազմում են հաշմանդամի վերականգնման անհատական ծրագիր: Համաձայն <Հայաստանի Հանրապետությունում Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ <Վերականգնողական անհատական ծրագրում սահմանվում են վերականգնողական միջոցառումների ծավալները, տեսակները և ժամկետները, սոցիալական օգնության տեսակները, աշխատանքային անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև գործունեության սահմանափակվածությամբ պայմանավորված հատուկ տեխնիկական միջոցների և ծառայությունների տեսակները>:

196. Բժշկական ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր երևույթ է, այն իրականացվում է <Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին> ՀՀ օրենքի շրջանակներում և չի նախատեսում որևէ սահմանափակում կամ խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2011թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման համաձայն ՀՀ-ում հանրային ծառայության մեջ ընդգրկված որոշակի կարգի աշխատողների (անկախ այն հանգամանքից նրանք հաշմանդամ են թե ոչ) տրամադրվում է սոցիալական աջակցության փաթեթ, որի մեջ պարտադիր բաղադրիչ է հանդիսանում առողջապահական ապահովագրությունը: Ծրջանառության մեջ է գտնվում նաև Բժշկական ապահովագրության հայեցակարգը, որտեղ նույնպես հաշմանդամության հետ կապված որևէ խտրականություն չկա:

### **Հոդված 26. Բուժում և վերականգնում**

197. Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը հաշմանդամ ճանաչված անձանց համար բազմամասնագիտական գնահատմամբ մշակում և կազմում է վերականգնողական անհատական ծրագիր, որը կազմված է երեք բաժնից, որից մեկը՝ բժշկական վերականգնմանը նպաստող միջոցառումներն են: Վերականգնողական անհատական ծրագրով հաշմանդամություն ունեցող անձիք, իրենց համաձայնությամբ, ստանում են համապատասխան վերականգնողական ծառայություններ, պրոթեզա-օրթոպեդիկ պարագաներ, վերականգնողական օժանդակ և տեխնիկական միջոցներ, սարքավորումներ:

198. Պետական բույժի միջոցների հաշվին յուրաքանչյուր տարի շուրջ 460 հաշմանդամ երեխա և շուրջ 1350 հաշմանդամություն ունեցող անձ ստանում է վերականգնողական առողջարանային բուժում:

199. Հաշմանդամների առողջության վերականգնման հետ կապված ակտիվ աշխատանքներ են տարվում նաև ՀՀ մարզերում, որտեղ տարբեր հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվում են վերականգնողական միջոցառումներ:

ա) Լոռու մարզ.

- <Առողջապահական կամուրջ> դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծվել է տեխնիկայով, գրականությամբ և տեսանյութերով հագեցած առողջապահական ռեսուրս կենտրոն, որի նպատակն է բարձրացնել շահառուների շրջանում առողջապահական թեմաների վերաբերյալ իրազեկվածությունը և բժշկական խորհրդատվության արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում ռեսուրս կենտրոնը համագործակցում է Հանրապետական գիտաբժշկական գրադարանի և Վանաձորի պետական բժշկական քոլեջի հետ: Արդեն իսկ ստեղծվել է առողջապահական ուղղվածությամբ կայքէջը: Վանաձորի <Մանկական կենտրոն> ՀԿ-ն կազմակերպել է ամենամյա առողջապահական ծրագիր, որի շրջանակներում Վանաձորի բժշկական կենտրոնում անհրաժեշտ բուժօգնություն են ցուցաբերվել հենաշարժողական, ոսկրային, այրվածքային և այլ խնդիրներ

ունեցող մարզի բոլոր տարածաշրջաններից ժամանած երեխաներին: Այդ ընթացքում մարզի 130 հաշմանդամություն ունեցող երեխաներ բժշկական խորհրդատվություն են անցել Գերմանիայից ժամանած բժիշկների մոտ: ՀԿ-ն Վանաձորի մի շարք դպրոցներում կազմակերպել է միջոցառումներ՝ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման թեմայով:

- Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է թեժ գիծ առողջապահության և սոցիալական ապահովության հարցերով: <Լիարժեք կյանք> ՀԿ-ի կողմից իրականացվող <Ամեն ինչ մեզ համար, մեզ հետ> ծրագրի շրջանակներում նույնպես գործում է անվճար թեժ գիծ: Նշված թեժ գծերով, որոնք գործում են մոտ 1 տարի, արդեն ստացվել են հարյուրավոր հեռախոսազանգեր հաշմանդամություն ունեցող անձանցից՝ առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում խախտված իրավունքների մասին: Թե նշված ՀԿ-ն և թե Մարզպետարանի վարչության աշխատակիցները արագորեն անդրադարձել են բարձրացված հարցերին:

բ) Շիրակի մարզ.

- <Աչքի լույս հային> ծրագրի շրջանակներում Շիրակի մարզպետարանի աջակցությամբ մարզի համայնքների 564 կենսաթոշակառու հաշմանդամներ անցել են տեսողության հետ կապված բուժզննում, իսկ նրանցից 406-ը ստացել են անվճար վիրահատական բուժօգնություն:
- Մարզպետարանի աջակցությամբ մարզի բուժհաստատություններում կազմակերպվել են թվով 12 <Բաց դռների օրեր>, որոնց ընթացքում 380 հաշմանդամներ անցել են անվճար բուժզննում: Ելնելով անհրաժեշտությունից նրանցից 16-ին ցուցաբերվել է անվճար վիրահատական բուժօգնություն:

գ) Արմավիրի մարզ.

- Հաշմանդամ երեխաների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ միասին <Հատուկ կարիքով երեխան հասարակության լիարժեք անդամ> կարգախոսի շրջանակներում <Նաիրի> հԿ-ի միջնորդությամբ մարզի 2-14 տարեկան հաշմանդամ երեխաներ բժշկական հետազոտություն են անցել Գերմանիայի հանրապետությունից ժամանած բժիշկների կողմից: 5 երեխա ենթարկվել է վիրահատման: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:
- Յուրաքանչյուր ամիս ամբուլատոր սպասարկում է ցույց տրվում մարզի բուժհաստատություններում հաշվառված Հայրենական պատերազմի 228 մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև արցախյան պատերազմի 58 մասնակիցների, որոնք բոլորն էլ հաշմանդամներ են: Բուժման կարիք ունեցողները ստանում են անվճար բուժում և անհրաժեշտ դեղորայք:
- <ԱրԲես> առողջության կենտրոնի կազմում գործող <Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոնի> Արմավիրի

մասնաճյուղը, սկսած 2010 թվականից, յուրաքանչյուր տարի պետական բյուջեի հաշվին ընդունել և վերականգնողական բուժում է իրականացրել շուրջ 45 հաշմանդամ երեխաների: Հանրապետության մարզերում գործում է ևս 6 նմանատիպ կենտրոն:

- 2010թ-ի հոկտեմբերից մինչ օրս 141 հաշմանդամների տրամադրվել են առողջարանային ուղեգրեր՝ Արզնի, Ջերմուկ Գանձաղբյուր առողջարաններում վերականգնման և բուժման գործընթացներ անցնելու համար: Հաշմանդամներին միջնորդագրեր են տրվում նաև հանրապետական և մարզային ենթակայության բուժհաստատություններում պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու համար:

դ) Այունիքի մարզ.

- Երևանի բժշկամանկավարժահոգեբանական կենտրոնի Կապանի մասնաճյուղի և տեղի առողջապահական կազմակերպությունների մասնագետների հետ պարբերաբար կատարվել են տնային այցելություններ այն հաշմանդամ երեխաների ընտանիքներ, ովքեր չեն կարողանում հաճախել դպրոց և ստանում են տնային ուսուցում՝ տեղում աջակցություն ցույց տալու նպատակով:

200. ՀՀ կառավարությունը կողմից 2006թ. սեպտեմբերի 22-ին ընդունեց <Վերականգնողական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին> թիվ 1369-Ն որոշումը, համաձայն որի՝ վերականգնողական օգնությունը տրամադրվում է հաճախորդին սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնողական ծրագրի համաձայն: Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունն անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում ընդունելու դեպքում կազմում է հաճախորդի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիր՝ ղեկավարվելով <Սոցիալական աջակցության մասին> ՀՀ օրենքով սահմանված սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման սկզբունքներով:

201. Գործակալությունը, հաճախորդի դիմելուց հետո 15-օրյա ժամկետում, կազմակերպում է տնային այցելություն և գնահատում նրա սոցիալական խնդիրներն ու կարիքները և դրանք ամրագրում ծրագրում: Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման համակարգի ներդրումից հետո նախատեսվում է, որ կիրականացվի հաշմանդամի կարիքների համալիր գնահատում, որի արդյունքում հնարավոր կլինի կազմել առավել արդյունավետ անհատական ծրագիր և իրականացնել վերականգնողական առավել արդյունավետ միջոցառումներ:

202. Քաղաքացու հիվանդության, վնասվածքի կամ խեղման հետևանքով օրգանիզմի ֆունկցիոնալ կայուն կամ տևական խանգարման առկայության դեպքում նրան ուղեգրում են բժշկասոցիալական փորձաքննության: Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2006թ-ի մարտի 2-ի N 276-Ն որոշմամբ:

203. ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի <Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին> N

318-Ն որոշմամբ սահմանված է <Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի> ցանկը, որում ընդգրկված են 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամները, մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները և հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչև 18 տարեկան):

204. Հաշմանդամություն ունեցող անձանց բուժման և վերականգնման համար շատ կարևոր է մատչելի դեղորայքը: Այս փաստը էլ ավելի է կարևորվում, երբ հաշմանդամի հիվանդությունը կրում է խրոնիկ բնույթ և պահանջում կյանքի ողջ ընթացքում դեղորայքի մշտական ընդունում: Ելնելով այս հանգամանքից, ՀՀ կառավարության կողմից 2006թ-ին ընդունվել է N 1717-Ն որոշումը՝ <Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին>: Համաձայն այդ որոշման՝ անվճար դեղորայքով սպահովման իրավունք ունեն 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները, հաշմանդամ երեխաները (մինչև 18 տարեկան), հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչև 18 տարեկան):

Կառավարության կողմից հաստատված նույն որոշման համաձայն՝ 3-րդ խմբի հաշմանդամներին տրվում է 50% զեղչով դեղորայք ձեռք բերելու իրավունք: Ինչպես երևում է նշված որոշումից՝ արտոնությունների տրամադրման հիմքում դրված է քաղաքացու հաշմանդամությունը:

## **Հոդված 27. Աշխատանք և զբաղվածություն**

205. Համաձայն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի՝ <Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով: Հարկադիր աշխատանքն արգելվում է:>

206. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանվում են աշխատանքային օրենսդրության սկզբունքները, մասնավորապես՝ աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը, աշխատանքային ունակությունները տնօրինելու, մասնագիտության և գործունեության տեսակի ընտրության իրավունքը:

2) ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը:

3) աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազատությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ



տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

4) Յուրաքանչյուր աշխատողի ժամանակին և ամբողջությամբ աշխատանքի արդարացի վարձատրության իրավունքի ապահովումը՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից ոչ ցածր:

Ինչպես երևում է վերը բերվածից, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության մեջ ամրագրված չէ <հաշմանդամության> պայմանը: Այս տեսանկյունից օրենսգիրքը լրամշակման կարիք ունի:

207. Պետությունն ապահովում է աշխատանքային իրավունքների իրականացումը՝ աշխատանքային օրենսգրքի և այլ օրենքների դրույթներին համապատասխան: Աշխատանքային իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

208. ՀՀ բնակչության զբաղվածությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, <Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

209. Համաձայն <Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի՝ սոցիալական պաշտպանության լրացուցիչ երաշխիքների իրավունք ունեն աշխատանքի տեղավորման գործում դժվարություններ կրող և աշխատաշուկայում հավասար մրցակցության անընդունակ աշխատանք փնտրող չզբաղված անձիք: Այդ անձինք օրենքով բաժանված են 9 խմբի, որից առաջինը հաշմանդամներն են:

210. 2010թ. դեկտեմբերի 22-ին օրենքում ընդունվել են լրացումներ և փոփոխություններ, որոնց նպատակն էր խթանել զբաղվածության ոլորտում ակտիվ և արդյունավետ քաղաքականության իրականացումը: Օրենքի փոփոխությամբ աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին իրավունք է տրվել մասնակցել այլ վայր աշխատանքի գործուղման ծրագրին: Հաջորդ փոփոխությամբ կարգավորվել է մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը: Այս փոփոխություններն առավել դյուրին են դարձրել հաշմանդամների աշխատանքի տեղավորվելու խնդիրները:

211. Եթե բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հաշմանդամ ճանաչված անձի մոտ հայտնաբերվում է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակում, ապա վերականգնողական անհատական ծրագրի մասնագիտական վերականգնման բաժնում նշվում են աշխատանքի բնույթի և պայմանների մասին հակացուցումը և ցուցումը, իր մասնագիտությամբ աշխատանքը շարունակելու կամ այլ մասնագիտությամբ աշխատելու, հատուկ աշխատանքային պայմանների մասին

եզրակացությունները: Մասնագիտական վերականգնման ծրագիրն առցանց գրանցվում է, այն զբաղվածության պետական ծառայության գործակալության աշխատակիցների համար հիմք է ծառայում հաշմանդամություն ունեցող անձին համապատասխան ծրագրերում ընդգրկելու և նրա զբաղվածությունը ապահովելու համար: Գործատուներն իրենց հերթին, հիմնվելով տրված աշխատանքային երաշխավորագրերի, վրա կարող են թեթևացնել հաշմանդամի աշխատանքի պայմանները, կամ ստեղծել համապատասխան պայմաններ:

212. Զբաղվածության պետական ծառայությունը հաշմանդամների զբաղվածության ապահովման նպատակով, բացի վերը նշվածներից, իրականացնում է նաև <Աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցում, աշխատանքային ունակությունների վերականգնում> ծրագիրը, որի նպատակն է ունկնդրին աջակցել՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու գործում և դրա արդյունքում հարմար աշխատանք գտնելը: Միաժամանակ ծրագիրը նպաստում է, որպեսզի հաշմանդամներն ինքնուրույնաբար զբաղվեն ձեռնարկատիրական գործունեությամբ: Հաշմանդամների մասնագիտական ուսուցումը և աշխատանքային ունակությունների վերականգնումն իրականացվում են հաշվի առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինների կազմած՝ հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիրը: Մասնագիտական ուսուցման դասընթացների տևողությունը մինչև 3 ամիս է, իսկ նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դեպքում՝ 6 ամիս:

213. Հաշմանդամների զբաղվածությունն ապահովելու համար զբաղվածության պետական ծառայությունն իրականացնում է նաև աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման ծրագիր, որի արդյունքում աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր հաշմանդամի (նաև անմրցունակ անձի) համար գործատուին տրվում է փոխհատուցում գործատուի կողմից սահմանված աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձը, որը համաձայն գործող օրենքի կազմում է 32500 դրամ: Փոխհատուցման ծրագրում ընդգրկված անմրցունակ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների աշխատավարձերի փոխհատուցումը տրամադրվում է 2 տարի, իսկ 3-րդ խմբի հաշմանդամներին և անմրցունակ այլ անձանց՝ մեկ տարի ժամկետով:

214. Այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների նյութական ծախսերի հատուցման շրջանակներում (ծրագիրը գործում է ոչ պակաս քան մեկ տարի ժամկետով) հատուցվում են այլ վայր ժամանակավոր կամ մշտական բնակության մեկնողների հետ կապված հետևյալ ծախսերը.

- իր և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսերը.

- իր և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը.
- 30 կիլոմետրից ավելի հեռավորությամբ այլ վայր աշխատանքի մեկնելու դեպքում իր և իր ընտանիքի անդամների օրապահիկը՝ ՀՀ կառավարության սահմանած չափով:
- միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով.
- մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախս,
- ամսական գումար՝ բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

215. Հաշմանդամների զբաղվածության հետ կապված մեկ այլ ծրագիր է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը, որի շրջանակներում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել ցանկացող առևտրային կազմակերպություն գրանցելու, կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար տրվում են համապատասխան ֆինանսական միջոցներ: Տրամադրվող ծախսերը սահմանվում են հետևյալ չափերի.

- անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով,
- առևտրային կազմակերպություն գրանցելու համար՝ բազային տուրքի 12-պատիկի չափով,
- ֆիրմային անվանումը գրանցելու նպատակով՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով.
- կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն չափով:

216. <Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների արդյունքում կյանքի կոչվեց նաև մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ ծրագրիր: Այս ծրագրի նպատակն է աջակցել պրակտիկանտին ձեռք բերել իր մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանքային փորձ, աշխատաշուկայում դառնալ առավել մրցունակ և տեղավորվել հարմար աշխատանքի: Պրակտիկայի կազմակերպման ծրագրի տևողությունը 3 ամիս է, ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն պրակտիկան համարվում է գործատուի կողմից իրականացվող մասնագիտական ուսուցում, իսկ պրակտիկանտը՝ աշակերտ: Պրակտիկայի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պրակտիկանտին վճարվում է աշխատավարձ՝ նվազագույն ամսական աշխատավարձի, իսկ պրակտիկան անցկացնող անձին՝ նախորդ տարվա միջին ամսական

աշխատավարձի 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձը:

217. <Զբաղվածության պետական ծառայություն> գործակալության կողմից աշխատանք փնտրող չգբաղված հաշմանդամների համար իրականացվում է նաև աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ ծրագիրը, որի նպատակն է գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման միջոցով աջակցել հաշմանդամին տեղավորվելու հարմար աշխատանքի, իսկ գործատուին՝ համալրել առկա թափուր աշխատատեղը: Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր հաշմանդամի համար աշխատատեղի հարմարեցման նպատակով փոխհատուցվում են գործատուի կողմից կատարված աշխատանքի միջոցների՝ գույքի, սարքավորումների, աշխատանքային գործիքների ձեռքբերման, մոնիտինգի և տեղադրման հետ կապված ծախսերը, իսկ գործատուն կնքում է աշխատանքային պայմանագիր հաշմանդամի հետ և պայմանագրի պատճենը ներկայացնում զբաղվածության պետական ծառայություն:

218. Մասնագիտական կողմնորոշման համակարգի, ինչպես նաև անձի կարողությունների գնահատման գործիքների կիրառման նպատակով 2007 թվականի հոկտեմբերին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ստեղծվեց <Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի գործունեության հիմնական նպատակներից է դպրոցականներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող դպրոցականներին, ուղղորդել դեպի աշխատաշուկա՝ բացահայտելով նրանց անհատական առանձնահատկություններն ու նախասիրությունները, աջակցել աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն ու առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելուն: Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման գլխավոր նպատակն է անհատին օժտել կարիերայի զարգացման ընդհանուր կարողություններով, որը ներառում է նրա շարունակական զարգացումը որպես սովորողի, աշխատողի և քաղաքացու: Կենտրոնը դեռահասներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող դեռահասներին և երիտասարդներին, մատուցում է մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի խորհրդատվության ծառայություններ, այդ նպատակով մշակում է շահառուների հետ աշխատանքի մեթոդաբանությունը, աշխատանքային գործիքները, կազմակերպում և անցկացնում է անհատական, խմբային աշխատանքներ, հանրային միջոցառումներ: Բացի շահառուների հետ անմիջական աշխատանքից, կենտրոնի մասնագետները համապատասխան ծառայություններ են մատուցում երեխաների ծնողներին, երեխաների հետ աշխատող մասնագետներին և գործատուներին:

Կենտրոնի առաքելությունն ու նպատակները բխում են կրթության, զբաղվածության և երիտասարդության հիմնահարցերի գերակայություններից: Մասնավորապես, սույն ոլորտների վերաբերյալ ՀՀ Կառավարության հոկտեմբերի 30-ի թիվ 1207 – Ն որոշմամբ հաստատված <Կայուն զարգացման ծրագիր> փաստաթղթով ամրագրված այն խնդիրները, որոնց լուծման հիմնական նախապայմանը մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրումն է:

219. Հաշմանդամների հիմնախնդիրները լուծելու և հատկապես նրանց հասարակություն ինտեգրելու նպատակով ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 408-Ն որոշմամբ ստեղծվեց «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի գործունեության հիմնական նպատակն է նպաստել հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման ձևավորմանը, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան աշխատանքային վերականգնմանը, աշխատաշուկայում հավասար հնարավորությունների ապահովմանը և լիարժեք սոցիալական ներառմանն ու ինտեգրմանը: 2010-2012 թվականներին կենտրոնի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում 2430 հաշմանդամ ստացել է խորհրդատվություն, 160 հաշմանդամ հաշվառվել է որպես աշխատանք փնտրող, 280 հաշմանդամ ընդգրկվել է տարբեր ծրագրերում և 43 հաշմանդամ տեղավորվել է աշխատանքի:

220. 2012 թվականի նոյեմբերի 8-ին ընդունվել է «ՀՀ զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը և ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը: Վերոհիշյալ նախագծով զբաղվածության քաղաքականության նպատակը, որպես տնտեսական քաղաքականության բաղադրիչի, անհրաժեշտ քանակով և որակով աշխատուժի պահանջարկի բավարարման և առկա աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման ապահովումն է, որը պետք է դիտվի կայուն տնտեսական աճի հիմնական պայմաններից: Զբաղվածության քաղաքականության նպատակը, որպես սոցիալական քաղաքականության բաղադրիչի, արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների երաշխավորումն ու պայմանների հետևողական ապահովումն է, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի սահմանումն ու արդյունավետ ինտեգրման ապահովումն է, որը պետք է դիտարկվի որպես երկրում սոցիալական լարվածության թուլացման հիմնական պայմաններից մեկը:

221. Հիմք ընդունելով զբաղվածության ռազմավարությամբ առաջարկվող զբաղվածության քաղաքականության սկզբունքները, զբաղվածության ոլորտի ռազմավարական հիմնախնդիրներն ու գերակայությունները, ինչպես նաև այդ գերակայությունների իրականացման հիմնական մեխանիզմների արդյունավետ օրենսդրական ապահովումը, նախատեսվում է նաև ոլորտը կարգավորող նոր օրենքի ընդունում: Այդ նպատակով նախատեսվում է մշակել նոր «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ:

Հայեցակարգի արդյունավետ ուղղություն պետք է դիտվի զբաղվածության այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը մի կողմից՝ զարգացնելով աշխատանք փնտրողների մասնագիտական հմտությունները, աշխատանքային կարողությունները, բարձրացնելով նրանց տնտեսական ակտիվությունը կրթի զբաղվածության ապահովման, մյուս կողմից՝ գործատուին կշահագրգռի առկա թափուր աշխատատեղերը համալրել ինչպես ժամանակակից մասնագիտություններին, նորագույն տեխնոլոգիաներին տիրապետող հմուտ մասնագետներով, այնպես էլ՝

երիտասարդներով և աշխատաշուկայում անմրցունակ անձանցով, որոնց մեջ մեծ թիվ են կազմում հաշմանդամները:

222. 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ <Զբաղվածության պետական ծառայություն> գործակալության տարածքային կենտրոններում գրանցված հաշմանդամների թիվը կազմել է 1259 (2011թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը եղել է 1227):

223. Հաշմանդամների զբաղվածությանն աջակցելու պետական ծրագրերում իրականացված աշխատանքների արդյունքում վիճակագրությունն ըստ ծրագրերի հետևյալն է.

- <Հաշմանդամների մասնագիտական ուսուցում, աշխատանքային ունակությունների վերականգնում> ծրագիր - 2011թ. ընթացքում ծրագրում ընդգրկվել է 118 հաշմանդամություն ունեցող անձ, աշխատանքի տեղավորվել է 14-ը: 2012թ. I կիսամյակում ծրագրում ընդգրկվել է 41 հաշմանդամություն ունեցող անձ:

- Աշխատաշուկայում անմրցունակ խմբերին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին> ծրագիր.- 2011թ. ընթացքում ծրագրում ընդգրկվել է աշխատաշուկայում անմրցունակ 225 անձ, որոնցից 116-ը հաշմանդամություն ունեցող անձիք են: Այս անձանցից 11-ը առաջին խմբի հաշմանդամներ են, 45-ը՝ 2-րդ, 60-ը՝ 3-րդ:

2012թ.-ի I կիսամյակի ընթացքում ծրագրում ընդգրկվել են աշխատաշուկայում անմրցունակ 146 անձինք, որոնցից 76-ը հաշմանդամ են, 5-ը՝ առաջին խմբի, 28-ը՝ 2-րդ խմբի, իսկ 43-ը՝ 3-րդ խմբի:

- <Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին ֆինանսական աջակցության տրամադրում> ծրագիր.- 2011 թ. հաշմանդամություն ունեցող 4 անձ գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր. 2012թ. I կիսամյակում որպես անհատ ձեռնարկատեր գրանցվել է հաշմանդամություն ունեցող 3 անձ:

- <Գործազուրկներին այլ վայր աշխատանքի գործուղելու կապակցությամբ նյութական ծախսերի հատուցում> ծրագիր -2011թ. այլ վայր աշխատանքի գործուղվել է 1 հաշմանդամ անձ, իսկ 2012թ-ի I կիսամյակում ծրագրում դեռևս որևէ հաշմանդամ չի ընդգրկվել:

- <Հաշմանդամ անձանց համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ> ծրագիր - 2011թ. ծրագրի շրջանակներում հարմարեցվել է 11 աշխատատեղ, 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում 8 աշխատատեղ:

- <Աշխատանքի տոնավաճառների կազմակերպում> ծրագիր - 2011թ. հանրապետությունում կազմակերպվել է 6 աշխատանքի տոնավաճառ և ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ 1 կարերայի օր երիտասարդների համար, իսկ 2012թ.-ի I կիսամյակում 2 աշխատանքի տոնավաճառ: Նշված միջոցառումներին մասնակցել են թե հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպություններ, թե հաշմանդամություն ունեցող անձինք:

224. Իրականացվող պետական ծրագրերից բացի ծրագրեր են իրականացվում նաև միջազգային համագործակցության շրջանակներում: Դրանցից են.

- <Հաշմանդամություն ունեցող մարդիկ Հայաստանում՝ որպես խոստումնալից աշխատուժ> ծրագիր, նախատեսված է երեք տարի ժամկետով, 2010 թվականից իրականացվում է Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ <Հյուման Դիգնիթի ընդ Փիս> բարեգործական հիմնադրամի, Նիդեռլանդական <Ակտիվա Ինթենեյշնլ> կազմակերպության և Զբաղվածության պետական ծառայության կողմից, Երևանի Էրեբունի-Նուբարաշեն համայնքում և Հրազդան քաղաքում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ծրագրի 2011 թվականի արդյունքները.

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Արդյունքը
1	Աշխատանք փնտրող հաշմանդամ անձանց թիվը	197
2	Հաշվառված հաշմանդամների թիվը	94
3	Թեստավորում անցած հաշմանդամների թիվը	91
4	Աշխատանքի տեղավորված հաշմանդամների թիվը	28
5	Մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկված հաշմանդամների թիվը	30
6	Աշխատանքի տեղավորման նպատակով աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրում ընդգրկված հաշմանդամների թիվը	14
7	Հաշմանդամների համար հարմարեցված աշխատատեղերի թիվը	3
8	Իրագեցված հաշմանդամների թիվը	545
9	Իրագեցված գործատուների թիվը	417
10	Աշխատանքի տոնավաճառներին մասնակցության թիվը	3

- Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից իրականացվող <Ճգնաժամից դեպի արժանապատիվ և ապահով աշխատատեղեր> ծրագիր, որի շրջանակներում 2011թ-ից 3 փորձնական կենտրոններում (Աշտարակի մարզային, Երևանի Շենգավիթի և Աբովյանի տարածքային կենտրոններ) իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման ծրագիր: Ակնկալվող արդյունքը անմրցունակ խմբերի արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների մեծացումն է՝ աշխատատեղերը նրանց կարիքներին հարմարեցնելու ճանապարհով: Ծրագրի շրջանակներում.

ա) Փորձնական կենտրոնների մասնագետները վերապատրաստում են անցել անձի աշխատունակության և աշխատատեղի հարմարեցման կարիքների գնահատման, աշխատատեղերի վերլուծության թեմաներով դասընթացներում,

բ) Կենտրոնների աջակցությամբ աշխատանքի տեղավորված հաշմանդամություն ունեցող 5 անձանց աշխատատեղերը հարմարեցվել են ծրագրի աջակցությամբ ձեռքբերված գույքով:

- <Հանրային ծառայությունների համաշխարհային ասոցիացիայի> (WAPES), <Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության> (GIZ) և <Զբաղվածության պետական ծառայություն> գործակալության (ՀՀ ԱՍՀՆ ԶՊԾԳ) համագործակցությամբ 2011թ. սեպտեմբերի 5-6-ը Երևանում կազմակերպվեց միջազգային աշխատաժողով՝ «Զբաղվածության հանրային ծառայությունների լավագույն փորձերը՝ խոցելի խմբերին աշխատաշուկայում ինտեգրելու ուղղությամբ» թեմայով: Աշխատաժողովին մասնակցեցին շուրջ 60 ներկայացուցիչներ՝ ՀՀ-ի և Եվրոպական տարբեր երկրների զբաղվածության հանրային ծառայություններից և այլ կազմակերպություններից:

225. Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և «Արհմիությունների մասին» ՀՀ օրենքի՝ արհմիութենական կազմակերպություններին անդամակցելու համար որևէ խտրականություն կամ առանձնակի պահանջ հաշմանդամների նկատմամբ չի կիրառվում: Հաշմանդամ աշխատողի շահերը արհմիությունների կողմից պաշտպանվում են հավասարապես և միատեսակ, ինչպես հաշմանդամություն չունեցող աշխատողներինը:

226. Տեղեկատվություն ոչ ֆորմալ աշխատանքի շուկայի և նրանում ներգրավված հաշմանդամների վերաբերյալ ՀՀ-ում չի հավաքագրվում, հետևաբար դժվար է գնահատել, թե որքանով են զբաղվածության ոլորտում իրականացվող ծրագրերը նպաստում, որպեսզի հաշմանդամը ոչ ֆորմալ ոլորտից անցնի զբաղվածության ֆորմալ ոլորտ:

227. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման նպատակով օրենքի նախագծում ամրագրված են դրույթներ, որոնցով կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, սահմանվում են աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվներ /քվոտա/: Վերլուծելով Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը, քվոտայի կիրառման արդյունքում ակնկալվող ռիսկերն ու ազդեցությունները, առաջարկվում է քվոտայի փուլային ներդրման տարբերակ: Առաջին փուլում օրենքը ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո քվոտայի պահանջը սահմանվում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական և երկու տարի հետո՝ ոչ պետական կազմակերպությունների համար: Երկրորդ փուլում քվոտայի պահանջը սահմանվում է հիսուն և ավելի աշխատողներ ունեցող պետական և ոչ պետական կազմակերպությունների, իսկ երրորդ փուլում քվոտան սահմանվում է 20-ից մինչև 50 աշխատողներ ունեցող կազմակերպությունների համար: Քվոտայի պահանջի խախտման համար սահմանվում են տուգանքի և տուժանքի չափերը:

228. Քվոտայի աստիճանական ներդրումն ու կիրառությունը կնպաստի Հայաստանում աշխատանք փնտրող հաշմանդամների կայուն զբաղվածության ապահովմանը, նրանց աշխատանքային ներուժի արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև գործատուների սոցիալական պատասխանատվության զարգացմանը: Թերևս, այս գործընթացը



պետության կողմից պետք է ենթարկվի այնպիսի օրենսդրական կարգավորման և հետևողական կառավարման, որը կստեղծի օբյեկտիվ և ամբողջական հնարավորություններ մակրո և միկրո մակարդակում տնտեսական արդյունավետության հնարավոր կորուստներից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար:

229. Որպես հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման այլընտրանքային տարբերակ, օրենքի նախագծում ամրագրված է նաև սոցիալական կազմակերպությունների ստեղծման գաղափարը:

## **Հոդված 28. Համապատասխան կյանքի չափանիշներ և սոցիալական պաշտպանություն**

230. Համաձայն ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

231. Համաձայն ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9.1. հոդվածի՝ «Սոցիալական վերականգնումը սոցիալական, սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական և տնտեսական միջոցառումների համակարգ է, որն ուղղված է հաշմանդամի համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում մյուս քաղաքացիներին հավասար հնարավորություններ ստեղծելուն: Սոցիալական վերականգնումը ներառում է սոցիալ-միջավայրային կողմնորոշումը և սոցիալ-կենցաղային հարմարեցումը»:

232. Հաշմանդամություն ունեցող անձանց նյութական, սոցիալ-կենցաղային և բժշկական ապահովումն իրականացվում է դրամական վճարումների (կենսաթոշակներ, նպաստներ, միանվագ դրամական օգնություն և այլն), դեղորայքի, պրոթեզաօրթոպեդիկ և տեխնիկական այլ միջոցների տրամադրման, հոգեբանական, իրավաբանական և այլ բնույթի ծառայությունների մատուցման միջոցով:

233. Քաղաքացիների համար, որպես բազային ցուցանիշ, հանդես է գալիս կենսաապահովման նվազագույն զամբյուղը և նվազագույն աշխատավարձը: Նվազագույն աշխատավարձը սահմանվում է «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով և հավասար է 32500 դրամի (2013թ. հունվարի 1-ից՝ 35000 դրամ): Ներկայումս նվազագույն սպառողական զամբյուղը ՀՀ-ում հաշվարկվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից երկու մեթոդով.

- հաշվարկված Համաշխարհային Բանկի մեթոդաբանությամբ՝ 2009թ. ՀՀ ԱՎԾ կողմից 7872 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղով, որը 2012թ. երրորդ եռամսյակում միջին ընթացիկ գներով կազմել է 37081.5 դրամ,

- հաշվարկված ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի, որը 2012թ. երրորդ եռամսյակում միջին ընթացիկ գներով կազմել է 50443.1 դրամ:

234. 2005թ. դեկտեմբերի 24-ին ընդունվել և 2006 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել <Սոցիալական աջակցության մասին> ՀՀ օրենքը, որը կարգավորում է սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները: Օրենքով սահմանվում են սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման սկզբունքները, աջակցություն ստացողների շրջանակը (այդ թվում՝ նաև հաշմանդամներ), տրամադրվող սոցիալական ծառայությունների տեսակներն ու ձևերը, հաճախորդի և սոցիալական աշխատողի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվության շրջանակները և այլն: Համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի՝ սոցիալական աջակցության հիմնական նպատակն է.

- բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքները,
- ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու համար,
- խթանել նրանց ինքնօգնության եւ ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը,
- կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը,
- օժանդակել նրանց սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը:

235. Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված սոցիալական ծառայությունների հիմնական տեսակներն են. խորհրդատվական, իրավաբանական, վերականգնողական, դրամական, բնաիրային օգնության տրամադրումը, ժամանակավոր օթևանի տրամադրումը, խնամքի կազմակերպումը, սոցիալական ծառայությունների՝ օրենքով չարգելված այլ տեսակներ: Նշված գործառույթներն իրականացվում են սոցիալական ծառայության տարածքային մարմինների, տարեց մարդկանց տնային խնամքի կենտրոնի և վերականգնողական մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

236. Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական աջակցության ծրարագրից մեկը ընտանեկան նպաստի ծրագիրն է, որն իրականացվում է <Պետական նպաստների մասին> ՀՀ օրենքով սահմանված դրույթներին և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան: Այն հասցեական ծրագիր է, իրականացման սուբյեկտն ընտանիքն է և տրամադրման հիմքում դրված է ընտանիքի անապահովության գնահատման անուղղակի մեթոդը: Հաշմանդամություն ունեցող անձանց ընտանեկան նպաստը նշանակվում է ընդհանուր հիմունքներով՝ ելնելով վերոհիշյալ օրենքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և որևէ խտրականություն, կապված անձի հաշմանդամության հետ, չկա:

237. Համաձայն <Պետական նպաստների մասին> ՀՀ օրենքի՝ ընտանեկան նպաստի իրավունք է ձեռք բերում այն աղքատ ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է անապահովության սահամանային մեծության միավորից: Այսինքն՝ հաշմանդամներին ֆինանսական օգնության տրամադրումն իրականացվում է ելնելով այն ընտանիքի անապահովության

աստիճանից, որի կազմում նրանք ապրում են: Ընտանիքների անապահովության գնահատման կարգը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: Ընտանիքի անապահովության միավորը ձևավորվում է մի շարք ցուցանիշներ հաշվի առնելով, մասնավորապես՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը (հաշմանդամ, կենսաթոշակառու, երեխա, գործազուրկ, չափահաս աշխատունակ անձ և այլն), ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, ընտանիքի բնակվելու վայրը (սահմանամերձ գոտի, աղետի գոտի և այլն), ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլ ցուցանիշներ (ընդհանուր առմամբ սահմանված է թվով 12 գործոն): Ընտանիքների անդամների սոցիալական խմբերը թվով 17-ն են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անապահովության միավորը: Մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձինք՝ 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամներ և մանկուց հաշմանդամ, դասվում են տարբեր սոցիալական խմբերի: Ընտանիքի անապահովության միավորի հաշվարկի ժամանակ նման անձանց առկայությունն ընտանիքում բարձրացնում է ընտանիքի անապահովության միավորը: Որքան մեծ է այդ միավորն, այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը:

238. <Պետական նպաստների մասին> ՀՀ օրենքով սահմանվում են նաև հրատապ օգնության տրամադրման պայմանները: Հրատապ օգնության իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանեկան նպաստի իրավունք չունեցող ընտանիքը՝ անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու դեպքում: Հրատապ օգնության տրամադրումը կատարվում է սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ, հաշվի առնելով մի շարք պայմաններ՝ այդ թվում նաև ընտանիքում հաշմանդամություն ունեցող անձանց առկայությունը: Սոցիալական աջակցության խորհուրդները գործում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին կից՝ հասարակական հիմունքներով, նրանց կազմում ընդգրկված են նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

239. Յուրաքանչյուր տարի, ելնելով երկրում իրականացված տնտեսական բարեփոխումներից, ինչպես նաև աղքատության մակարդակի դինամիկայից, ՀՀ պետական բյուջեով նախատեսվում են որոշակի ֆինանսական միջոցներ ընտանեկան նպաստի և հրատապ օգնության համար: Ելնելով այդ միջոցների ծավալից՝ ՀՀ կառավարությունն ամեն տարի սահմանում է ընտանեկան նպաստի իրավունքի անապահովության սահմանային միավորը, նպաստի չափը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերանայում է ընտանիքների անապահովության գնահատման կարգը:

240. ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ <Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգը>: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը սոցիալական ոլորտում իրականացվող բարեփոխման հիմնական ծրագրերից է: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը միջոց է սոցիալական ծառայությունների որակը, մատչելիությունը բարձրացնելու, դեպի հաճախորդները կողմնորոշելու, դրանց գնահատման և

մշտադիտարկման, ինչպես նաև ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար: Համակարգի ներդրմամբ նախատեսվում է նաև դեպքի վարման միջոցով առավել նպատակային և կարիքներին համապատասխան աջակցության տրամադրում հաշմանդամներին:

241. 2012թ. ՀՀ կառավարությունը հաստատել է Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը, մարզային կենտրոնների ստեղծման փորձնական ծրագիրը, համաձայն որի՝ առաջին չորս կենտրոնները ստեղծվելու են Արարատի մարզում:

242. 2010-2012 թվականներին հաշմանդամներ կամ հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանեկան նպաստ և հրատապ օգնություն ստացած ընտանիքները թիվը բերված է ստորև.

**ա) Հաշմանդամ ընտանիքի անդամ ունեցող և ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը ըստ տարիների**

Ընտանիքներ	2010	2011	2012թ. հուլիսի 1-ի դրությամբ
Հաշմանդամության I խումբ ունեցող	3000	2609	3199
Հաշմանդամության II խումբ ունեցող	1405 0	1198 6	14518
Հաշմանդամության III խումբ ունեցող	7165	6105	7057
Մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխա ունեցող	3035	2685	2805

**բ) Հաշմանդամ ընտանիքի անդամ ունեցող, հրատապ դրամական օգնություն ստացող ընտանիքների թիվը ըստ տարիների**

Ընտանիքներ	2010	2011	2012 հուլիսի 1-ի դրությամբ
Հաշմանդամության I խումբ ունեցող	269	433	192
Հաշմանդամության II խումբ ունեցող	1413	2405	1774
Հաշմանդամության III խումբ ունեցող	590	1091	1329
Մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխա ունեցող	36	51	25

243. ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 4-ին հաստատած «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարությամբ» նախատեսված են դրույթներ մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամներին հասարակություն ինտեգրելու համար: Նշված ռազմավարությունը ներկայացվել է նաև Եվրախորհրդի հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող համապատասխան հանձնաժողով:

### **Հոդված 29. Մասնակցություն քաղաքական ու հասարակական կյանքին**

244. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական ու հասարակական կյանքում լիակատար մասնակցության ապահովման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանափակումներ չեն նախատեսվում:

245. Համաձայն ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման: Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով»: Իսկ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում նշվում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն»:

246. Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ ՀՀ քաղաքացիներն իրավունք ունեն մասնացելու երկրի կառավարմանը, քվեարկել համապետական հանրաքվեների, պետական կառավարման մարմինների ընտրության ժամանակ, ընտրել կամ ընտրվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ընտրովի մարմիններում:

247. Համաձայն ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»: Այդ ցույցերի անցկացումը օրենքով սահմանված կարգով պետք է համաձայնեցվի տեղական գործադիր իշխանությունների ներկայացուցիչների հետ:

248. «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված սահմանվում է, որ «Հաշմանդամներն ունեն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված նույն իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես այլ անձինք: Հաշմանդամների իրավունքները և պարտականությունները կարող են վերացվել կամ փոփոխվել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված դեպքերում և կարգով, եթե դրանց իրացումն անհնար է հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման պատճառով»:

Հաշմանդամների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ոտնահարման համար մեղավոր պաշտոնատար անձինք և քաղաքացիները ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով>:

249. Համաձայն ՀՀ Սահամանադրության 30-րդ հոդվածի՝ <Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաեւ անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք>:

250. Հաշմանդամների ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ ՀՀ ընտրական օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է. <ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով, պետությունը հավասար պայմաններ է ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար, ինչպես նաև ընտրողները՝ անկախ ազգությունից, ռասայից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն>:

Միակ սահմանափակումը կայանում է նրանում, որ ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

251. Վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող անձինք առավել մեծ ակտիվություն են ցուցաբերում պետական գործընթացներում և քաղաքացիական նախաձեռնությունների ժամանակ: Ինքնուրույնաբար կամ համակարգված, հասարակական կազմակերպությունների միջոցով հաշմանդամները ներգրավվում են ընտրական գործընթացներում: Ընտրական գործընթացներին հասարակական կազմակերպությունները ակտիվ մասնակցություն են ունենում իրականացնելով մասնակցային, դիտորդական, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց ընտրատեղամասեր փոխադրելու և ընտրական իրավունքի իրացման աշխատանքներ: Նպատակադրված աշխատանքներ են Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու ուղղությամբ՝ մասնավորապես թեքահարթակների կառուցմամբ: Թեև առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ, այնուամենայնիվ, հիմնախնդիր է մնում շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մուտքի մատչելիության ապահովումը դեպի պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն:

252. Ընտրական գործընթացում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ, որոնք ապահովում են Հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց ընտրական իրավունքը անարգել իրացնելու հնարավորություն: Այդպիսի միջոցառումներից են.

- Հատուկ ընտրական տեղամասեր են ստեղծվում քննչական մեկուսարաններում և պատժի կրման այլ վայրերում, իսկ առողջապահական հաստատություններում գտնվողների ընտրական

իրավունքի իրացումն ապահովելու նպատակով այդ հաստատություններ՝ շրջիկ քվեատուփերով և համապատասխան թվով քվեաթերթիկներով այցելում են մոտակա ընտրական տեղամասային հանձնաժողովի անդամները: Նույն կերպ են գործում նաև, այցելելով բնակության վայր այն հաշմանդամների համար, որոնք տեղաշարժվելու հնարավորություն չունեն: Տեղաշարժվելու հնարավորություն չունեցող հաշմանդամների և առողջապահական հաստատությունում գտնվողների ցուցակները կազմվում և տրամադրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովին վաղօրոք:

- Այն ընտրողները, ովքեր առողջական խնդիրների պատճառով չեն կարող ինքնուրույն քվեարկել, իրավունք ունեն տեղամասային ընտրական հանձնաժողովի թույլտվությամբ օգտվել այլ ընտրողի օգնությունից:
- Տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամների համար 2012թ-ի Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ առաջին անգամ կիրառվեց հատուկ նախշակադապար (տրաֆարետ), որը հնարավորություն է տալիս նման մարդկանց ինքնուրույն քվեարկել:

253. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով, համապատասխան պահանջներ են ներկայացվում նաև ընտրական տեղամասերի տարածքներին, մասնավորապես, այդ տարածքները պետք է մատչելի լինեն հաշմանդամներին, ունենան թեքահարթակ շենք՝ անարգել մուտք գործելու և դուրս գալու հնարավորություն: Հաշվի առնելով, որ որպես ընտրական տեղամասեր ընտրվում են հիմնականում կրթական հաստատությունները՝ դպրոցներ, քոլեջներ, նախակրթական հաստատություններ և այլն, կարելի է նշել, որ այդ շենքերը հիմնականում հարմարեցված են հաշմանդամների համար:

254. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պահանջ կա, որ յուրաքանչյուր ընտրական տեղամասում գաղտնի քվեարկության համար նախատեսված մեկ ընտրական քվեախցիկ ունենա համապատասխան լայնություն, որը կապահովի հաշմանդամի սայլակի ազատ մուտքը և ելքը այդ տեղ:

255. Հասարակական և քաղաքական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մասնակցությունն ապահովելու գործում կարևոր դերակատարում է վերապահվում հաշմանդամների անմիջական մասնակցությամբ ստեղծված կամ հաշմանդամների խնդրով զբաղվող հասարակական կազմակերպություններին: Իսրախուսելի է նաև նշված կազմակերպությունների միավորումը որևէ կազմակերպության, միության կամ դաշինքի շրջանակներում: Դրա լավագույն օրինակն է «Հաշմանդամ մարդկանց շահերի պաշտպանության (ՀՄՇՊ) դաշինքը», որի անդամ են հանդիսանում 16 հասարակական կազմակերպություններ և որն իր գործունեությունը ծավալում է ՀՀ 4 մարզերում: Ներկայումս ՀՀ-ում հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների թիվը հասնում 35 -ի:

256. Հասարակական կազմակերպությունները, դրանց միավորումները և միությունները ստեղծվում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության, նրանց համար հավասար իրավունքների և հնարավորությունների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այդ կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում բացահայտում և վերացնում են հաշմանդամների հավասար իրավունքների և հնարավորությունների իրացմանը խոչընդոտող երևույթները, մատուցում են հաշմանդամներին տարատեսակ ծառայություններ, օգնում նրանց՝ ներառվելու հասարակության կյանքում: Այդ հասարակական կազմակերպությունները իրենց գործառույթներով կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- իրազեկում իրականացնող հասարակական կազմակերպություններ, որոնք տեղեկատվություն են փոխանցում հաշմանդամներին, նրանց ընտանիքի անդամներին և ընդհանրապես հանրությանը, կապված հաշմանդամների իրավունքների, նրանց խնդիրների և կարիքների հետ,

- ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպություններ, որոնք հաշմանդամներին, նրանց ընտանիքի անդամներին մատուցում են տարատեսակ ծառայություններ՝ հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություններ, խնամքի ծառայություններ տանը կամ ցերեկային խնամքի կենտրոններում, կազմակերպում են մասնագիտական ուսուցում և վերապատրաստում,

- հասարակական կազմակերպություններ, որոնք նպաստում են հաշմանդամների ինքնադրսևորմանը, մասնավորապես՝ կազմակերպում են տարբեր խորհրդաժողովներ հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ, մշակութային, սպորտային, զվարճանքի ու հանգստի ապահովմանն ուղղված միջոցառումներ:

257. Հասարակական կազմակերպությունները պարբերաբար պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներգրավվում են հաշմանդամության հետ կապված հարցերի քննարկմանը և այդ հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը: Դրա լավագույն օրինակը մարզերում ստեղծված Հաշմանդամության հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովներն են, որոնց անդամ են նաև մարզերում հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունները:

258. Պետությունը աջակցում է հասարակական կազմակերպությունների ձևավորմանը, նրանց ակտիվ գործունեությանը, տրամադրելով նրանց որոշակի արտոնություններ, մասնավորապես.

- հասարակական կազմակերպություններին սոցիալական ֆոնդերից և պետական բյուջեից տրամադրվում է պետական պատվեր՝ որոշակի ծառայությունների մատուցման համար,

- հասարակական կազմակերպություններն ունեն արտոնություններ հարկային դաշտում ազատվում են եկամտահարկից և ավելացված արժեքի հարկից և այլ հարկերից, կախված իրենց կանոնադրական գործառույթներից, որոնք սահմանվում են հասարակական կազմակերպությունների մասին օրենքով,



- հասարակական կազմակերպություններին պետական բյուջեի հաշվին կարող է տրամադրվել ֆինանսական աջակցություն:

**Հոդված 30. Մասնակցություն մշակութային կյանքին, սպորտային և ազատ ժամանակի կազմակերպմանն ուղղված այլ միջոցառումներին**

259. Համաձայն ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»:  
Միաժամանակ, Սահմանադրության 33-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով»: Սահմանադրության 48-րդ հոդվածով նշվում է, որ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝ նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին, խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը, իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին, նպաստել գիտության և մշակույթի զարգացմանը, նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը»:

260. Հաշմանդամների մշակութային կյանքին մասնակցությունն իրականացվում է հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ, պետական և դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական աջակցության շնորհիվ:

261. 2010-2012 թվականներին իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, որոնք նպաստել են մշակութային կյանքում հաշմանդամների ներգրավմանը: Այդպիսի միջոցառումներից են.

- «Կույր և թույլ տեսնող անձանց տեղեկատվության ապահովման նպատակով գրադարաններում «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի իրականացում», որի շրջանակներում նշված ծրագիրը տեղակայվել է Ազգային գրադարանում, մանկական գրադարաններում, ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Տավուշի մարզային գրադարաններում: Ծրագիրը հնարավորություն է տալիս գրադարան հաճախող, տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց, օգտվել համակարգչային տեխնիկայից:
- Սակավ շարժունակ անձանց համար գրադարանային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովման նպատակով «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում: Այս ծրագիրն իրականացվել է ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում, որի արդյունքում տնային այցելությունների միջոցով հաշմանդամների համար իրականացվում է գրքերի գրադարանային սպասարկում:
- «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևանի, Վանաձորի, Գյումրու, Սպիտակի, Ստեփանավանի, Գավառի

մասնաճյուղերում արտադարձական գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագրերի իրականացում, որի շրջանակներում հաշմանդամ դարձած, հատուկ կարիքներով, սոցիալապես անապահով 614 երեխաների համար ապահովվել է մշակութային կրթություն հատուկ գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում: Կազմակերպվել է արվեստների և արհեստների անվճար ուսուցում:

- <Փարոս> կամերային երգչախմբի հյուրախաղերի մասնակցության աջակցության ապահովում, որի շրջանակներում հաշմանդամների <Ունիսոն> ՀԿ-ի <Փարոս> կամերային երգչախմբին ցուցաբերվել է աջակցություն Վիեննայում կազմակերպված հյուրախաղերին և Բրատիսլավայի հոգևոր երաժշտության մրցույթ-փառատոնին մասնակցելու նպատակով:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում հանրապետության տեսարժան վայրեր (ՀՀ Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզեր) :
- Աջակցություն <Հայաստանի խուլերի միության> ՀԿ-ի <Օվասիս> մնջախաղի թատրոնին՝ Ղրիմում կայացած մնջախաղի միջազգային <ЖИВИ> փառատոնին մասնակցելու համար:
- Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային նախաձեռնությունների իրականացման նպատակով մշակույթի նախարարության կողմից պարբերաբար աջակցության ցուցաբերում հաշմանդամների հասարակական կազմակերպություններին՝ համապատասխան դահլիճներ և սրահներ տրամադրելու գործում:

262. Ներկայումս հաշմանդամություն ունեցող անձանց հետ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում աշխատանքն ընթանում է 4 ուղղություններով՝

- տեսողությունից հաշմանդամություն ունեցողների հետ,
- լսողությունից հաշմանդամություն ունեցողների հետ,
- հենաշարժական համակարգի հաշմանդամություն ունեցողների հետ,
- մտավոր խանգարումներով հաշմանդամների հետ աշխատանք:

263. Հաշմանդամների ֆիզիկական դաստիարակության և սպորտով զբաղվելու հարցերով հիմնականում զբաղվում են հասարակական կազմակերպությունները: ՀՀ-ում գործում են հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող մի քանի տասնյակ հասարակական կազմակերպություններ: Իրենց գործունեությամբ հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում կայացած ու ճանաչված են <Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե>, <Խուլերի հայկական սպորտային կոմիտե>, <Հայկական հատուկ օլիմպիականներ>, <Հայաստանի կույրերի միավորում> հասարակական կազմակերպությունները:

264. Ներկայումս «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով իրականացվում է պետական աջակցություն հաշմանդամային սպորտով զբաղվող վերոնշյալ չորս հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

միջոցով օգնում են հենաշարժական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց ինքնադրսևորվելու և հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նրանց տրամադրվող 9.000.000 (ինը միլիոն) դրամը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացվող լրացուցիչ միջոցները վերոնշյալ հասարակական կազմակերպություններն օգտագործում են հանրապետությունում տարբեր տիպի մարզական միջոցառումների անցկացման, ինչպես նաև հաշմանդամային սպորտի միջազգային համապատասխան կազմակերպությունների կողմից անցկացվող պաշտոնական մրցումներին մասնակցելու համար (պարաօլիմպիկ խաղեր, սուրօլիմպիկ խաղեր, աշխարհի, Եվրոպայի առաջնություններ, վարկանիշային մրցաշարեր)»:

265. Վերոնշյալ ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

**ա) 2010 թվական.**

- «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից հաշմանդամների շրջանում կազմակերպվել են ՀՀ առաջնություններ 4 մարզաձևից՝ ֆուտզալ, ըմբշամարտ, վոլեյբոլ, շախմատ, որոնց մասնակցել է 205 մարդ:

- «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվել է շախմատի մրցաշար, որին մասնակցել է 23 մարդ:

- «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է հաշմանդամների միջազգային օրվան նվիրված մարզական խաղեր, որին մասնակցել է 120 մարդ: Միաժամանակ, նույն կազմակերպության 4 մարզիկներ մասնակցել են «Հատուկ Օլիմպիադաների» 2010 թվականի Եվրոպայի ամառային խաղերին, որը տեղի է ունեցել Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում:

- «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է հաշմանդամների մարզական փառատոն 6 մարզաձևից, որին մասնակցել է 60 մարզիկներ:

**բ) 2011 թվական.**

- «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է հաշմանդամների մասնակցությամբ ՀՀ առաջնություններ 5 մարզաձևից՝ շախմատ, հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, վոլեյբոլ, ֆուտզալ, որոնց մասնակցել են 241 մարզիկներ:

- «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվել է ՀՀ շախմատի մրցաշար, որին մասնակցել է 20 մարդ:

- «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է ֆուտբոլի առաջնություն, որին մասնակցել են 64 մարզիկներ: Ապահովվել է նաև Հունաստանի մայրաքաղաք Աթենքում «Հատուկ Օլիմպիադաների» աշխարհի ամառային խաղերին 4

մարզիկի մասնակցությունը: Այդ մրցումներին ՀՀ մարզիկները նվաճել են աթլետիկա մարզաձևից 1 ոսկե, 1 արծաթե, 2 բրոնզե և լող մարզաձևից 1 ոսկե, 2 արծաթե մեդալ:

- «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է հաշմանդամների մարզական փառատոն 6 մարզաձևից, որոնց մասնակցել են 80 մարզիկներ:

- «2011 թվականին Երևանում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնության անցկացում» ծրագրով 13.747.000 (տասներեք միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար) դրամ պետական աջակցություն է տրամադրվել «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությանը՝ Երևանում ըմբշամարտի խուլերի Եվրոպայի առաջնության կազմակերպման և անցկացման համար: Հայաստանից մասնակցել է 6 մեծահասակ և 8 պատանի մարզիկներ, ընդամենը՝ 14 մարզիկներ: Մեծահասակները նվաճել են 1 ոսկե, 1 արծաթե և 3 բրոնզե, պատանիները 2 ոսկե, 5 արծաթե մեդալ:

- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 1.682.220 (մեկ միլիոն վեց հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր քսան) դրամ է հատկացվել «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը՝ Արաբական Միացյալ Էմիրություններում անցկացված հաշմանդամային ծանրամարտի (պաուերլիֆթինգ) առաջնությանը 2 մարզիկի մասնակցությունն ապահովելու համար: Այդ մրցումներին նվաճվել է 1 արծաթե մեդալ և ձեռք է բերվել 2012 թվականի Լոնդոնի պարալիմպիկ խաղերի մասնակցության վարկանիշ:

- Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը տարբեր կազմակերպությունների հովանավորչական աջակցությամբ կազմակերպել և անց է կացրել նաև հաշմանդամային անվասայլակներով վազքարշավ՝ Հանրապետության հրապարակ - Եռաբլուր երթուղով, որին մասնակցել են ավելի քան 30 մարդ:

#### **գ) 2012 թվական**

- «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է ՀՀ առաջնություններ 3 մարզաձևից՝ շախմատ, հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, որոնց մասնակցել են 118 մարզիկներ:

- «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է «Հատուկ օլիմպիադաներ»-ի «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի առաջնություն, որին մասնակցել են 48 մարզիկներ:

- «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է հաշմանդամների մարզական փառատոն 6 մարզաձևից, որին մասնակցել են 96 մարզիկներ:

- «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության կողմից անցկացվել է կույր շախմատիստների

տղամարդկանց ՀՀ անհատական առաջնությունը, որին մասնակցել է 12 մարդ:

- Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը տարբեր կազմակերպությունների հովանավորչական աջակցությամբ կազմակերպել և անց է կացրել «Ուրախ մեկնարկներ» ընտանեկան մրցումներ նվիրված խուլերի միջազգային օրվան (սեպտեմբերի 29), որին մասնակցել է 30 մարդ (10 ընտանիք X 3 անձ):

- Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը տարբեր կազմակերպությունների հովանավորչական աջակցությամբ կազմակերպել և անց է կացրել անվասայլակներով հաշմանդամների վազքարշավ՝ Հանրապետության հրապարակ - Եռաբլուր երթուղով, որին մասնակցել են ավելի քան 30 մարդ:

- Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Լոնդոնում կայացած 14-րդ ամառային պարաօլիմպիկ խաղերին Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է 2 մարզիկ, որոնց մասնակցությունն ապահովելու նպատակով «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը որպես նվիրաբերություն տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը 2012 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հատկացրել է 5.853.000 (հինգ միլիոն ութ հարյուր հիսուներեք հազար) դրամ:

- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությանը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացած խուլերի ըմբշամարտի աշխարհի 3-րդ առաջնությանը մասնակցելու համար հատկացվել է 6.380.600 (վեց միլիոն երեք հարյուր ութսուն հազար վեց հարյուր) դրամ: Հունա-հռոմեական ոճում հանդես եկող 5 մարզիկներից երեքն արժանացել են մրցանակների՝ նվաճելով 1 ոսկե և 2 արծաթե մեդալ:

266. Ամփոփելով հաշվետու ժամանակաշրջանի միջոցառումները պետք է նկատել, որ 2010, 2011 և 2012 թվականների ընթացքում տարբեր մարզական միջոցառումներին մասնակցել են համապատասխանաբար՝ 412, 455 և 341 մարզիկներ: Ընդհանուր առմամբ՝ 1208 մարդ:»:

267. Բացի զուտ սպորտային միջոցառումներից Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը տարբեր կազմակերպությունների հովանավորչական աջակցությամբ 2011 և 2012 թվականների ընթացքում կազմակերպել և անց է կացրել հաշմանդամային սպորտի հիմնախնդիրներին նվիրված սեմինար-խորհրդակցություններ, որոնց մասնակցել են շահագրգիռ նախարարությունների, ինչպես նաև հաշմանդամային սպորտով զբաղվող

հասարակական կազմակերպությունների համապատասխանաբար 21 և 12 ներկայացուցիչներ:»:

268. Հաշմանդամ երեխաների համար ամառային շրջանում կազմակերպվում են մանկական առողջարանային ճամբարներ, որտեղ հաշմանդամ երեխաներն անցնում են վերականգնողական բուժում, զբաղվում են տարբեր խմբակներում (ձեռագործ, նկարչություն, բնապահպանություն, տուրիզմ և այլն), մասնակցում մարզական միջոցառումների: Նման ճամբարների աշխատանքների կազմակերպմանը ակտիվորեն մասնակցում են հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև տարածքային սոցիալական ծառայությունների և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունները:

269. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. օգոստոսի 9-ի N1055-Ն որոշման N1 հավելվածի 68-րդ կետի համապատասխան՝ ՀՀ կառավարությունը 2012 թ. նոյեմբերին հաստատել է «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը», համաձայն որի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման նպատակն է նրանց մշակութային կյանքին մասնակցության և համապատասխան մշակութային կրթություն ստանալու պայմանների ապահովումը:

Նվաճ որոշման մեջ որպես հիմնական խնդիր սահմանվում է հաշմանդամ երեխաների գեղարվեստական կրթության, գեղագիտական դաստիարակության վրա մեծ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը, ինչը կօգնի նրանց ինտեգրվել հասարակություն, ձեռք բերել մասնագիտություն և ինքնադրսևորվել կյանքում:

### **Մաս III. Հաշմանդամություն ունեցող կանայք և երեխաներ**

#### **Հոդված 6. Հաշմանդամ կանայք**

270. Համաձայն վիճակագրության, 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված 182379 հաշմանդամներից 84981-ը (46.6 %-ը) կանայք են, ընդ որում առաջին խմբի հաշմանդամ է 4542 կին (41.1%), երկրորդ խմբի հաշմանդամ 38605 կին (44.7%), երրորդ խմբի հաշմանդամ 39263 կին (51.1%) :

271. ՀՀ-ում կնոջ և տղամարդու իրավունքների հավասարությունն ապահովվում է Սահմանադրության դրույթներով: Այդ հավասարությունը տարածվում է հասարակական-քաղաքական ոլորտում, մշակութային գործունեության, կրթության, աշխատանքի և այլ բնագավառներում:

272. Կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման վերաբերյալ համապատասխան դրույթներ են ներառված նաև կենսաթոշակային համակարգի վերաբերյալ օրենսդրությունում:

Մասնավորապես՝ 2011թ. հավասարեցվեց կանանց և տղամարդկանց կենսաթոշակային տարիքը (63 տարեկան), վերացվել են երեխայի խնամքի հետ կապված կանանց տրամադրվող կենսաթոշակային արտոնությունները (կենսաթոշակային տարիքից շուտ կենսաթոշակի անցում): Որոշակի քայլեր են կատարվել նաև աշխատանքային հարաբերություններում կանանց և տղամարդկանց հավասարության ապահովմանը, հատկապես մայրության պահպանության, աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հարցերում:

273. Չնայած կանանց և տղամարդկանց հավասարությանն ուղղված քայլերին, աշխատանքային հարաբերություններում շարունակում են գործել կանանց տրամադրվող մի շարք արտոնություններ: Այսպես. ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվում է, որ հղի կանանց և մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց արգելվում է ներգրավել աշխատանքում տոնական և հանգստի օրերին, գիշերային և հերթափոխային աշխատանքներում, ինչպես նաև արգելվում է այդ կանանց ուղարկել գործուղումների առանց նրանց համաձայնության: Միաժամանակ, հղի և մինչև 3 տարեկան երեխա խնամող կանանց համար նախատեսվում է լրացուցիչ ընդմիջումներ կամ կրճատված աշխատաժամանակ:

274. Աշխատանքային օրենսգրքով որոշակի արտոնություններ են նախատեսված նաև այն աշխատող կանաց համար, ովքեր խնամում են հաշմանդամ կամ հաշմանդամ երեխա: Նման կանանց տրամադրվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ (տարվա ընթացքում խնամքի որոշակի թվով օրերի համար), կախված այն հանգամանքից, թե խնամքը ինչ պայմաններում է իրականացվում (ամբուլատոր, ստացիոնար կամ առողջարանային բուժում):

275. Հասարակության գործունեության բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց փաստացի հավասարությունն ապահովելու, խտրականությունն ըստ սեռերի բացառելու նպատակով ՀՀ-ում մշակվում է <<Այաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և հավասար իրավունքների մասին> ՀՀ օրենքի նախագիծը:

276. Հաշվի առնելով, որ թրաֆիկինգի հիմնական զոհեր են դառնում կանայք, թրաֆիկինգի զոհերի շահերի և իրավունքների պաշտպանության, թրաֆիկինգը կանխարգելելու նպատակով 2011թ. փոփոխություններ են կատարվել <<< քաղաքացիական > և <<< քրեական > օրենսգրքերում:

Խորանում է այս բնագավառում նաև միջազգային համագործակցությունը:

ՀՀ-ի կողմից վավերացվել են կանանց և գենդերային հիմնախնդիրներին վերաբերվող տարբեր միջազգային կոնվենցիաներ և իրավական ակտեր.

-1993թ. <Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին> ՄԱԿ-ի կոնվենցիա,

- 1995 թ. Պեկինյան գործողությունների ծրագիր

- 2000 թ. Հազարամյակի զարգացման նպատակներ

- 2008 թ. <Կանանց քաղաքական իրավունքների մասին > ՄԱԿ-ի կոնվենցիա:

277. Հաշմանդամ կանայք, երեխաները և բազմահաշմանդամություն ունեցող անձիք գտնվում են պետության առավել մեծ ուշադրության կենտրոնում: Դրա

ապացույցն է <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարության> (հաստատված ՀՀ կառավարության 2005թվականի նոյեմբերի 3-ի թիվ 44 արձանագրությամբ) <Ռազմավարության նպատակները և հիմնական ուղղությունները> բաժնում ամրագրված հետևյալ դրույթը. <Ռազմավարությունը արտացոլում է հաշմանդամների մեջ առավել ուշադրություն պահանջող խմբերի նկատմամբ հատուկ մոտեցում (հաշմանդամ երեխաներ, հաշմանդամ կանայք, բազմահաշմանդամություն ունեցող անձիք և այլն):>:

278. ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանվող մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները, կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններն ու հավասար իրավունքները, երեխայի իրավունքների պաշտպանության սկզբունքները վերաբերվում են բոլոր անձանց, անկախ այն հանգամանքից, նրանք հաշմանդամ են, թե ոչ: Ուստի հաշմանդամ կանայք և աղջիկներն օգտվում են մարդու համար սահմանված հիմնարար իրավունքներից և ազատություններից բոլոր այլ անձանց հետ հավասարապես:

### **31. Հոդված 7. Հաշմանդամ երեխաներ**

279. Համաձայն վիճակագրության՝ 2012թ-ի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված 182379 հաշմանդամներից 8156-ը (4,5%) հաշմանդամ երեխաներ են: Նրանցից 5585-ը (68,5%) տղաներ են, իսկ 2571-ը՝ (31,5%) աղջիկներ:

280. ՀՀ ընտանեկան օրենսգրքի առաջին հոդվածով սահմանվում է. <Ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը ՀՀ-ում հասարակության ու պետության հովանավորության և պաշտպանության ներքո են: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը>: Այս դրույթը վերաբերվում է բոլոր, այդ թվում նաև հաշմանդամ երեխաներին, անկախ երեխայի սեռից:

281. Մանկության պաշտպանությունը հանդիսանում է երկրի ռազմավարական առաջնահերթություններից մեկը և նպատակ ունի ապահովելու երեխայի կյանքի, առողջության պաշտպանության, կրթության, սոցիալական պաշտպանության, բազմակողմանի զարգացման իրավունքի իրացումը: Պետական քաղաքականությունը այդ ոլորտում բացառում է խտրականության դրսևորումը հաշմանդամ և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ: Պետությունն իր ուժերը ուղղորդում է մանկության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացմանը, մշակելով համապատասխան օրենսդրական դաշտ (<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենք, <ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենք, <ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին> ՀՀ օրենքի նախագիծ և այլն), ձեռնարկելով տնտեսական, կազմակերպչական, սոցիալամշակույթային, կրթական, դաստիարակչական, սպորտային և այլ միջոցառումներ: Պետությունը միաժամանակ ձգտում է



համապատասխանեցնել գործող օրենսդրությունը միջազգային նորմերի պահանջներին՝ ապահովելով երեխաների ազատ զարգացումը:

282. Պետական բյուջեի հաշվին ապահովվում և երաշխավորվում է հաշմանդամություն ունեցող երեխաների անվճար բուժօգնություն, սպասարկում, դեղորայքով ապահովում, ինչպես նաև երեխաների անհատական կարիքներին համապատասխան մատչելի կրթություն: Նշված երաշխիքները հավասարապես վերաբերվում են ինչպես տղա, այնպես էլ աղջիկ հաշմանդամներին:

283. Հաշմանդամություն ունեցող տղաները և աղջիկներն իրենց վերաբերվող հարցերի մասին ազատորեն կարող են արտահայտել իրենց կարծիքը և ստանալ իրենց հաշմանդամությանը և տարիքին համապատասխան աջակցություն:

Մասնավորապես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածով սահմանվում է սեփական կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը, համաձայն որի՝ «Երեխան իրավունք ունի իր շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատական և այլ մարմիններում: Տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որեւէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ»:

284. Կարևորվում է հաշմանդամ երեխաների կրթության իրավունքը: Այդ տեսանկյունից «Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը և «Կրթության մասին» ՀՀ օրենքը նախանշում են այն հիմնական սկզբունքները, որոնք անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ կարիք ունեցող անձանց կրթությունն արդյունավետ իրականացնելու համար: Կարևոր փոփոխություն էր այս ոլորտում ներառական կրթության կիրառումը նախ փորձնական մի քանի դպրոցներում, հետո այս սկզբունքը ներառվեց կրթության մասին վերը նշված օրենքներում և տարածում ստացավ հանրապետությունում:

285. Ներառական կրթությունը սահմանվում է որպես «Կրթության առանձնահատուկ պայմանանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»:  
Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ պետությունը 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ երեխաների համար ապահովում է անվճար մասնագիտական կրթության ստացումը միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում, եթե նրանք

բավարարել են այդ հաստատություններ ընդունվելու համար նվազագույն պահանջները:

286. <Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ <կրթության պետական համակարգի մարմինները սոցիալական ապահովության և առողջապահության մարմինների հետ համատեղ հաշմանդամի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան ապահովում են հաշմանդամ երեխաների նախադպրոցական դաստիարակությունը, հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը>:

287. 2012 թվականին ՀՀ ԱՍՀՆ խնդրանքով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ՝ Մարքեթինգի հայկական ասոցիացիայի կողմից իրականացվել է Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիության գործընթացի հետազոտությունը: Հետազոտությունը պարունակում է տվյալներ կրթության բոլոր մակարդակներում հաշմանդամ երեխաների ներգրավվածության, ինչպես նաև առողջապահական, սոցիալական և այլ համայնքային ծառայություններից երեխաների օգտվելու հնարավորությունների վերաբերյալ: Նշված հետազոտության արդյունքները հիմք կհանդիսանան համապատասխան նպատակային ծրագրեր մշակելու համար:

288. Պետությունն առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին՝ այդ թվում հաշմանդամ երեխաներին, որոնք դաստիարակվել են երեխաների շուրջօրյա խնամքի կենտրոններում կամ խնամատար ընտանիքներում, 18 տարեկանը լրանալուց հետո (չափահաս դառնալուց հետո) ապահովում է անվճար բնակտարածքով:

289. Պետությունն իր մշտական ուշադրության կենտրոնում է պահում այդ երեխաների հետագա մասնագիտական ուսուցումը, աշխատանքային գործունեությունը, նրանց հասարակությունում լիարժեք ինտեգրվելու գործընթացը:

290. Ձգտելով ապահովել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային պահանջները, ՀՀ-ի կողմից վավերացվել են երեխաների հիմնախնդիրներին վերաբերվող տարբեր միջազգային կոնվենցիաներ.

- Ծնողական պարտականությունների և երեխաների պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին,
- Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին,
- Երեխայի իրավունքների մասին,
- Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին,
- Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին:

#### **Մաս IV. Հատուկ պարտականություններ**

##### **Հոդված 31. Վիճակագրություն և տվյալների հավաքագրում**

291. Համաձայն «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ «Պետությունն ապահովում է հաշմանդամների տեղեկություններ ստանալու ազատությունը»:

292. Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման վերաբերյալ տեղեկատվությունը կուտակվում է տվյալների շտեմարանի տեսքով: Այդ շտեմարանները պարունակում են հետևյալ տվյալները.

- տեղեկատվություն վերականգնողական ծառայություններ առաջարկող կազմակերպությունների վերաբերյալ,
- տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ, կապված հաշմանդամության բնույթի և պատճառների, հաշմանդամների սեռի, տարիքի և այլ անձնական տվյալների հետ,
- տեղեկատվություն հաշմանդամների կրթական և մասնագիտական մակարդակի վերաբերյալ,
- տեղեկատվություն հաշմանդամ երեխաների վերաբերյալ, կապված սեռի, տարիքի և այլ անձնական տվյալների հետ,
- տեղեկատվություն հաշմանդամների ընտանիքի անդամների վերաբերյալ, կապված ընտանիքի անդամների սեռի, տարիքի, ընտանիքի եկամուտների, պահանջարկի, հաշմանդամների կարիքների բավարարման հնարավորությունների և այլ տվյալների հետ,
- տեղեկատվություն հաշմանդամին անհրաժեշտ պրոթեզաօրթոպեդիկ և տեխնիկական միջոցների, նրա կողմից օգտագործվող դեղորայքի, պահանջվող վերականգնողական ծառայությունների և առողջարանային բուժման վերաբերյալ:

293. Նման շտեմարանը հնարավորություն է տալիս ամբողջացնել հաշմանդամության հիմնախնդիրների լուծման համար երկրում առկա ռեսուրսները և ըստ անհրաժեշտության դրանք օգտագործել նախանշված նպատակների համար: 294. Միաժամանակ ձևավորվում են շտեմարաններ, որտեղ կուտակվում են հաշմանդամների անհատական տվյալներ (անուն, ազգանուն, հասցե, հիվանդության տեսակը, կարիքները, ընտանիքի անդամների տվյալները, ընտանիքի հնարավորությունները և այլն): Այս շտեմարանները հնարավորություն են տալիս անհատապես վերահսկելու յուրաքանչյուր հաշմանդամի վիճակը, նրա վերականգնման ընթացքը:

295. Նշված տեղեկատվական շտեմարանների վարման, դրանց հիման վրա վերլուծությունների կատարման պարտականությունը դրված է ՀՀ ԱՍՀՆ վրա: Նախատեսվում է այդ շտեմարանների հետագա կատարելագործում նրանցում նոր տեղեկությունների կուտակման, շտեմարանների սպասարկման ծրագրային միջոցների հետագա կատարելագործման շնորհիվ: Սակայն այն կարիք ունի լրամշակման, քանի որ չի համապատասխանում ISF-ի սկզբունքներին:

296. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական վիճակագրության վարումը, այսինքն, հանրապետության սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության և նրա կենսագործունեության ոլորտների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման,

մշակման, կուտակման, ամփոփման, պահպանման, ինչպես նաև վերլուծության, փոխանակման և վիճակագրական տեղեկատվության տրամադրման (հրապարակման) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <Պետական վիճակագրության մասին> ՀՀ օրենքով, որը ամբողջությամբ համապատասխանում է վիճակագրության բնագավառում ընդունված միջազգային ստանդարտներին և սկզբունքներին՝ մասնավորապես ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներին, որոնք ընդունվել են 1992թ. Ժնևում կայացած ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում և 1994թ. Նյու-Յորքում կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի նիստում:

297. <Պաշտոնական վիճակագրության անկյունաքարը անհատական տվյալների գաղտնիության ապահովումն է, որը բխում է <Պետական վիճակագրության մասին> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջից, համաձայն որի՝ վիճակագրական տվյալները համարվում են գաղտնի (վիճակագրական գաղտնիք), եթե դրանց միջոցով հնարավոր է ուղղակի կամ անուղղակի ձևով բացահայտել (նույնականացնել, իդենտիֆիկացնել) վիճակագրական տեղեկություն տրամադրողին՝ ձեռք բերել, անհատական (անվանական) տեղեկություններ: Տվյալները, որոնք հասանելի են հանրությանն այլ աղբյուրներից, վիճակագրական գաղտնիք չեն համարվում>:

298. Վիճակագրական գաղտնիք համարվող տվյալները, առանց դրանց ներկայացնողի համաձայնության, հրապարակման կամ այլ ձևով տարածման ենթակա չեն: Նշված դրույթների ամրագրումը բխում է ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության <գաղտնիության> հիմնարար սկզբունքից, համաձայն որի՝ վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից վիճակագրական նպատակներով հավաքագրված անվանական տեղեկությունները, անկախ այն բանից, դրանք վերաբերում են ֆիզիկական թե իրավաբանական անձանց, գաղտնի են և կարող են օգտագործվել բացառապես վիճակագրական նպատակներով:

299. ՀՀ-ում հաշմանդամների վերաբերյալ վիճակագրությունը խարսխվում է վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ռեսուրսների առկայության դեպքում իրականացվում են նաև տնային տնտեսությունների հետազոտություններ: Հաշմանդամների վերաբերյալ հավաքագրվող տեղեկությունները մասնավորապես վերաբերում են նրանց թվին՝ ըստ սեռատարիքային կազմի, հաշմանդամության խմբերի, հաշմանդամությանն ըստ պատճառների և ըստ հիվանդությունների, ինչպես նաև հաշմանդամներին ցուցաբերվող վերականգնողական օգնությանն՝ ըստ տեսակների:

300. Հաշմանդամություն ունեցող անձանց մասին ամփոփ տեղեկատվությունը

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվում է <Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը>

տեղեկատվական ամսական զեկույցներում, <Հայաստանի վիճակագրական տարեգիրք>, <Հայաստանի կանայք և տղամարդիկ> և <Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը> ամենամյա վիճակագրական

ժողովածուներում: Հրապարակումներն առկա են ՀՀ ազգային վիճակագրական ծաայության գրադարանում, տեղակայված են [www.armstat.am](http://www.armstat.am) կայքէջում և հասանելի ու մատչելի են բոլորի համար:

301. Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալներն ըստ տարիների բերված են Հավելված 1-ում;

### **Հոդված 32. Միջազգային համագործակցություն**

302. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սերտորեն համագործակցում է ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների հետ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ILO), ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ (UNDESA), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), Եվրոպայի Խորհուրդ (CoE), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID), Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալություն (SIDA), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA):

303. Համագործակցությունը հիմնականում իրականացվում է որորտի բարեփոխումների իրագործման, քաղաքականության և ծրագրերի մշակման, մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, հանրային կրթության և իրազեկման, հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների որակի և հասանելիության բարելավման, հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն և աշխատաշուկա ինտեգրելու ուղղությամբ:

304. Հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները մշտապես մասնակցում են ծրագրերի և իրավական ակտերի մշակման գործընթացներին:

Ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը և ծրագրերը մշակվում են միջազգային լավագույն փորձի հիման վրա:

305. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

- <Հաշմանդամություն ունեցող անձինք Հայաստանում որպես խոստումնալից աշխատուժ> եռամյա ծրագիրն իրականացվում է 2010 թվականից՝ Նիդերլանդների Թագավորության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ, <Հյուսան Դիգնիթի ընդ Փիս> (HDP) բարեգործական հիմնադրամի, նիդերլանդական <Ակտիվա Ինթերնեշնլ> կազմակերպության կողմից Երևանի Էրեբունի-Նուբարաշեն համայնքում և Հրազդան քաղաքում:
- 2012 թ. մեկնարկել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության <Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով> եռամյա ծրագիրը, որն իրականացվում է <Սեյվ դը Չիլդրեն> կազմակերպության կողմից: Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց համար խթանել զբաղվածության հավասար հնարավորությունները և աշխատանքի մատչելիությունը՝ որպես մարդու

հիմնարար իրավունք: Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների փաթեթի հասանելիության և մատչելիության բարձրացումը, կրթական և աշխատանքային ծառայությունների մատուցման որակի բարելավումը, զբաղվածության և աշխատանքային իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացումը, ոլորտում վարվող քաղաքականության բարելավումը:

- Աշխատանքի միջազգային կազմակերպությունն իրականացնում է <Արժանապատիվ աշխատանք> ծրագիրը, որը նախատեսված է 2007-2012թթ. համար: Ծրագրով նախանշված գերակայություններն են՝
  - Զբաղվածության քաղաքականության կատարելագործում,
  - Սոցիալական գործընկերության ամրապնդում,
  - Սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործում:

Ծրագրի շրջանակներում անդրադարձ է կատարվում նաև հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի պայմանների հարմարեցման խնդիրներին:

- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացվում է 2012-2013թթ. համար նախատեսված <Երեխայի իրավունքների մոնիթորինգ և սոցիալական քաղաքականություն> ծրագիրը, որի նպատակն է աջակցել Հայաստանում երեխաների՝ այդ թվում հաշմանդամ երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի զարգացմանը, ինչպես նաև մատուցվող սոցիալական ծառայությունների որակի և հասանելիության բարձրացմանը:

306. Եվրոպայի Խորհրդին Հայաստանն անդամակցում է 2001թվականից, իսկ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացված է Եվրախորհրդի հետևյալ կոմիտեներում՝

- Եվրոպական սոցիալական խարտիայի և Եվրոպական սոցիալական օրենսգրքի կոմիտե,
- Սոցիալական համախմբվածության կոմիտե,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե,
- Սոցիալական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության համակարգման հարցերով աշխատանքային խումբ:

307. Հաշմանդամության և սոցիալական պաշտպանության ոլորտում միջազգային գործունեությունն արտացոլված է հետևյալ փաստաթղթերում.

**ա) Միջկառավարական համաձայնագրեր**

- ՀՀ կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների ժամանակավոր աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին, 19 հուլիսի 2000թ.
- ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում սոցիալական և առողջապահական կարիքները բավարարելու բնագավառում համագործակցության մասին, 16 օգոստոսի 2000թ.
- ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև Վրաստանի տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Վրաստանի

քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին, 3 դեկտեմբերի 1993թ.

- ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին, 19 հուլիսի 1994թ.

- ՀՀ կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին, 17 հունիսի 1995թ.

#### **բ) Միջգերատեսչական պայմանագրեր**

- Իրանի Իսլամական Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, 13 մարտի 1992թ.

- Կենսաթոշակային ապահովության բնագավառում Ռուսաստանի Դաշնության բնակչության սոցիալական պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության համագործակցության մասին վարչական համաձայնագիր, 20 հոկտեմբերի 1993թ.

#### **գ) Անկախ պետությունների համադաշնության համաձայնագրեր**

- ԱՊՀ անդամ պետությունների միջև կենսաթոշակային ապահովության բնագավառում քաղաքացիների երաշխիքների վերաբերյալ, 13 մարտի 1992թ.

- ԱՊՀ անդամ պետությունների միջև զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին, 14 փետրվարի 1992թ.

- ԱՊՀ անդամ պետությունների միջև մասնագիտական հիվանդությունների կամ աշխատանքային պարտականությունները կատարելիս առողջությանը պատճառված այլ վնասի փոխհատուցման իրավունքները փոխադարձ ճանաչելու մասին, 9 սեպտեմբերի 1994թ.

- Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց համար արտոնյալ երթևեկության իրավունքների փոխադարձ ճանաչման մասին, 12 մարտի 1993թ.

- Աշխատանքային միգրացիայի և աշխատավոր միգրանտների սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության մասին, 15 ապրիլի 1994թ.

- Հաշմանդամների և հաշմանդամության հիմնահարցերի լուծման մասին, 12 ապրիլի 1996թ.

- Հաշմանդամների և հաշմանդամության խնդիրների լուծման ոլորտում համագործակցության մասին, 1999թ.

#### **դ) Պայմանագրեր միջազգային կազմակերպությունների հետ**

- ՀՀ կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամի միջև, 4 օգոստոսի 1998թ.

- ՀՀ կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության Համաշխարհային պարենի ծրագրի միջև, 9 հունիսի 2000թ.
- Զարգացման վարկի համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև, 30 հուլիսի 2004թ.
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի միջև. Գենդերային քաղաքականության ծրագիր Հարավային Կովկասում. Վրաստան և Հայաստան, 27 փետրվարի 2004թ.
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի միջև բնակչության զարգացման ռազմավարության իրագործման վերաբերյալ, 16 մայիսի 2005թ.
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների /գործատուների/ միության, Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի և Աշխատանքի միջազգային կազմակերպության միջև տեխնիկական համագործակցության ծրագրի մասին, 22 նոյեմբերի 2004թ.

**ե) ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային փաստաթղթեր.**

- Եվրոպայի Խորհրդի Եվրոպական վերանայված սոցիալական խարտիա, 21 հունվարի 2004թ. .
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 22 հուլիսի 1993թ.
- Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիա, 16 օգոստոսի 1994թ.
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 13 հոկտեմբերի 1993թ.
- Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 23 սեպտեմբերի 1993թ.
- Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն, 23 սեպտեմբերի 1993թ.
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 13 դեկտեմբերի 1993թ.

**զ) Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաները.**

- Հավասար վարձատրության մասին կոնվենցիա, N 100, 21.12.1993թ.
- Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին կոնվենցիա, N 111, 21.12.1993 թ.
- Զբաղվածության բնագավառում քաղաքականության մասին կոնվենցիա, N 122, 21.12.1993 թ.
- Աշխատողների ներկայացուցիչների մասին կոնվենցիա, N135, 21.12.1993
- Պետական ծառայության մեջ աշխատանքային հարաբերությունների մասին կոնվենցիա, N151, 21.12.1993 թ.
- Խոշոր արդյունաբերական վթարների կանխարգելման մասին կոնվենցիա, N174, 06.11.1995 թ.
- Հանքահորերում աշխատանքի հիգիենայի և անվտանգության մասին կոնվենցիա, N 176, 12.10.1998 թ.
- Կոլեկտիվ բանակցություններ կազմակերպելու և վարելու իրավունքի սկզբունքների կիրառման մասին կոնվենցիա, N 98, 24.09.2003
- Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա, N 105, 25.10.2004



- Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին կոնվենցիա, N 17, 25.10.2004թ.
- Արդյունաբերության և առևտրի մեջ Աշխատանքի տեսչության մասին կոնվենցիա, N81, 25.10.2004թ.
- Աշխատավարձի պաշտպանության մասին կոնվենցիա, N 95, 25.10.2004
- Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա, N 29, 25.10.2004թ.
- Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա, N 131, 13.12.2004թ.
- Աշխատանքի միջազգային նորմերի կատարմանն աջակցելու համար եռակողմ խորհրդակցությունների մասին կոնվենցիա, N 144, 13.12.2004
- Կոլեկտիվ բանակցություններին աջակցելու մասին կոնվենցիա, N 154, 13.12.2004թ.
- Աշխատանքի վիճակագրության մասին կոնվենցիա, N 160, 13.12.2004թ.
- Աշխատանքի հարցերի կարգավորման դերի, գործառույթների, կազմակերպման մասին կոնվենցիա, N 150, 28.02.2005թ.
- Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին կոնվենցիա, N 173, 28.02.2005թ.
- Մասնագիտական հիվանդությունների դեպքում աշխատողներին փոխհատուցման մասին կոնվենցիա, N 18, 28.02.2005թ.
- Պետական մարմինների կողմից կնքվող պայմանագրերում աշխատանքային հողվածների մասին կոնվենցիա, N 94, 28.02.2005թ.
- Միավորման ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին կոնվենցիա, N 87, 22.03.2005թ.
- Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիա, N 182, 22.03.2005թ.
- Իրավահավասարության մասին /սոցիալական ապահովության ոլորտում/ կոնվենցիա, N 118, 03.10.2005թ.
- Վճարովի արձակուրդների մասին /վերանայված/ կոնվենցիա, N 132, 03.10.2005թ.
- Ամենշաբաթյա հանգստի մասին /արդյունաբերության ոլորտում/ կոնվենցիա, N 14, 03.10.2005թ.
- Միգրանտ աշխատողների մասին /լրացուցիչ դրույթներ/ կոնվենցիա, N 143, 03.10.2005թ.
- Նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին կոնվենցիա, N 26, 03.10.2005թ.
- Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա, N 138, 03.10.2005թ.
- Զբաղվածության համար միգրացիայի մասին /վերանայված/ կոնվենցիա, N 97, 03.10.2005թ.

### **Հոդված 33. Իրականացում և մոնիթորինգ ազգային մակարդակում**

308. Սոցիալական պաշտպանության, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված հիմնախնդիրների իրավական կարգավորումն իրականացվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ համապատասխան

օրենքների, ՀՀ Կառավարության կողմից՝ համապատասխան որոշումների, ՀՀ Նախագահի կողմից՝ համապատասխան հրամանագրերի և ՀՀ ԱԱՀն կողմից՝ համապատասխան գերատեսչական ակտերի միջոցով: Իրավական կարգավորման գործընթացում կարևոր դերակատարում ունեն նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց կողմից ընդունված որոշումներով:

309. Ազգային ժողովում սոցիալական հարցերով հիմնականում զբաղվում են հետևյալ հանձնաժողովները. առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով, գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով:

ՀՀ Կառավարությունում հաշմանդամների հիմնախնդիրների համակարգումն իրականացնում է ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչությունը:

310. ՀՀ կառավարության աշխատակազմին առընթեր գործում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը>, որի հիմնական գործառույթներն են.

ա) ծրագրերը բարեգործական որակելը, ծրագրի՝ բարեգործական որակումը փոփոխելը (չեղյալ ճանաչելը, կասեցնելը), իսկ եթե նման որակումը բխում է այլ իրավական ակտից, ապա այդ որակումը փոփոխելու մասին միջնորդություն ներկայացնելը տվյալ իրավական ակտն ընդունված մարմին:

բ) բարեգործական ծրագրերի հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների (այսուհետ՝ հարակից գործարքներ) շրջանակը որոշելը: Բարեգործական ծրագրերի վարչական ռեգիստրը վարելը, ներառյալ՝ բարեգործական ծրագրերը գրանցելը, բարեգործական աջակցության և կամավորների կատարած աշխատանքի հաշվառումը վարելը:

գ) բարեգործական ծրագրերի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը, դրանց ընթացքի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալը:

դ) բարեգործության կարգով ստացված ապրանքների հաշվառման ու բաշխման աշխատանքները կազմակերպելը, ՀՀ կառավարության՝ տվյալ ապրանքների տնօրինման մասին որոշմամբ սահմանված լիազորություններին համապատասխան, ինչպես նաև այլ գործառույթներ:

Բարեգործական հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում լուծում է հաշմանդամների հիմնախնդիրների հետ կապված տարաբնույթ հարցեր:

311. Հաշմանդամության ոլորտում ՀՀ պետական լիազոր մարմինը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, որը մշակում է հաշմանդամության ոլորտում պետական քաղաքականությունը, համակարգում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված աշխատանքները և հաշմանդամների իրավունքների իրացման միջազգային կոնվենցիաների պահանջների, նրանց համար հավասար հնարավորությունների ապահովման աշխատանքների իրականացումը: Նախարարության կազմում գործում է նախարարության

աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությունը:

312. Հաշմանդամների կրթության խնդիրներով զբաղվում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, առողջության վերականգնման խնդիրներով՝ ՀՀ առողջապահության նախարարությունը:

Բացի նշված նախարարություններից, հաշմանդամների հիմնախնդիրների լուծմամբ ակտիվորեն զբաղվում են նաև ՀՀ մշակույթի, ՀՀ քաղաքաշինության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը և պետական կառավարման այլ մարմիններ:

313. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վրա դրված են հետևյալ իրավասությունները.

- հաշմանդամության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ հաշմանդամություն ունեցող անձանց համար կոմունալ բնակարանային ծառայությունների, հասարակական նշանակության օբյեկտների, տրանսպորտային միջոցների, տեղեկատվության և կապի միջոցների հասանելիության վերլուծությունը,

- կառավարությանը, պետական տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին հաշմանդամների համար առանց արգելքների միջավայրի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

- հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, պետական բյուջեի միջոցների բաշխումն այդ կազմակերպություններին,

- հաշմանդամության հիմնախնդիրներին վերաբերվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման իրականացումը, այդ ծրագրերի արդյունավետության բացահայտումը:

314. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունն իրականացվում է օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ Տարեկան ծրագրով, որը մշակվում և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացնում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: Տարեկան ծրագիրը ՀՀ կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի նախագծի կազմում:

315. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և ազատությունների իրացման հետ, սահմանվում են օրենքով: Այսպես, տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում համայնքի ղեկավարը <համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական ծառայությունների տրամադրում>:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է նաև հետևյալ կամավոր լիազորությունները.

- նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

- միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

316. Այսօր հաշմանդամների իրավունքների պաշտպանության և ոլորտում պետական քաղաքականության իրականացման համար կարևոր ինստիտուցիոնալ կառույց է հանդիսանում ՀՀ վարչապետի 2008թ. փետրվարի 25-ի թիվ 98-ն որոշմամբ ստեղծված հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը, որի գործունեության նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելն է:

Հանձնաժողովը կոչված է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման գործընթացը համակարգելու, կանոնակարգելու և վերահսկելու, ինչպես նաև պետական և ոչ պետական կազմակերպությունների աշխատանքն ավելի համակարգված դարձնելու:

Հանձնաժողովում ընգրկված են պետական գերատեսչությունների և ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունների հավասար թվով ներկայացուցիչներ:

Հանձնաժողովն աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների և հնարավորության, հասարակական կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովմանը, սոցիալական հիմնախնդիրների լուծմանը, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրները վերլուծությանը և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը 2010թ. մինչ 2012թ. ընկած ժամանակահատվածում անցկացված նիստերում քննարկել է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին վերաբերվող մի շարք հարցեր, այդ թվում ոլորտին վերաբերող բոլոր իրավական ակտերի նախագծերը:

317. ՀՀ-ում կարևորվում է հասարակական կազմակերպությունների կողմից հաշմանդամների իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկողության իրականացումը՝ ոլորտում գործող նորմատիվ-իրավական ակտերի պահանջների կատարման, պետական ծրագրերի արդյունավետ իրականացման նկատմամբ: Հասարակական կազմակերպություններն ակտիվորեն մասնակցում են սոցիալական պաշտպանության ոլորտի իրավական հենքի ձևավորմանը, մասնավորապես՝ նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակմանը, պետական ծրագրերի ձևավորմանը և դրանց իրականացմանը՝ հաշմանդամների հիմնախնդիրների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, մշակման, փոխանցման հարցերում:

318. Այս զեկույցը համաձայնեցվել է հաշմանդամների հիմնախնդիրների հետ առնչվող բոլոր պետական մարմինների, ինչպես նաև հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

319. <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին> ՀՀ օրենքի նախագծով սահմանվում է, որ “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին” ՄԱԿ-ի 2006 թվականի կոնվենցիայի դրույթների իրագործման նկատմամբ մոնիթորինգն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը:

### Աղյուսակ 1. Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը

<b>Հաշմանդամների թվաքանակը</b>									
		Հաշվետու ժամանակաշրջանի սկզբին 01.01.2012թ.				Հաշվետու ժամանակաշրջանի վերջին 01.07.2012թ.			
		ընդամենը	նրանցից՝ կանայք	սյունակ 1- ից քաղաքաբնակ		ընդամեն ը	նրանցից՝ կանայք	սյունակ 1-ից՝ քաղաքաբնակ	
				ընդամեն ը	նրանցից՝ կանայք			ընդամենը	նրանցից՝ կանայք
Ա	Բ	1	2	3	4	5	6	7	8
101	Հաշմանդամների թվաքանակը/անձ/ ընդամենը (103+105+107+109)	178475*	82889	125065	60431	182379	84981	127424	61716
102	այդ թվում անժամկետ	110956	48497	80149	36897	112881	49781	82005	38052
103	101 տողից՝ մինչև 18 տարեկան	8053	2540	5059	1613	8156	2571	5038	1608
104	նրանցից՝ մինչև 18 տարին լրանալը	4015	1385	2444	858	3941	1345	2454	850
105	101 տողից՝ 18-ից մինչև 40 տարեկան	27553	8435	17914	5613	26436	8156	17282	5452
106	նրանցից՝ անժամկետ	19145	5198	12647	3547	18567	5058	12342	3462
107	101 տողից՝ 40-ից մինչև կենսաթոշակային տարիքի	94498	48790	64445	34359	97512	49970	65821	34848
108	նրանցից՝ անժամկետ	44345	20616	30546	14863	44039	20404	30380	14782
109	101 տողից՝ կենսաթոշակային տարիքի և բարձր	48371	23124	37647	18846	50275	24284	39283	19808

- թվով 1969 հաշմանդամի տարբերություն՝ հետին թվով հարակից բազաների հետ համադրման արդյունքում բազայում ճգրտումների, հետին թվով գործերի մուտքագրման հետևանքով:

**Աղյուսակ 2. Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում  
ըստ հաշմանդամության պատճառական կապի**

Հաշմանդամների թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ հաշմանդամության պատճառական կապի 01.07.2012թ.									
Ա	Բ	I խումբ		II խումբ		III խումբ		հաշմանդամ երեխա	
		ընդամենը	նրանցից կանայք	ընդամենը	նրանցից կանայք	ընդամենը	նրանցից կանայք	ընդամենը	նրանցից կանայք
1	2	3	4	5	6	7	8	9	10
301	Ընդհանուր հիվանդություններից	7134	3224	68267	33904	63507	36746	5	2
302	նրանցից՝ քաղաքաբնակ	5319	2496	49772	25512	43709	26091	0	0
303	Մանկուց	2972	1236	10276	4069	7691	2064	8151	2569
304	նրանցից՝ քաղաքաբնակ	2102	871	6660	2699	5129	1467	5116	1631
305	Զինձառայության հետ կապված (307+309+311+313)	736	17	6102	163	3763	137	0	0
306	նրանցից՝ քաղաքաբնակ (308+310+312+ 314)	488	13	3943	135	2377	118	0	0
307	ՀՀ սահմանները պաշտպանելիս	199	8	2161	59	1203	42	0	0
308	նրանցից՝ քաղաքաբնակ	145	5	1437	45	690	34	0	0
309	զինձառայության ընթացքում	219	3	1936	43	1885	91	0	0
310	նրանցից՝ քաղաքաբնակ	160	3	1293	36	1266	81	0	0
311	զինվորական պարտականությունները կատարելիս	92	0	1019	9	655	3	0	0
312	նրանցից՝ քաղաքաբնակ	66	0	597	7	408	2	0	0
313	Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ ստացած հիվանդություն, խեղում, վնասվածք	226	6	986	52	20	1	0	0

314	նրանցից՝ քաղաքաբնակ	117	5	616	47	13	1	0	0
315	Աշխատանքային խեղման	140	23	813	177	1260	205	0	0
316	նրանցից՝ քաղաքաբնակ	94	18	569	129	899	154	0	0
317	Մասնագիտական հիվանդություններից	9	5	170	58	151	31	0	0
318	նրանցից՝ քաղաքաբնակ	8	5	142	49	121	25	0	0
319	Չեոնոբիլի ԱԷԿ-ի վթարի վերացման հետ կապված	12	0	404	6	274	5	0	0
320	նրանցից՝ քաղաքաբնակ	10	0	295	6	214	4	0	0
321	Բնական, տեխնաձին և այլ աղետների, ինչպես նաև դրանց վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդություն, խեղում, վնասվածք	54	37	370	228	118	75	0	0
322	նրանցից՝ քաղաքաբնակ	46	33	314	200	97	60	0	0
323	Ընդամենը (301+303+305+315+317+319+321)	11057	4542	86402	38605	76764	39263	8156	2571
324	նրանցից՝ քաղաքաբնակ	8067	3436	61695	28730	52546	27919	5116	1631



միջոցառումների

**Աղյուսակ 3. Հաշմանդամություն ունեցող անձանց երաշխավորված վերականգնողական**

տեսակները

Հաշմանդամներին երաշխավորված վերականգնողական միջոցառումների տեսակները 01.07.2012թ.										
Ա	ՎԱԾ-երով նախատեսված վերականգնողական միջոցառումների տեսակները		Վերականգնողական միջոցառումների քանակը	Նրանցից կանայք	Սյունակ 1-ից		Սյունակ 1-ից՝ մինչև 18 տարեկան			
					քաղաքաբնակ	նրանցից կանայք	Ընդամենը	նրանցից կանայք	սյունակ 5-ից	
									բաղաճ	նրանցից կանայք
Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	
501		<b>Ընդամենը (502+508+513)</b>	305748	146543	211500	104797	9587	3059	6022	1947
502		<b>Ընդամենը (503+504+505+506+507)</b>	176125	82716	119412	58253	5124	1637	3254	1070
503		Վերականգնողական բուժում	160126	75369	108855	53165	3660	1104	2332	718
504		Վերակառուցողական վիրաբուժություն	3037	1385	1904	915	487	158	301	101
505		Առողջարանային բուժում	6745	3322	4168	2116	215	79	142	48
506		Պրոթեզաօրթոպեդիկ օգնություն	2530	1034	1822	819	323	132	213	98
		այդ թվում՝								
506.1	Բժշկական	Պրոթեզ	680	144	464	109	20	4	11	3
506.2		Օրթեզ	203	67	137	48	143	45	91	29
506.3		Օրթո-պրոթեզ	12	4	10	3	5	3	3	2
506.4		Ռեկլինատոր	3	0	3	0	0	0	0	0
506.5		Կոշիկ	226	70	158	60	19	8	8	5
506.6		Սեղմիրան	167	96	120	80	57	37	36	29
506.7		Աղեկապ /բանդաժ/	43	16	40	14	0	0	0	0
506.8		Ապարատ	3	1	3	1	0	0	0	0
506.9		Այլ	1193	636	887	504	79	35	64	30
507			Վերականգնողական տեխնիկական միջոցներ	3687	1606	2663	1238	439	164	266

		այդ թվում								
507.1		Ձեռնափայտ	400	167	254	113	4	3	1	1
507.2		Հենակ	321	103	229	77	6	3	2	2
507.3		Քայլակ	226	116	198	104	51	20	31	11
507.4		Սայլակ	1277	533	854	385	146	54	80	31
507.5		Սուպինատոր	5	4	4	4	1	1	1	1
507.6		Լսողական սարք	1132	499	901	419	222	80	149	58
507.7		Կրծքագեղձի պրոթեզ	125	125	89	89	0	0	0	0
507.8		Աչքի պրոթեզ	37	18	26	13	1	0	0	0
507.9		Ձայնաստեղծ սարք	106	6	71	6	0	0	0	0
507.1		Այլ	58	35	37	28	8	3	2	1
508		<b>Ընդամենը (509+510+511+512)</b>	44980	22279	31124	15830	420	135	272	84
509	Մասնագիտական	Մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն, վերամասնագիտացում	761	379	731	370	4	2	4	2
510		Մասնագիտական ուսուցում ԲՈՒՀ-ում	568	197	410	143	33	7	20	4
511		Մասնագիտական ուսուցում միջին մասնագիտական հաստատությունում	151	55	116	41	55	19	37	11
512		Եզրակացություն աշխատանքի պայմանների և բնույթի վերաբերյալ /աշխատանքային երաշխավորագիր/	789	398	488	269	0	0	0	0
		այլ միջոցներ	42711	21250	29379	15007	328	107	211	67
513	Սոցիալական	<b>Ընդամենը (514+515)</b>	84643	41548	60964	30714	4043	1287	2496	793
514		Սոցիալ-կենցաղային հարմարեցում	16	8	5	2	6	2	1	0
515		Սոցիալ-միջավայրային հարմարեցում	84627	41540	60959	30712	4037	1285	2495	793
		այդ թվում								
515.1		Իսնամք	2687	1082	1860	788	829	284	446	163
515.2	Տնային սպասարկում	892	373	633	282	121	38	67	23	

515.3	Սպասարկում տուն-ինտերնատում	415	188	178	90	119	47	37	16
515.4	Սոցիալ-հոգեբանական վերականգնում	78814	39012	56576	28726	2897	862	1892	569
515.5	Սոցիալ-իրավական խորհրդատվություն	1495	723	1492	723	3	0	2	0
515.6	Բրայլի համակարգով ուսուցում	1	0	1	0	0	0	0	0
515.7	Սուրդոթարգմանությամբ ուսուցում	9	7	8	6	9	7	8	6
	Սոցիալ-վերականգնման այլ ձևեր	314	155	211	97	59	47	43	16